ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

2 0 1 8

Հատոր 4

ԵՐԵՎԱՆ 2019

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նոր կազմը (բացառությամբ՝ «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հանձնաժողովի անդամ նշանակվելու երեք տարին լրացած չլինելու դեպքերի) ձևավորվել է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2018 թվականի օգոստոսի 18-ի թիվ 113-Ա հրամանով:

Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի որոշումով և այլ իրավական ակտերով:

Հանձնաժողովի խնդիրներն են՝ նպաստել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողին ներկայացվող բարոյական բարձր չափանիշների ձևավորմանը, ծառայողական կարգապահության ամրապնդմանը, կարգապահական խախտումների կանխարգելմանը և այդպիսիք ծնող պատճառների վերացմանը, ապահովել Կոմիտեի ծառայողի անկախությունը և իրավունքների պաշտպանությունը, կանխել Կոմիտեի ծառայողին անհիմն կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը:

Հանձնաժողովը քննարկում է կարգապահական վարույթ հարուցելու մասին միջնորդությունները, տալիս է եզրակացություններ, ընդունում է ընթացակարգային և ըստ էության որոշումներ:

Ժողովածուի հետ աշխատանքը հեշտացնելու նպատակով որոշումները ներկայացվում են առարկայական դասակարգմամբ, համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 27.03.2015թ. արձանագրային որոշմամբ հաստատված «Քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով «օրենքի կոպիտ խախտում» հասկացության գնահատման ուղենիշների վերաբերյալ ուղեցույցի, ինչպես նաև մեկնաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 28-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 12.03.2015թ. թիվ 11-Ա, 08.12.2015թ. թիվ 134-Ա հրամանների և «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն թույլ տրված իրավախախտումները:

Սույն ժողովածուն հանդիսանում է նախորդ տարիներին տպագրված ժողովածուների շարունակությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մարդու իրավունքների և դատավարական երաշխիքների խախտումների վերաբերյալ որոշումներ

I. Մեկնաբանվող իրավախախտում - Ուղեցույցի 3-րդ կետի 1-ին ենթակետ՝ *մարդու սահմնադրական իրավունքի կամ ազատության խախտումը կամ դրա ոչ իրավաչափ սահմնափակումը..*

1. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ քննիչ Ա.Գ-ի վերաբերյալ 17.10.2018թ. ԿՀՈ 30 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……107

II. Մեկնաբանվող իրավախախտում - Ուղեցույցի 3-րդ կետի 2-րդ ենթակետ՝ *ՀՀ քրեական դատավարության սկզբունքների և դրանց հետ համակարգային կապերի մեջ գտնվող դատավարական նորմերի խախտումը կամ մարդու իրավունքներին առնչվող դատավարական այլ նորմերի խախտումը.*

1. ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Կ-ի վերաբերյալ 26.01.2018թ. թիվ ԿՀՈ 2 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……20

2. ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Գ.Մ-ի վերաբերյալ 06.02.2018թ. ԿՀՈ 5 որոշում (կարգապահական խախտման փաստի բացակայության մասին) ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)***……28

3. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական

բաժնի քննիչ Զ.Դ-ի վերաբերյալ 13.03..2018թ. թիվ 9 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……41

4. ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի քննիչ Ն.Խ-ի վերաբերյալ 20.03.2018թ. թիվ 10 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……45

5. քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Գ.Ս-ի վերաբերյալ 20.03.2018թ. թիվ 11 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……48

6. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Օ-ի վերաբերյալ 19.09.2018թ. ԿՀՈ 23 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը)***……84

7. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Օ-ի վերաբերյալ 07.11.2018թ. ԿՀՈ 34 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……128

8. ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Ս-ի վերաբերյալ 28.11.2018թ. ԿՀՈ 37 որոշում***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……163

III. Մեկնաբանվող իրավախախտում - Ուղեցույցի 3-րդ կետի 4-րդ ենթակետ՝ *անձին* օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության դեպքում անձին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չտալը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Զ.Դ-ի վերաբերյալ 13.03..2018թ. թիվ 9 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……41

2. ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի պետ Կ.Խ-ի, քննիչներ Գ.Գ-ի, Ն.Մ-ի և Ա.Կ-ի վերաբերյալ 31.10.2018թ. ԿՀՈ 33 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……119

3. ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնի պետ Կ.Փ-ի, պետի տեղակալ Ռ.Մ-ի, քննիչներ Ա.Մ-ի, Ն.Մ-ի և Ա.Ի-ի վերաբերյալ 28.11.2018թ. ԿՀՈ 36 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……148

2. Մինչդատական վարույթի արդյունավետությունը և բնականոն ընթացքը խաթարող խախտումների վերաբերյալ որոշումներ

I. Մեկնաբանվող իրավախախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 1-ին ենթակետ՝ *առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակով անգործություն դրսևորելը, այն է՝ անհրաժեշտ դատավարական գործողություններ չկատարելը՝ անկախ դրա հետևանքից:*

1. ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Կ-ի վերաբերյալ 26.01.2018թ. թիվ ԿՀՈ 2 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……20

2. ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մ.Հ-ի վերբերյալ 26.01.2018թ. ԿՀՈ 3 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)***……23

3. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երկրորդ կայազորային քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ի և նույն քննչական բաժնի պետի տեղակալ Դ.Ն-ի վերաբերյալ 14.04.2018թ. ԿՀՈ 14 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……56

4. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Բ-ի, ավագ քննիչներ Հ.Մ-ի և Գ.Ա-ի վերաբերյալ 05.09.2018թ. ԿՀՈ 15 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……60

5. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչներ Ա.Ս-ի և Գ.Ս-ի վերաբերյալ 05.09.2018թ. ԿՀՈ 17 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)***……66

6. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության առաջին կայազորային քննչական բաժնի քննիչ Ա.Խ-ի վերաբերյալ 12.09.2018թ. ԿՀՈ 18 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……70

7. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Խ.Ն-ի վերաբերյալ 19.09.2018թ. ԿՀՈ 21 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը)***……80

8. ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության պետ Մ.Շ-ի և ՀԿԳ քննիչ Հ.Ն-ի վերաբերյալ 26.09.2018թ. ԿՀՈ 26 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……91

9. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Կ.Թ-ի, քննիչներ Ա.Ս-ի և Ն.Ա-ի վերաբերյալ 26.09.2018թ. ԿՀՈ 27 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը)***……95

II. Մեկնաբանվող իրավախախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 2-րդ ենթակետ՝ *քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չկատարելը կամ ժամանակին չկատարելը, որը հանգեցրել կամ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի.*

1. ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մ-ի և նույն վարչության պետի տեղակալ Ս.Մ-ի վերաբերյալ 13.02.2018թ. թիվ 7 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)***……34

2. ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի քննիչ Ն.Խ-ի վերաբերյալ 20.03.2018թ. թիվ 10 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի բացակայությունը)***……45

3. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ն-ի վերաբերյալ 14.04.2018թ. ԿՀՈ 12 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……51

4. ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության (գործուղված՝ Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժին) ավագ քննիչ Ս.Կ-ի վերաբերյակ 19.09.2019թ. ԿՀՈ 19 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……75

5. ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Ս-ի վերաբերյալ 26.09.2018թ. ԿՀՈ 25 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը)***……89

6. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Գ.Ս-ի վերաբերյալ 26.09.2018թ. ԿՀՈ 28 որոշում (կարգապահական խախտման փաստի բացակայության մասին) ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)***……100

7. ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության պետ Թ.Ջ-ի և ՀԿԳ ավագ քննիչ Գ.Մ-ի վերաբերյալ 17.10.2018թ. ԿՀՈ 31 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը)***……110

8. ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի պետ Կ.Խ-ի, քննիչներ Գ.Գ-ի, Ն.Մ-ի և Ա.Կ-ի վերաբերյալ 31.10.2018թ. ԿՀՈ 33 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……119

9. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Օ-ի վերաբերյալ 07.11.2018թ. ԿՀՈ 34 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……128

10. ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնի պետ Կ.Փ-ի, պետի տեղակալ Ռ.Մ-ի, քննիչներ Ա.Մ-ի, Ն.Մ-ի և Ա.Ի-ի վերաբերյալ 28.11.2018թ. ԿՀՈ 36

որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……148

11. ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Ս-ի վերաբերյալ 28.11.2018թ. ԿՀՈ 37 որոշում***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……164

12. ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնի քննիչ Է.Կ-ի վերաբերյալ 28.11.2018թ. ԿՀՈ 39 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը, ինչպես նաև մեկ այլ դրվագով բացակայության մասին)***……170

III. Մեկնաբանվող իրավախախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 3-րդ ենթակետ՝ *մինչև նախաքննությունն ավարտելը քրեական գործում առկա նյութերը օրենքով սահմանված դատավարական կարգի պահպանմամբ չհետազոտելը կամ փաստացի հետազոտման արդյունքները չարձանագրելը.*

1. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երկրորդ կայազորային քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ի և նույն քննչական բաժնի պետի տեղակալ Դ.Ն-ի վերաբերյալ 14.04.2018թ. ԿՀՈ 14 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի բացակայությունը)***……56

IV. Մեկնաբանվող իրավախախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 4-րդ ենթակետ՝ *նախաքննությունն ավարտելու (մեղադրական եզրակացություն, բժշկական բնույթի միջոցների կիրառման համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին (մեղադրական ակտ) կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում) կամ քրեական հետապնդումը դադարեցնելու (չիրականացնելու) վերաբերյալ դատավարական փաստաթղթերի ձևին և բովանդակությանը ներկայացվող օրենքի պահանջների խախտումը, որը հանգեցրել կամ կարող էր հանգեցնել մարդու իրավունքների խախտման.*

1. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Ս-ի վերաբերյալ 19.09.2018թ. ԿՀՈ 22 որոշում որոշում (կարգապահական խախտման փաստի բացակայության մասին) ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)***……82

V. Մեկնաբանվող իրավախախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 5-րդ ենթակետ՝ *դատախազի կամ քննչական բաժնի պետի ցուցումները չկատարելը, որը հանգեցրել է կամ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի.*

1. ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մ-ի և նույն վարչության պետի տեղակալ Ս.Մ-ի վերաբերյալ 13.02.2018թ. թիվ 7 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……34

2. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Կ.Թ-ի, քննիչներ Ա.Ս-ի և Ն.Ա-ի վերաբերյալ 26.09.2018թ. ԿՀՈ 27 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)***……95

3. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության պետի տեղակալ Ս.Հ-ի և նույն վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի պետ Ա.Մ-ի վերաբերյալ 14.11.2018թ. ԿՀՈ 35 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)***……144

VI. Մեկնաբանվող իրավախախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 7-րդ ենթակետ՝ *օրենքով նախատեսված դատավարական ժամկետները խախտելը.*

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական

բաժնի քննիչ Զ.Դ-ի վերաբերյալ 1303..2018թ. թիվ 9 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……41

2. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երկրորդ կայազորային քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ի և նույն քննչական բաժնի պետի տեղակալ Դ.Ն-ի վերաբերյալ 14.04.2018թ. ԿՀՈ 14 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……56

3. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության առաջին կայազորային քննչական բաժնի քննիչ Ա.Խ-ի վերաբերյալ 12.09.2018թ. ԿՀՈ 18 որոշում ***Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)***……70

4. ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության (գործուղված՝ Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժին) ավագ քննիչ Ս.Կ-ի վերաբերյակ 19.09.2019թ. ԿՀՈ 19 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……75

5. ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մ.Մ-ի վերաբերյալ 19.09.2018թ. ԿՀՈ 20 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……77

6. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Օ-ի վերաբերյալ 07.11.2018թ. ԿՀՈ 34 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……128

7. ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Ս-ի վերաբերյալ 28.11.2018թ. ԿՀՈ 37 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……164

8. ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ս.Դ-ի վերաբերյալ 28.11.2018թ. ԿՀՈ 38 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……168

3. Այլ իրավախախտումների վերաբերյալ որոշումներ

I. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդված՝ *քննչական բաժնի պետի լիազորությունները.*

1. ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մ-ի և նույն վարչության պետի տեղակալ Ս.Մ-ի վերաբերյալ 13.02.2018թ. թիվ 7 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի բացակայությունը)***……34

2. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Ս.Ս-ի և նույն քննչական բաժնի քննիչ Է.Ղ-ի վերաբերյալ 14.04.2018թ. ԿՀՈ 13 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)***……53

3. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Բ-ի, ավագ քննիչներ Հ.Մ-ի և Գ.Ա-ի վերաբերյալ 05.09.2018թ. ԿՀՈ 15 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)***……60

4. ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Գ.Ա-ի վերաբերյալ 26.09.2018թ. ԿՀՈ 24 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)***……87

5. ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության պետ Մ.Շ-ի և ՀԿԳ քննիչ Հ.Ն-ի վերաբերյալ 26.09.2018թ. ԿՀՈ

26 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը)***……91

6. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Կ.Թ-ի, քննիչներ Ա.Ս-ի և Ն.Ա-ի վերաբերյալ 26.09.2018թ. ԿՀՈ 27 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը)***……95

7. ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության պետ Թ.Ջ-ի և ՀԿԳ ավագ քննիչ Գ.Մ-ի վերաբերյալ 17.10.2018թ. ԿՀՈ 31 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)***……110

8. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության պետ Գ.Ս-ի վերաբերյալ 22.10.2018թ. ԿՀՈ 32 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը)***……113

9. ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի պետ Կ.Խ-ի, քննիչներ Գ.Գ-ի, Ն.Մ-ի և Ա.Կ-ի վերաբերյալ 31.10.2018թ. ԿՀՈ 33 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը)***……119

10. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության պետի տեղակալ Ս.Հ-ի և նույն վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի պետ Ա.Մ-ի վերաբերյալ 14.11.2018թ. ԿՀՈ 35 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)***……144

11. ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնի պետ Կ.Փ-ի, պետի տեղակալ Ռ.Մ-ի, քննիչներ Ա.Մ-ի, Ն.Մ-ի և Ա.Ի-ի վերաբերյալ 28.11.2018թ. ԿՀՈ 36 որոշում***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը)***……148

II. Մեկնաբանվող իրավադրույթ - «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 28-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետ՝ *հանրային ծառայողի էթիկայի կանոնները.*

1. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Օ-ի վերաբերյալ 07.11.2018թ. ԿՀՈ 34 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……128

III. Մեկնաբանվող իրավախախտում՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 12.03.2015թ. թիվ 11-Ա հրաման՝ *քննության պլանավորման և միասնականության վերաբերյալ ուղեցույց.*

1. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Գ.Ղ-ի վերաբերյալ 26.01.2018թ. ԿՀՈ 1 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……17

2. ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Է.Ա-ի վերաբերյալ 13.02.2018թ. թիվ 6 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……31

3. ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Խ-ի վերաբերյալ 13.02.2018թ. թիվ 8 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……38

4. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Ս.Ս-ի և նույն քննչական բաժնի քննիչ Է.Ղ-ի վերաբերյալ 14.04.2018թ. ԿՀՈ 13 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)***……53

5. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երկրորդ կայազորային քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ի և նույն քննչական բաժնի պետի տեղակալ Դ.Ն-ի վերաբերյալ 14.04.2018թ. ԿՀՈ 14 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……56

6. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երկրորդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ռ.Գ-ի վերաբերյալ 05.09.2018թ. ԿՀՈ 16 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……64

7. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի պետ Գ.Հ-ի վերաբերյալ 17.10.2018թ. ԿՀՈ 29 որոշում ***Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……104

8. ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնի պետ Կ.Փ-ի, պետի տեղակալ Ռ.Մ-ի, քննիչներ Ա.Մ-ի, Ն.Մ-ի և Ա.Ի-ի վերաբերյալ 28.11.2018թ. ԿՀՈ 36 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……148

IV. Մեկնաբանվող իրավախախտում՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 08.12.2015թ. թիվ 134-Ա հրաման՝ *քրեական գործերի թվայնացումը.*

1. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչներ Ա.Ս-ի և Գ.Ս-ի վերաբերյալ 05.09.2018թ. ԿՀՈ 17 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)***……66

2. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության պետ Գ.Ս-ի վերաբերյալ 22.10.2018թ. ԿՀՈ 32 որոշում ***(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)***……113

V. Մեկնաբանվող իրավադրույթ՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի.

1. Ունկնդիր Ա.Մ-ի վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու մասին 12.09.2018թ. որոշում ***(Հանձնաժողովը դիմել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահին Ա.Մ-ին քննիչների թեկնածությունների ցուցակից հանելու միջնորդությամբ)*** ……183

2. Ունկնդիր Ա.Հ-ի վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու մասին 12.09.2018թ. որոշում ***(Հանձնաժողովը դիմել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահին Ա.Հ-ին քննիչների թեկնածությունների ցուցակից հանելու միջնորդությամբ)*** ……*185*

3. Ունկնդիր Ե.Կ-ի վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու մասին 12.09.2018թ. որոշում ***(Հանձնաժողովը դիմել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահին Ե.Կ-ին քննիչների թեկնածությունների ցուցակից հանելու միջնորդությամբ)***……*187*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Գ.Ղ-ի վերաբերյալ

26 հունվարի 2018
ք.Երևան ԿՀՈ 1

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության վարչության քննիչ Գ.Ղ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Արարատի մարզի դատախազի տեղակալ Հ.Նիկողոսյանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Գ.Ղ-ի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով քննված թիվ 27169217 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Գ.Ղ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

18.11.2017թ. քրեական գործով միջնորդություն է ներկայացրել նախաքննության ժամկետը երկարացնելու մասին, որից հետո՝ 20.11.2017թ. Արարատի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Ա.Ստեփանյանը ստորագրել է մարզի դատախազին հասցեագրված ուղեկցական գրությունը և նույն օրով այն ելքագրվել է քննչական վարչության գործավարությունում: Այնուհետև՝ Գ.Ղ-ն միջնորդությունը պահելով իր մոտ՝ մոռացել է այն ներկայացնել դատախազություն և միայն նախաքննության ժամկետը լրանալու վերջին օրը՝ 23.11.2017թ. անձամբ ներկայացրել է դատախազություն:

Արդյունքում չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև «Նախաքննության

ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի՝ 8-րդ կետի՝ պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Գ.Ղ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի պահանջները խախտելու հանգամանքները՝ պատճառաբանելով որ դա պայմանավորված է եղել մոռացության և ծանրաբեռնվածության հետևանքով:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի պահանջները, որպիսի պայմաններում վերջինիս արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդությունը քրեադատավարական օրենքով սահմանված ժամկետներում դատախազություն չներկայացնելու, ինչպես նաև ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի պահանջները խախտելու դրվագով Գ.Ղ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Կ-ի վերաբերյալ

26 հունվարի 2018
ք.Երևան ԿՀՈ 2

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի ավագ քննիչ Ա. Կ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Արմավիրի մարզի դատախազի տեղակալ Ս.Մարտիրոսյանի՝ 08.12.2017թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ ՔԿ Արմավիրի ՄՔՎ Վաղարշապատի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Կ-ի վարույթում քննված՝ թիվ 57166117 քրեական գործով նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ա.Կ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված N 57166117 քրեական գործով տուժող Ա. Վեզիրյանին 1 ամիս 14 օր լրացուցիչ չի հարցաքննել, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի կարգով վերջինիս հարցաքննության կանչելու մասին ծանուցագիր չի ուղարկել, որպիսի պայմաններում տուժողը 29.08.2017թ. «Բագրատաշեն» անցակետով

մեկնել է ՀՀ-ից: Փաստորեն տևական ժամանակ տուժողին դեպքի հանգամանքների շուրջ չի հարցաքննել, վերջինս լքել է ՀՀ տարածքը և մինչ օրս հանցագործության բացահայտման համար էական նշանակություն ունեցող մի շարք կարևոր հանգամանքներ չեն պարզվել:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ա.Կ-ն կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ծանրաբեռնված լինելով վարույթում քննվող այլ քրեական գործերի նախաքննությամբ ի վիճակի չի եղել հիշյալ քրեական գործով կատարել պատշաճ նախաքննություն:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Կ-ի գործողություններում առերևույթ առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ առանց իրավաչափ նպատակի, ակնհայտ հիմքերի առկայության պայմաններում քննիչը միջոցներ չի ձեռնարկել տուժողին լրացուցիչ հարցաքննելու ուղղությամբ, ինչը հանգեցրել է ապացույցների կորստի:

Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ քննիչ Ա.Կ-ի արարքներում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները, տուժող Ա.Վեզիրյանին չի ծանոթացրել 14.07.2017թ. նշանակված դատաքիմիական, դատակենսաբանական, դատահետքաբանական և մանրաթելային համալիր փորձաքննություն նշանակելու մասին որոշումներին, չի պարզաբանել վերջինիս իրավունքները և այդ մասին արձանագրություն չի կազմել:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ա.Կ-ն կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ տուժողը լինելով հետվիրահատական ցավերի մեջ հրաժարվել է ծանոթանալ համալիր փորձաքննություն նշանակելու որոշմանը, սակայն այդ մասին համապատասխան արձանագրություն չի կազմել:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Կ-ի գործողություններում առերևույթ առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով որ քննիչը տուժողին փաստացի չի ծանոթացրել փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը, որի արդյունքում անձը զրկվել է փորձագետին նոր հարցեր ներկայացնելու դատավարական իրավունքից:

Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ քննիչ Ա.Կ-ի արարքներում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործով հրատապություն պահանջող քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում տուժողին 1 ամիս 14 օր լրացուցիչ հարցաքննելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու դրվագով քննիչ Ա.Կ-ի արարքներում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

2. Տուժողին փորձաքննություն նշանակելու մասին որոշումը փաստացի չծանոթացնելու և իրավունքները չպարզաբանելու դրվագով քննիչ Ա.Կ-ի արարքներում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության
ավագ քննիչ Մ.Հ-ի վերաբերյալ
(կարգապահական խախտման փաստի բացակայության մասին)

26 հունվարի 2018
ք.Երևան ԿՀՈ 3

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մ.Հ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Լոռու մարզի դատախազության դատախազ Տ.Քոթանջյանի 01.12.2017թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Լոռու ՄՔՎ ավագ քննիչ Մ.Հ-ի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով քննված թիվ 19162317 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Մ.Հ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Քննիչը մեղադրյալ Վ.Քոչինյանի հարցաքննությունն իրականացրել է ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 212-րդ հոդվածով սահմանված պահանջների, և նույն օրենսգրքի 65-րդ հոդվածով սահմանված մեղադրյալի իրավունքները և պարտականությունները բացատրելու, այլ իրականացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205[1], 206, 209 և 210-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ՝ մեղադրյալին բացատրելով իրեն հայտնի ամեն ինչ պատմելու պարտականության, ինչպես նաև ցուցմունքներ

տալուց հրաժարվելու կամ խուսափելու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Մ.Հ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, տուժողի և մեղադրյալի լրացուցիչ հարցաքննության արձանագրության ձևաթղթերի նմանության պատճառով շփոթելով դրանք՝ մեղադրյալին լրացուցիչ հարցաքննել է տուժողի հարցաքննության համար նախատեսված արձանագրության ձևաթղթով, սակայն նրան հարցաքննել է իրեն իսկ մարմնական վնասվածք հասցնելու և դատարանում քննվող քաղաքացիական գործի վերաբերյալ, իսկ մեղադրանքի շուրջ որևէ հարցադրում չի կատարել:

Կարգապահական հանձնաժողովը ուսումնասիրելով մեղադրյալին տուժողի հարցաքննության համար նախատեսված հարցաքննության արձանագրությունը պարզեց, որ Մ.Հ-ի արարքում բացակայում է օրենքի կոպիտ խախտման փաստը, քանի որ քննիչը, թեև մեղադրյալին հարցաքննել է տուժողի հարցաքննության սահմանված կանոններով, սակայն հարցաքննության առարկան կազմել է նրան մարմնական վնասվածք հասցնելու, ֆիզիկական ցավ պատճառելու և դատարանում քննվող քաղաքացիական գործի հետ կապված հարցերը, իսկ մեղադրանքի շուրջ որևէ հարցադրում չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մեղադրյալին տուժողի հարցաքննության համար նախատեսված կանոններով հարցաքննելու դրվագով Մ.Հ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 3, դեմ՝ 2):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի քննիչ Վ.Ա-ի վերաբերյալ

06 փետրվարի 2018
ք.Երևան ԿՀՈ 4

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի քննիչ Վ.Ա-ի (գործուղված Լոռու մարզային քննչական վարչություն) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչության պետի զեկուցագրի առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ քննիչ Վ.Ա-ն կնոջ՝ Լ.Այվազյանի անձնագրում կեղծ նշում է կատարել այն մասին, որ կինը իբր հաշվառված է Երևան քաղաքի Վարդանանց փողոցի 148-րդ շենքի 13-րդ բնակարանում: Նշված հանգամանքը հիմնավորվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննված թիվ 19102717 քրեական գործով նախաքննության ընթացքում:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Վ.Ա-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննված թիվ 19102717 քրեական գործի նախաքննության ընթացքում հիմնավորվել է, որ կնոջ Լ.Այվազյանի անձնագրում Վ.Ա-Ն կեղծ նշում է կատարել այն մասին, որ կինը իբր հաշվառված է Երևան քաղաքի Վարդանանց փողոցի 148-րդ շենքի 13-րդ բնակարանում: Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալները վկայել են այն մասին, որ Վ.Ա-ն կնոջ անձնագրում կեղծ գրառումները կատարել է ոչ թե նշված փաստաթուղթն անձամբ կամ կնոջ կողմից օգտագործելու նպատակով, այլ ընդամենը կնոջ հետ իր հարաբերությունները կարգավորելու, նրա մոտ վստահություն ձեռք բերելու համար, առ այն, թե իբր շուտով միասին բնակվելու են Երևան

քաղաքում գնած իր բնակարանում, որպիսի պայմաններում վերջինիս արարքներում բացակայել է ՀՀ քրեական օրենսգրքի 324-325-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերը:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Վ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հերքեց կնոջ Լ.Այվազյանի անձնագրում կեղծ նշում կատարելու հանգամանքը, պատճառաբանելով, որ ինքը տեղյակ չէ դրանից, ավելին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործի նախաքննության ընթացքում, ծանոթանալով փորձագետի եզրակացությանը հայտարարել է, որ համաձայն չէ, միջնորդություններ չունի, այդպիսիք ունենալու դեպքում կներկայացնի հետագայում: Իսկ հետագայում՝ իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

ՈՒսումնասիրելով նյութերը և հիմք ընդունելով, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննված քրեական գործով հիմնավորվել է քննիչի կողմից կնոջ՝ Լ.Այվազյանի անձնագրում կեղծ նշումներ կատարելու հանգամանքը, Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչն իր պարտականությունները կատարել է ոչ պատշաճ, անտեսելով՝ «Հանրային ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի պահանջները: Արդյունքում խախտվել է «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, որպիսի պայմաններում քննիչի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու, «Հանրային ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի պահանջները անտեսելու դրվագով Վ.Ա-ի

արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության
ավագ քննիչ Գ.Մ-ի
(կարգապահական խախտման փաստի բացակայության մասին)

06 փետրվարի 2018 ԿՀՈ 5
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Գ.Մ-ի (գործուղված Սպիտակի քննչական բաժին) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Լոռու մարզի դատախազի տեղակալ Ա.Պողոսյանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Գ.Մ-ն, ընդգրկված լինելով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 հատկանիշներով հարուցված թիվ 52101517 քրեական գործով քննչական խմբի մեջ, նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Գ.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Քրեական գործով 24.10.2017թ. որոշում է կայացրել դատամատնադրոշմային փորձաքննություն նշանակելու մասին, սակայն անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 253-րդ, 255-րդ և 256-րդ հոդվածների պահանջները՝ որոշում չի կայացրել նմուշ ստանալու մասին, նմուշ հանձնող անձանց չեն հայտնվել որոշման մասին, վերջիններիս չեն պարզաբանվել իրենց իրավունքները և չի կազմվել նմուշներ ստանալու մասին արձանագրություն:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Գ.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ 23.10.2017թ. ՀՀ ոստիկանության Սպիտակի բաժնի աշխատակիցները գողության կասկածանքով ոստիկանության բաժին են բերման ենթարկել Կ.Սարիբեկյանին, Ա.Սարգսյանին և Գ.Էմինյանին, որոնցից վերցվել են մատնադրոշմները՝ դակտոքարտերի վրա և կազմած արձանագրությունների հետ ուղարկել Սպիտակի քննչական բաժին: Այնուհետև՝ 24.10.2017թ. որոշում է կայացրել դատամատնադրոշմային փորձաքննություն նշանակելու մասին և որոշումը հիշյալ անձանց դակտոքարտերի հետ ուղարկել է ոստիկանության Լոռու մարզային վարչություն: Նկատի ունենալով, որ տվյալ դեպքում հետաքննության մարմնի աշխատակիցները ղեկավարվել են ՀՀ ոստիկանության պետի 20.06.2014թ. թիվ 2121-Ա հրամանի պահանջներով, համաձայն որի՝ «հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձի /բերման ենթարկված/ հետ պարզաբանում անցկացնելուց հետո հերթափոխի ավագը պարտավոր է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կազմակերպել անձնական խուզարկության կատարումը և վերցնել անձի հագուստի մեջ, իրերում կամ մարմնի վրա գտնվող առարկաները և փաստաթղթերը, այդ մասին կազմելով համապատասխան արձանագրություն, ինչպես նաև կազմակերպել բերման ենթարկվածի լուսանկարումը և մատնադրոշմումը, ուստի նման պայմաններում բացակայել է դարձյալ նշված անձանցից նմուշներ ստանալու և արձանագրություն կազմելու անհրաժեշտությունը:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչի արարքներում բացակայում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 253-րդ, 255-րդ և 256-րդ հոդվածների պահանջները՝ նկատի ունենալով, որ հետաքննության մարմինը ձեռնարկված օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում գողության կասկածանքով ոստիկանության բաժին բերման ենթարկված անձանց մատնադրոշմները ձեռք է բերել «ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունում մատնադրոշմային քարտադարանի կազմակերպման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի թիվ 332-Ն որոշմամբ սահմանված ձևանմուշով և դրանք ներկայացրել վարույթն իրականացնող մարմնին, որպիսի պայմաններում քննիչի արարքում բացակայում է իրավախատման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով,

«ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նմուշներ ստանալու մասին որոշում չկայացնելու, արձանագրություն չկազմելու դրվագով Գ.Մ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը: (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2 . Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Է.Ա-ի վերաբերյալ

13 փետրվարի 2018 ԿՀՈ 6

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Է.Ա-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Շիրակի մարզի դատախազի տեղակալ Ա.Նահապետյանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Է.Ա-ի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով քննվող թիվ 68201217 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ՀԿԳ ավագ քննիչ Է.Ա-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

12.12.2017թ. քրեական գործով միջնորդություն է ներկայացրել նախաքննության ժամկետը երկարացնելու մասին, նույն օրը քրեական գործը Շիրակի մարզային քննչական վարչության պետի գրությամբ՝ ուղղված Շիրակի մարզի դատախազին ելքագրել է քննչական վարչության քրեական գործերի գրանցման գրքում և պահել է իր մոտ՝ անձամբ դատախազություն ներկայացնելու նպատակով: Սակայն քրեական գործը դատախազություն ներկայացվել է միայն նախաքննության ժամկետը լրանալուց մեկ օր առաջ՝ 2017թ. դեկտեմբերի 15-ին: Արդյունքում քննիչի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին

միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի՝ 8-րդ կետի՝ պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Էդ.Ալեքսանյանը Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի պահանջները խախտելու հանգամանքները՝ պատճառաբանելով որ դա պայմանավորված է եղել մոռացության և տարեվերջյան ծանրաբեռնվածության հետևանքով:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի պահանջները, որպիսի պայմաններում վերջինիս արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդությունը քրեադատավարական օրենքով սահմանված ժամկետներում դատախազություն չներկայացնելու, ինչպես նաև ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի պահանջները խախտելու դրվագով Է.Ա-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մ-ի և նույն վարչության պետի տեղակալ Ս.Մ-ի վերաբերյալ

13 փետրվարի 2018 ԿՀՈ 7

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մ-ի և նույն վարչության պետի տեղակալ Ս.Մ-ի նկատմամբ հարուց-ված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետա-զոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Շիրակի մարզի դատախազի տեղակալ Ա.Նահապետյանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մ-ի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, 133-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 182-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով քննված թիվ 18106217 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Իր հերթին, ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մ-ի անմիջական ղեկավար, Շիրակի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Ս.Մ-ն չի հետևել ենթակա քննիչի կողմից դատախազի տրված ցուցումները կատարելուն:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1.Քրեական գործը՝ 2017թ. սեպտեմբերի 11-ին վարույթ ընդունելուց հետո մինչև 2017թ. նոյեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում՝ ՀՀ քննչական կոմիտեի միջոցով միջազգային իրավական օգնություն ստանալու վերաբերյալ համապատասխան

հարցում չի ուղարկել Չեխիայի Հանրապետության իրավապահ մարմիններին՝ մեղադրյալ Ա.Գրիգորյանի հակընդդեմ հարցման իրավունքն ապահովելու ուղղությամբ:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ա.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ վերը հիշատակված հարցումն քրեական գործի վերջնական ելքը որոշելու տեսանկյունից ունեցել է էական նշանակություն, սակայն պայմանավորված ծանրաբեռնվածությամբ չի հասցրել հարցումն ուղարկել:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մ-ի կողմից նշված քրեական գործի հանգամանքների շրջանակներում՝ ՀՀ քննչական կոմիտեի միջոցով միջազգային իրավական օգնություն ստանալու վերաբերյալ Չեխիայի Հանրապետության իրավապահ մարմիններին՝ համապատասխան հարցում չուղարկելը կոպիտ խախտում է, թե՝ ոչ: Կարգապահական հանձնաժողովի քվեարկությամբ ձայները կիսվեցին, որպիսի պայմաններում ըստ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 73-րդ կետի՝ հանձնաժողովի անդամների ձայները կիսվելու դեպքում ընդունված է համարվում ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի համար առավել բարենպաստ որոշումը, ուստի Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով բացակայում է իրավախախտման փաստը:

2. Առանց իրավաչափ նպատակի՝ տևական ժամանակ՝ 1 ամիս դրսևորել է անգործություն և չի կատարել հսկող դատախազի գրավոր ցուցումը՝ ՀՀ քննչական կոմիտեի միջոցով միջազգային իրավական օգնություն ստանալու վերաբերյալ համապատասխան հարցում չի ուղարկել Չեխիայի Հանրապետության իրավապահ մարմիններին՝ տուժողին և ականատես վկաներին ծանուցելու և ՀՀ հարցաքննության հրավիրելու վերաբերյալ՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ա.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց տևական ժամանակով հսկող դատախազի ցուցումի պահանջները չկատարելու հանգամանքը, պատճառաբանելով, որ դա կապված է եղել իր աշխատանքային ծանրաբեռնվածության հետ: Վերջինս հայտնեց նաև, որ ստանալով ցուցումը այն քննարկել է անմիջական ղեկավար, նույն վարչության պետի տեղակալ Ս.Մ-ի հետ, ով ևս հանձնարարել է սեղմ

ժամկետում կատարել ցուցումի պահանջները, սակայն այդ կապակցությամբ որևէ գործողություն չի ձեռնարկել:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը հսկող դատախազի ցուցումը ստանալու պահից, տևական ժամանակ՝ 1 ամսից ավել, առանց իրավաչափ նպատակի դրսևորել է անգործություն, որպիսի պայմաններում քննիչի արարքում առերևույթ առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Իր հերթին, ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Ս.Մ-ն անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով իրեն վերապահված լիազորությունները՝ չի հետևել ենթակա քննիչի կողմից դատախազի ցուցումները կատարելուն:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ հսկող դատախազի գրավոր ցուցումը քննիչը քննարկել է իր հետ և նրան հանձնարարել է սեղմ ժամկետում կատարել ցուցումի պահանջները, ինչը չի կատարվել: Ս.Մ-ն հայտնեց նաև, որ քննարկվող ժամանակահատվածում կատարել է նաև քննչական վարչության պետի պարտականությունները, աշխատել է ծանրաբեռնված, կազմակերպել է ամբողջ քննչական վարչության աշխատանքները:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննչական վարչության պետի տեղակալ Ս.Մ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, նկատի ունենալով, որ 06.06.2017թ. քրեական գործն վարույթ ընդունած ավագ քննիչ Լ.Տեր-Գևորգյանը փաստացի կազմել և ՀՀ քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժին է ուղարկել Չեխիայի Հանրապետության իրավասու մարմիններին ուղղված հարցում, իսկ վարչության պետի տեղակալ Ս.Մ-ն պարբերաբար միջազգային հարցումների ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատարից հետաքրքրվել է հարցման ընթացքից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քննչական կոմիտեի միջոցով միջազգային իրավական օգնություն ստանալու վերաբերյալ Չեխիայի Հանրապետության իրավապահ մարմիններին համապատասխան հարցում չուղարկելու դրվագով Ա.Մ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 3, դեմ՝ 3):

2. Առանց իրավաչափ նպատակի՝ տևական ժամանակ անգործություն դրսևորելու և հսկող դատախազի գրավոր, օրինական, առարկայական ցուցումի պահանջները չկատարելու դրվագով Ա.Մ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

3. Ենթակա քննիչի կողմից դատախազի ցուցումի պահանջները կատարելուն չհետևելու դրվագով Ս.Մ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի
քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Խ-ի վերաբերյալ

13 փետրվարի 2018 ԿՀՈ 8
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Դ.Խ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին ան-վտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Լոռու մարզի դատախազի տեղակալ Ա.Շիրոյանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Դ.Խ-ի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով քննված թիվ 55100117 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Դ.Խ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

22.12.2017թ. քրեական գործով միջնորդություն է ներկայացրել նախաքննության ժամկետը երկարացնելու մասին, նույն օրն անձամբ ստորագրել է ուղեկցական գրությունը՝ հասցեագրված Լոռու մարզի դատախազին, որից հետո այն ելքագրել է քննչական բաժնի դեպարտամենտի գործավարության ելքի փաստաթղթերի գրանցման գրքում և պահել իր մոտ՝ առձեռն մարզի դատախազություն ներկայացնելու համար, սակայն միայն նախաքննության ժամկետը լրանալու վերջին օրը՝ 2017թ. դեկտեմբերի 26-ին այն անձամբ մուտքագրել է Լոռու մարզի դատախազություն: Արդյունքում քննիչի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-

րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի 8-րդ կետի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Դ.Խ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի պահանջները խախտելու հանգամանքները՝ պատճառաբանելով որ դա պայմանավորված է եղել մոռացության, շտապողականության և ծանրաբեռնվածության հետևանքով:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի պահանջները, որպիսի պայմաններում վերջինիս արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդությունը քրեադատավարական օրենքով սահմանված ժամկետներում դատախազություն չներկայացնելու, ինչպես նաև ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի պահանջները խախտելու դրվագով Դ.Խ-ի

արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Զ.Դ-ի վերաբերյալ

13 փետրվարի 2018
ք.Երևան ԿՀՈ 9

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Զ.Դ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Վ.Պողոսյանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Զ.Դ-ի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի և 113-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով քննված թիվ 13859917 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Զ.Դ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագների.

1. 31.07.2017թ. քրեական գործը վարույթ ընդունելուց հետո մինչև 20.09.2017թ. քրեական գործով քննչական և դատավարական գործողություններ չի կատարել, մասնավորապես՝ օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չի տրվել Ն.Գրիգորյանին և Ս.Նազարյանին, բացի այդ, վերջիններիս մեղսունակության հարցը որոշելու նպատակով չեն

նշանակվել դատահոգեբուժական փորձաքննություններ, ինչը հանգեցրել է տևական ժամանակ քրեական գործի ելքի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հարցերի չպարզաբանմանը: Արդյունքում քննիչի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի և 55-րդ հոդվածի 3-րդ մասերի պահանջները:

Հարկ է նշել, որ քննիչ Զ.Դ-ն նախապես տեղեկացված լինելով ՀՀ ՔԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի և օրակարգի վերաբերյալ, դիմում է հասցեագրել ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովին նախագահին, նշելով, որ ընդունում է իրեն վերագրվող դատավարական խախտման բոլոր դրվագները՝ խնդրելով, որ նիստն անցկացնել իր բացակայությամբ:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի և 55-րդ հոդվածի 3-րդ մասերի պահանջները: Մասնավորապես՝ օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չի տրվել Ն.Գրիգորյանին և Ս.Նազարյանին, վերջիններիս մեղսունակության հարցը որոշելու նպատակով տևական ժամանակ չեն նշանակվել դատահոգեբուժական փորձաքննություններ, որպիսի պայմաններում քննիչի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

2. 21.12.2017թ. որոշում է կայացրել Ս.Նազարյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, սակայն օրենքով սահմանված ժամկետներում որոշման պատճենը չի ուղարկել դատախազին՝ չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հիշյալ դրվագով քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը՝ օրենքով սահմանված ժամկետներում որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը չուղարկելով դատախազին, որպիսի պայմաններում քննիչի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

3. Ս.Նազարյանին, Ն.Գրիգորյանին և նրանց պաշտպաններին չի ծանոթացրել ստացված դատահոգեբուժական փորձաքննությունների եզրակացություններին, ընդ որում Ն.Գրիգորյանը և նրա պաշտպանը չեն

ծանոթացվել նաև դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններին, որի արդյունքում քննիչի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի պահանջները:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հիշյալ դրվագով քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի պահանջները, մասնավորապես՝ միջոցներ չի ձեռնարկել ստացված դատահոգեբուժական փորձաքննությունների եզրակացություններին ծանոթացնելու առերևույթ հանցանք կատարած անձ Ս.Նազարյանին, Ն.Գրիգորյանին և նրանց պաշտպաններին, բացի այդ, նույն կերպ դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունները չեն ծանոթացվել Ն.Գրիգորյանին և նրա պաշտպանին, որպիսի պայմաններում քննիչի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Անձանց օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չտալու դրվագով Զ.Դ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2. Որպես մեղադրյալ ներգրավելու որոշման պատճենը օրենքով սահմանված ժամկետներում դատախազին չուղարկելու դրվագով Զ.Դ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

3. Ստացված փորձաքննությունների եզրակացություններին չծանոթացնելու դրվագով Զ.Դ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի քննիչ Ն.Խ-ի վերաբերյալ

20 մարտի 2018 ԿՀՈ 10
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի քննիչ Ն.Խ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Արմավիրի մարզի դատախազության դատախազ Էդ.Բաբայանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի քննիչ Ն.Խ-ի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի հատկանիշներով քննված թիվ 57110617 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ն.Խ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների

1. 27.10.2017թ. անչափահաս կասկածյալ Հայկ Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ է ճանաչվել վերջինիս մորաքույրը՝ Արմենուհի Ղանդիլյանը, ինչի արդյունքում քննիչի կողմից անտեսվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ն.Խ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ ելնելով

քրեական գործի շահերից նման որոշում է կայացրել, նկատի ունենալով, որ անչափահաս Հ.Հովհաննիսյանի ծնողները գտնվել են աշխատանքի վայրում:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի պահանջները՝ նկատի ունենալով, որ նախաքննության ընթացքում պատշաճ միջոցներ չի ձեռնարկել Հ.Հովհաննիսյանի ծնողներից մեկին օրինական ներկայացուցիչ ճանաչելու մասին և քննչական գործողությունը կատարել է մորաքրոջ մասնակցությամբ:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

2. 01.11.2017թ. անչափահաս Հ.Հովհաննիսյանի մայրը՝ Ա.Բադասյանը դիմում է ներկայացրել քննիչին՝ իրեն որդու օրինական ներկայացուցիչ ճանաչելու խնդրանքով: Նույն օրը քննիչը քննարկելով նշված դիմումը որոշում է կայացրել Ա.Բադասյանին Հ.Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ ճանաչելու մասին և Ա.Բադասյանը մասնակցել է որդու հետ կատարված բոլոր քննչական գործողություններին: Սակայն քննիչն իր 01.11.2017թ. կայացված որոշման մասին չի հայտնել Ա.Բադասյանին, վերջինիս որպես օրինական ներկայացուցիչ իրավունքներն ու պարտականությունները չի բացատրել, ավելին օրինական ներկայացուցիչ ճանաչելու մասին որոշումը չի կցել քրեական գործի նյութերին՝ անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ և 77-րդ հոդվածների պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ն.Խ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց իր կողմից քրեադատավարական նորմերի խախտման հանգամանքները:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի կարգով առաջին անգամ կարգավիճակ ստացած սուբյեկտին չի պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածով նրա իրավունքներն ու պարտականությունները, որպիսի պայմաններում քննիչի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի

նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Անչափահաս կասկածյալի մորաքրոջն օրինական ներկայացուցիչ ճանաչելու դրվագով Ն.Խ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

2. Օրինական ներկայացուցիչ ճանաչված անձին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները չպարզաբանելու դրվագով Ն.Խ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի նախկին քննիչ, ներկայումս՝ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Գ.Ս-ի վերաբերյալ

20 մարտի 2018
ք.Երևան ԿՀՈ 11

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի նախկին քննիչ, ներկայումս՝ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Գ.Ս-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում լսելով զեկուցողին և քննիչին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Քաղաքացի Հարություն Գրիգորյանի դիմումի հիման վրա Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, ներկայումս՝ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Գ.Ս-ի նկատմամբ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ նա, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված N15119215 քրեական գործի նախաքննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 217-218-րդ հոդվածների պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է հետևյալ դրվագը:

Քննիչ Գ.Ս-ն քրեական գործի քննության ընթացքում մասնակցելով թանկարժեք մետաղների լրացուցիչ զննմանը, համապատասխան արձանագրություն չի կազմել, կամ այլ կերպ կատարվածը չի փաստաթղթավորել:

Քննիչը բացատրություն տվեց, որ քրեական գործով ձեռք բերված ոսկյա ձուլակտորները ձուլելու և զտելու, դրանցում առկա այլ մետաղներն անջատելու համար համապատասխան փորձաքննություններ է նշանակել

երկու տարբեր փորձագիտական հիմնարկներում, սակայն փորձաքննությունը չի կատարվել մեթոդիկա և պայմաններ չունենալու պատճառաբանությամբ: Այլընտրանք չունենալով՝ բանկի աշխատակիցների և մասնագետի հետ կազմակերպել է ձուլման և զտման գործընթացը, ինչը՝ արձանագրել է «ձուլակտորները ձուլելու և զտելու մասին, զտման և ձուլման գործընթացը զննելու մասին» վերնագրով արձանագրությունում:

Հանձնաժողովին ներկայացվեց ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քաղ. Հ. Գրիգորյանի հաղորդման հիման վրա Գ.Ս-ի կողմից պաշտոնեական կեղծիք կատարելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործով քննիչի կայացրած գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 12.12.2017թ. որոշումը, համաձայն որի. «...ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով «ձուլելու և զտելու» մասին քննչական գործողության տարատեսակ նախատեսված չէ, այն չի հանդիսանում քննչական կամ դատավարական գործողությունների արդյունքում կազմված փաստաթուղթ, դրանում թեկուզ իրականությանը չհամապատասխանող տվյալներ ներառված լինելու դեպքում...»:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 217-րդ հոդվածում թվարկված են զննության օբեկտները, որի ցանկում «գործընթացը» որպես զննության օբյեկտ նախատեսված չէ, հետևաբար, քննիչը կատարել է օրենքով չնախատեսված գործողություն, որի լիազորությունը չի ունեցել, ուստի՝ նա խախտել է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Օրենսդրությամբ չնախատեսված օբեկտը (ձուլման և զտման գործընթացը) զննելու և դրա վերաբերյալ արձանագրություն կազմելու դրվագով ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի նախկին քննիչ, ներկայումս՝ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Գ.Ս-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ).

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական

կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ն-ի վերաբերյալ

20 մարտի 2018 ԿՀՈ 12

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ն-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ա.Սիմոնյանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ նույն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ն-ի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով քննված թիվ 13123017 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Գ.Ն-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չի կատարել, ինչը հանգեցրել է ապացույցի կորստի, մասնավորապես՝ գողության դեպքի վայրում առկա տեսանկարահանող սարքերը ժամանակին ձեռք բերելու և օրենքով սահմանված կարգով քրեական գործի նյութերին կցելու ուղղությամբ ոչինչ չի ձեռնարկել, ինչի հետևանքով տեսագրությունները վերցնել չի հաջողվել՝ դրանց

չպահպանվելու հետևանքով: Արդյունքում քննիչի գործողությունները հանգեցրել են ապացուցողական նյութի կորստի: Խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Գ.Ն-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ դեպքի վայրի զննության ընթացքում «Այնթափ» ռեստորանի սեփականատերը բանավոր հայտարարել է, որ տեսախցիկների տեսագրությունները համապատասխան մասնագետի օգնությամբ կներբեռնի էլեկտրոնային կրիչի վրա և կներկայացնի քննությանը, այդ պատճառով դրանք տեղում չի առգրավել: Բացի այդ, այդ մասով դեպքի հաջորդ օրը հանձնարարություն է տվել հետաքննության մարմնին:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, նկատի ունենալով, որ դեպքի վայրի զննության ժամանակ արձանագրելով տեսանկարահանող սարքերը, միջոցներ չի ձեռնարկել դրանք ձեռք բերելու համար, որի արդյունքում տեսագրությունները վերցնել չի հաջողվել՝ չպահպանվելու հետևանքով, որպիսի պայմաններում քննիչի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դեպքի վայրի զննության ընթացքում ռեստորանի տեսանկարահանող սարքերը ձեռք բերելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու դրվագով Գ.Նի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Է.Ղ-ի և նույն քննչական բաժնի պետի տեղակալ Ս.Ս-ի վերաբերյալ

14 ապրիլի 2018 ԿՀՈ 13
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Է.Ղ-ի և նույն բաժնի պետի տեղակալ Ս.Ս-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Երևանի կայազորի զինվորական դատախազության ավագ դատախազ Ա.Ոսկանյանի՝ 12.03.2018թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ ՔԿ ԶՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Է.Ղ-ի վարույթում քննված թիվ 90209017 քրեական գործով նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Է.Ղ-ին և բաժնի պետի տեղակալ Ս.Ս-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Քննիչ Է.Ղ-ն 16.11.2017թ. հարուցված քրեական գործով, նախաքննության ժամկետը լրանալուց 42 օր անց՝ 28.02.2018թ. միջնորդություն է ներկայացրել նախաքննության ժամկետը երկարացնելու մասին: Այդ ժամանակահատվածում առանց նախաքննության ժամկետը երկարացնելու, քրեական գործով կատարել է մի շարք կարևոր դատավարական գործողություններ /կասկածյալի նկատմամբ կիրառել է խափանման միջոց, հարցաքննել որպես կասկածյալ, որոշում է կայացրել հանրային պաշտպան ներգրավելու

մասին, անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին և մեղադրանք առաջադրել՝ կատարելով դրանից բխող գործողություններ, որոշում է կայացրել ամբուլատոր դատահոգեբուժական և ռազմաբժշկական համալիր փորձաքննություն նշանակելու մասին և առանձին քննչական հանձնարարություն տվել այլ քննչական ստորաբաժանմանը՝ քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ/, որի պայմաններում կատարված գործողությունների արդյունքները ճանաչվել են անթույլատրելի: Արդյունքում քննիչի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» « ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի՝ 8-րդ կետի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Է.Ղ-ն կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի 8-րդ կետի պահանջները խախտելու հանգամանքները՝ պատճառաբանելով, որ դա պայմանավորված է եղել մոռացության, շտապողականության և ծանրաբեռնվածության հետևանքով:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի պահանջները, որպիսի պայմաններում վերջինիս արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. ԶՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Ս.Ս-ն, պատշաճ կարգով չիրականացնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իր լիազորությունները՝ չի հետևել ենթակա քննիչի կողմից

վարույթում գտնվող քրեական գործով նախաքննության ժամկետները պահպանելու պահանջների կատարմանը:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Ս-ն կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները խախտելու հանգամանքները՝ պատճառաբանելով, որ դա պայմանավորված է եղել ծանրաբեռնվածությամբ:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննչական բաժնի պետի տեղակալ Ս.Ս-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, որպիսի պայմաններում վերջինիս արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդությունը քրեադատավարական օրենքով սահմանված ժամկետներում դատախազություն չներկայացնելու, ինչպես նաև ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի պահանջները խախտելու դրվագով քննիչ Է.Ղ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

2. Ենթակա քննիչի կողմից վարույթում գտնվող քրեական գործով նախաքննության ժամկետները պահպանելուն չհետևելու դրվագով քննչական բաժնի պետի տեղակալ Ս.Ս-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ երկրորդ կայազորային քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ի և նույն քննչական բաժնի պետի տեղակալ Դ.Ն-ի վերաբերյալ

14 ապրիլի 2018 ԿՀՈ 14
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երկրորդ կայազորային քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ի և բաժնի պետի տեղակալ Դ.Ն-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում լսելով զեկուցողին, Դ.Ֆ-ին և Դ.Ն-ին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ զինվորական դատախազության երկրորդ կայազորի դատախազության դատախազ Գ.Թավադյանի և ՀՀ ՔԿ նախագահի տեղակալ, ՀՀ ՔԿ ԶՔԳՎ պետ Հ.Գրիգորյանի միջնորդությունների հիման վրա ՀՀ ՔԿ ԶՔԳՎ երկրորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Դ.Ն-ի և քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ի նկատմամբ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ N91263617 քրեական գործով Դ.Ն-ն տևական ժամանակ՝ ավելի քան 1 ամիս անգործություն է դրսևորել: Բացի այդ, նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին որոշումն օրենքով սահմանված կարգի և ՀՀ ՔԿ նախագահի հրամանի պահանջների խախտմամբ է ներկայացրել դատախազություն: Հիշյալ գործողություններով նա առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 197-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. N 11 Ա հրամանի պահանջները:

Քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ն N91263617 և N91255117 քրեական գործերով անմիջականորեն ենթակայության տակ գտնվող քննիչների նկատմամբ պատշաճ հսկողություն չի իրականացրել, որով՝ առերևույթ չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի

պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է հետևյալ դրվագները:

1. N91263617 քրեական գործով Դ.Ն-ն տևական ժամանակ՝ ավելի քան 1 ամիս դրսևորել է անգործություն, չի առգրավել դեպքի վայրի ականները տեղադրելու սխեմաները /ֆորմուլյարներ/ և չի հարցաքննել ականապատողներին:

Դ.Ն-ն բացատրություն տվեց, որ քրեական գործը հարուցվել է 23.09.2017թ.: Գործը վարույթ ընդունած քննիչներն իրականացրել են անհրաժեշտ ու անհետաձգելի բոլոր քննչական և դատավարական գործողությունները: 12.01.2018թ. քրեական գործը վարույթ է ընդունել: Գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն կատարելու համար անհրաժեշտ է եղել առգրավել և զննել դեպքի վայրի ականապատման սխեմանները /ֆորմուլյարներ/, իրականացնել դրանից բխող այլ գործողություններ: Նշված-գործի փաստական հանգամանքներով պայմանավորված մեկ ամսվա ընթացքում նշվածը չկատարելը գործով ապացույցների կորստի չեն հանգեցրել, ինչը՝ պայմանավորված է եղել սխեմաների գաղտնի լինելու, այդպիսիք միայն ԼՂՀ ՊԲ հրամանատարի թույլտվությամբ ստանալու անորոշ ժամանակի հետ:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ մեկ ամիս վերը նշված գործողությունները չկատարելն ունեցել է օբյեկտիվ պատճառներ, որպիսիք չկատարելը չի անդրադարձել գործով ձեռք բերված ապացույցների կորստի:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչի արարքում առկա չէ իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. N91263617 քրեական գործով նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին որոշումը Դ.Ն-ն դատախազություն է հանձնել նախաքննության ժամկետը լրանալու օրը:

Դ.Ն-ն բացատրությամբ ընդունեց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. N 11 Ա հրամանի պահանջները չկատարելու հանգամանքը և հայտնեց, որ որոշումը կայացրել է 09.02.2018թ., նույն օրը գրությունը ստորագրել է բաժնի պետ Դ.Ֆ-ն, սակայն մոռացության արդյունքում այն դատախազություն է հանձնել 13.02.2018թ.՝ նախաքննության ժամկետը լրանալու օրը:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քրեական գործով իր լիազորություններն իրականացնելիս Դ.Ն-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. N 11 Լ հրամանի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչի արարքում առկա է իրավախախտման փաստը նրա մեղավորությունը:

3. Քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ն հանդիսանալով N 91263617 քրեական գործով քննիչի անմիջական ղեկավար, պատշաճ հսկողություն չի իրականացրել Դ.Ն-ի վարույթում քննվող քրեական գործով նախաքննության ժամկետները պահպանելու ուղղությամբ:

Քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ն բացատրություն տվեց, որ 09.02.2018թ.՝ մեկ օր ուշացումով է ստորագրել N91263617 քրեական գործով նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին որոշման ուղեկցական գրությունը, որով չի կատարել ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. N 11 Ա հրամանի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քրեական գործով իր լիազորություններն իրականացնելիս քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ն խախտել է ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. N 11 Լ հրամանի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով Դ.Ֆ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

4. Քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ն հանդիսանալով լիազորությունները 14.12.2017թ. դադարեցված N91255117 քրեական գործով քննիչ Ա.Շամիրյանի անմիջական ղեկավար, պատշաճ հսկողություն չի իրականացրել քննիչի կողմից 12.09.2017թ. առգրավված հաշվապահական փաստաթղթերն ամբողջությամբ զննելու և դրանից բխող այլ քննչական գործողություններ կատարելու նկատմամբ:

Քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ն բացատրություն տվեց, որ առգրավված երեք տարվա տվյալներ պարունակող հաշվապահական փաստաթղթերն ամբողջությամբ չեն զննվել ժամանակատար, ծավալուն լինելու ու առանձին բարդ մեթոդիկայով համակարգիչ մուտքագրելու հետևանքով: Թեև՝ դանդաղ, սակայն զննումը կատարվել է քննիչի վարույթում քննվող մյուս գործերով քննություն կատարելուն զուգահեռ:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով Դ.Ֆ-ի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. N91263617 քրեական գործով մեկ ամսյա ժամկետում անգործություն դրսևորելու դրվագով քննչական բաժնի պետի տեղակալ Դ.Ն-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (5 կողմ, 0 դեմ):
2. Նույն քրեական գործով նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդությունը օրենքով սահմանված կարգի խախտմամբ դատախազություն ներկայացնելու դրվագով Դ.Ն-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):
3. N91263617 քրեական գործով նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդության կից գրությունը մեկ օր ուշացումով ստորագրելու դրվագով Դ.Ֆ-ի արարքում առկա է իրա-վախախտման փաստը և նրա մեղավորությունը (3 կողմ, 2 դեմ):
4. N91255117 քրեական գործով քննիչի կողմից առգրավված հաշվապահական փաստաթղթերն ամբողջությամբ չզննելու և դրանից բխող այլ քննչական գործողություններ չկատարելու դրվագով Դ. Ֆ-ի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը (3 կողմ, 2 դեմ):
5. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Բ-ի, ավագ քննիչներ Հ.Մ-ի և Գ.Ա-ի վերաբերյալ

05 սեպտեմբերի 2018 ԿՀՈ 15

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Բ-ի, ավագ քննիչներ Հ.Մ-ի և Գ.Ա-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ դատախազության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Ա.Աֆանդյանի, դատախազի տեղակալ Գ.Մարգարյանի և դատախազության դատախազ Ժ.Չիչոյանի միջնորդությունների առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Մ-ն իր վարույթում քննված 10 քրեական գործերով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականաց-նելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը, ավագ քննիչ Գ.Ա-ն չի պահպանել ՀՀ սահմանադրական դատարանի 13.06.2017թ. ՍԴՈ-1373 որոշման պահանջը, իսկ բաժնի պետի տեղակալ Հ.Բ-ն չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի կողմից վարույթում գտնվող քրեական գործերով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչներ Հ.Մ-ին, Գ.Ա-ին և

պետի տեղակալ Հ.Բ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Ավագ քննիչ Հ.Մ-ն թիվ 13187218, 10105717, 13191618, 13178218, 13175318, 15856518, 13195318, 13195218, 13195118 և 13190818 քրեական գործերով անհետաձգելի քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում ժամանակին քննչական գործողություններ չի կատարել և տևական ժամանակ՝ շուրջ 1 ամիս դրսևորել է անգործություն՝ առերևույթ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Հ.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, մասնավորապես, այն մասին, որ տևական ժամանակ քննչական և դատավարական գործողություններ չկատարելը պայմանավորված է եղել իր ծանրաբեռնվածությամբ, 2018թ. ապրիլ-մայիս ամիսներին ՀՀ-ում տեղի ունեցող իրադարձությունների արդյունքում Երևան քաղաքի ճանապարհների փակ լինելու հանգամանքով, ինչպես նաև այդ ընթացքում ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործերով քննչական խմբում ընդգրկված լինելով այդ գործերով անձանց հարցաքննություններ կատարելու հանգամանքով:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Հ.Մ-ն թեև մի շարք քրեական գործերով տևական ժամանակ դրսևորել է անգործություն, այսինքն՝ առկա է կարգապահական խախտման փաստը, սակայն նկատի ունենալով, որ 2018թ. ապրիլի 9-ից մայիսի 9-ն ընկած ժամանակահատվածում առանձին քննչական և դատավարական գործողությունների կատարումը հնարավոր չի եղել օբյեկտիվ խոչընդոտների առկայությամբ պայմանավորված և հաշվի առնելով սույն գործի փաստական հանգամանքները, ուստի Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ նման պայմաններում Հ.Մ-ի արարքում բացակայում է մեղավորությունը:

2. Թիվ 10105717 քրեական գործով ավագ քննիչ Գ.Ա-ն, չպահպանելով ՀՀ սահմանադրական դատարանի 13.06.2017թ. ՍԴՈ-1373 որոշման պահանջը, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդության մասին մինչև դրա քննարկումը նախապես չի իրազեկել դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին, այն վարչական շրջանների դատախազություն է ուղարկել 2018թ. մայիսի 24-

ին՝ դատարանի կողմից քննարկելուց հետո, ինչի արդյունքում դատախազը փաստացի զրկվել է նշված հիմնավորումներին ծանոթանալու և անհրաժեշտության դեպքում միջնորդությունն անձամբ պաշտպանելու կամ այն հետ վերցնելու օրենքով նախատեսված հնարավորությունից:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Գ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված չէ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդության օրինակը դատախազին ուղարկելու վերաբերյալ պահանջ, ուստի վերջինս՝ որպես վարույթ իրականացնող մարմին, նման պարտականություն չի ունեցել:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննարկվող հարցի վերաբերյալ առկա է օրենսդրական բաց և իրավական անորոշություն, որպիսի պայմաններում Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ Գ.Ա-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը:

3. Քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Բ-ն, պատշաճ կարգով չիրականացնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իր լիազորությունները՝ չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի կողմից վարույթում գտնվող քրեական գործերով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Հ.Բ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ վերը նշված ժամանակահատվածում չի կարողացել պատշաճ կարգով հետևել քննիչի կողմից անհրաժեշտ քննչական գործողությունների ժամանակին կատարմանը, ինչը պայմանավորված է եղել աշխատանքային ծանրաբեռնվածությամբ, ինչպես նաև այդ ընթացքում ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործերով քննչական խմբում իր ենթակայության ներքո գտնվող քննիչների ընդգրկված լինելու հանգամանքով:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Հ.Բ-ի կողմից ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործերով քննչական գործողությունների ժամանակին կատարմանը չհետևելը պայմանավորված է եղել օբյեկտիվ խոչընդոտների առկայության

հետևանքով 2018թ. ապրիլի 9-ից մայիսի 9-ն ընկած ժամանակահատվածում առանձին քննչական և դատավարական գործողությունների կատարման անհնարինությամբ, ուստի սույն գործի փաստական հանգամանքները հաշվի առնելով Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ նման պայմաններում Հ.Բ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշման 47-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մի շարք քրեական գործերով տևական ժամանակով անգործություն դրսևորելու դրվագով Հ.Մ-ի արարքում բացակայում է մեղավորությունը (կողմ՝ 8, դեմ՝ 0):

2. ՀՀ սահմանադրական դատարանի որոշման պահանջը չկատարելու դրվագով Գ.Ա-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը (կողմ՝ 8, դեմ՝ 0):

3. Ենթակա քննիչի վարույթում գտնվող քրեական գործերով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն չհետևելու դրվագով Հ.Բ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը (կողմ՝ 8, դեմ՝ 0):

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ երկրորդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ռ.Գ-ի վերաբերյալ

05 սեպտեմբերի 2018 ԿՀՈ 16

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ երկրորդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ռ.Գ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վերահսկողության վարչության պետ Դ.Ֆ-ի՝ թիվ 91200418 քրեական գործով քրեադատավարական օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու համար ՀՀ ՔԿ ԶՔԳՎ երկրորդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ռ.Գ-ի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ զեկուցագիրը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ՀԿԳ քննիչ Ռ.Գ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագով.

ՀԿԳ քննիչ Ռ.Գ-ն թիվ 91200418 քրեական գործով, նախաքննության ժամկետը 15.06.2018թ. լրանալու պարագայում 11.06.2018թ. կազմված միջնորդությունը դատախազություն է ներկայացրել նախաքննության ժամկետը լրանալու օրը՝ 15.06.2018թ.: Արդյունքում քննիչի կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև՝ «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի 8-րդ կետի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ռ.Գ-ն կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն

հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի 8-րդ կետի պահանջները խախտելու հանգամանքները՝ պատճառաբանելով, որ դա պայմանավորված է եղել մոռացության, առողջական խնդրի և ծանրաբեռնվածության հետևանքով:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի պահանջները, որպիսի պայմաններում՝ վերջինիս արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդությունը քրեադատավարական օրենքով սահմանված ժամկետներում դատախազություն չներկայացնելու, ինչպես նաև ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի պահանջները խախտելու դրվագով ՀԿԳ քննիչ Ռ.Գ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 8, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության քննիչներ Ա.Ս-ի և Գ.Ս-ի վերաբերյալ

05 սեպտեմբերի 2018թ. ԿՀՈ 17
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչներ՝ Գ.Ս-ի և Ա.Ս-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության պետի զեկուցագրի և ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչությունից ստացված տեղեկանքի առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Արարատի մարզային քննչական վարչության քննիչներ՝ Ա.Ս-ի և Գ.Ս-ի վարույթում քննվող քրեական գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ քրեական գործերով չեն կատարվել նյութերի թվայնացում, բացառությամբ Գ.Սարգսյանի վարույթում քննվող մեկ քրեական գործից, ինչպես նաև բացակայել են քննության միասնական պլանները, որպիսի գործողություններով չեն պահպանվել ՀՀ ՔԿ նախագահի 08.12.2015թ. 134-Լ և 12.03.2015թ. թիվ 11 հրամանի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչներ Գ.Ս-ի և Ա.Ս-ի վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Արարատի մարզային քննչական վարչության քննիչներ՝ Գ.Ս-ի և Ա.Ս-ի վարույթում քննվող համապատասխանաբար 4 և 7 քրեական գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ միայն Գ.Ս-ի վարույթում քննվող մեկ գործով է կատարվել թվայնացում, իսկ մյուս բոլոր գործերը կամ ընդհանրապես չեն թվայնացվել կամ ժամանակին չեն թվայնացվել,

ինչպես նաև բացակայել են քննության միասնական պլանները, որպիսի գործողություններով չեն պահպանվել ՀՀ ՔԿ նախագահի 08.12.2015թ. 134-Լ և 12.03.2015թ. թիվ 11-Լ հրամանի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչներ Գ.Ս-ն և Ա.Ս-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեցին, որ քրեական գործերը թվայնացում կատարել են, բայց ոչ 15 օրը մեկ ինչպես սահմանված է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանի մեջ, հիմնականում դատախազություն կամ դատարան գնալուց առաջ են թվայնացնում քրեական գործերը: Գ.Ս-ն հայտնեց նաև, որ ճիշտ է ուշացումով են քրեական գործերը թվայնացրել, բայց իրենց գործողությունները լուրջ հետևանքներ չեն առաջացրել: Ինչ վերաբերում է քննության միասնական պլաններ չունենալուն, ապա քննիչները հայտնեցին, որ քրեական գործերով ունեցել են ձեռագիր աշխատանքային պլաններ, ինչով էլ առաջնորդվել են:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչները պատշաճ չեն կատարել իրենց պարտականությունները, ինչի հետևանքով չեն ապահովել գերատեսչական վերահսկողությունը, որի արդյունքում խախտվել է ՀՀ ՔԿ նախագահի 08.12.2015թ. 134-Լ հրամանի պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագով քննիչների արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրանց մեղավորությունը:

Քննության միասնական պլաններ չունենալով դրվագով Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանի պահանջները բովանդակային իմաստով պահպանվել են, որպիսի պայմաններում քննիչների արարքներում բացակայում է կարգապահական խախտման փաստը:

2. Համաձայն ՀՀ ՔԿ Շիրակի մարզային քննչական վարչության պետի զեկուցագրի՝ Ա.Ս-ն ՀՀ ՔԿ նախագահի 05.06.2018թ. հրամանով նշանակվել է Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչի պաշտոնում, սակայն 2011թ. հունիսի 11-ին և 12-ին անհարգելի պատճառով չի ներկայացել աշխատանքի՝ խախտելով «Հանրային ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի և «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Ս-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչի պաշտոնում նշանակվելուց

հետո հեռախոսազրույցներ է ունեցել Շիրակի մարզային քննչական վարչության ղեկավարության հետ և թույլտվություն է խնդրել մի քանի օր չներկայանալ աշխատանքի, մինչև հանձնի վարույթում քննվող քրեական գործերը, վերանորոգի ավտոմեքենան և նոր միայն ներկայանա: 2018թ. հունիսի 11-ին աշխատանքի չի ներկայացել, քանի որ ունեցել է Շիրակի մարզային քննչական վարչության պետի տեղակալի թույլտվությունը, իսկ ս/թ հունիսի 12-ին հրավիրվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն բացատրություն տալու նպատակով, որտեղ մնացել է 2 ժամից ավել և այլևս չի կարողացել մեկնել Գյումրի:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ 11.06.2018թ. անհարգելի աշխատանքի չներկայանալու դրվագով առկա է չփարատված կասկած, ինչը ենթակա է մեկնաբանման հօգուտ քննիչի: Իսկ 2018թ. հունիսի 12-ին քննիչը հրավիրվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ բացատրություն տալու նպատակով, որտեղ մնացել է 2 ժամից մի փոքր ավել, որից հետո այլևս Երևանից չի մեկնել Գյումրի:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ աշխատանքից 2 օր բացակայելու դրվագով քննիչի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վարույթում քննվող քրեական գործի նյութերը չթվայնացնելու, դրանով իսկ ՀՀ ՔԿ նախագահի 08.12.2015թ. 134-Լ հրամանի պահանջները խախտելու դրվագով քննիչներ՝ Գ.Ս-ի և Ա.Ս-ի արարքներում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

2. Քննության միասնական պլաններ չունենալով դրվագով քննիչներ՝ Գ.Ս-ի և Ա.Ս-ի արարքներում բացակայում է կարգապահական խախտման փաստը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

3. 2018թ. հունիսի 11-ին և 12-ին անհարգելի աշխատանքի չներկայանալու դրվագով քննիչ Ա.Ս-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

4.Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի նախկինում՝ Լոռու մարզային քննչական վարչության, ներկայում՝ ՋՔԳՎ առաջին կայազորային քննչական բաժնի քննիչ Ա.Խ-ի վերաբերյալ

12 սեպտեմբերի 2018թ. ԿՀՈ 18

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի նախկինում՝ Լոռու մարզային քննչական վարչության, ներկայում՝ ՋՔԳՎ առաջին կայազորային քննչական բաժնի քննիչ, երկրորդ դասի խորհրդական Ա.Խ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցող Հ.Հայրապետյանին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության պետի տեղակալ Ա.Գալստյանի՝ վարույթում քննված առանձին քրեական գործերով քննիչ Ա.Խ-ի կողմից քրեադատավարական օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու և երեք աշխատանքային օր անհարգելի պատճառով աշխատանքից բացակայելու համար վերջինիս նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ զեկուցագրերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ա.Խ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված N19150718 քրեական գործով չի կատարել անմիջական ղեկավարի ցուցումի պահանջը՝ գաղտնի հափշտակված զարդերի գումարի վերջնական չափը պարզելու վերաբերյալ, որով՝ չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Խ-ի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ չընդունեց մեղքը՝ պատճառաբանելով, որ կատարել է ցուցումի պահանջները, լրացուցիչ հարցաքննել է նաև տուժողին, ով հայտնել է, որ

գողացված արծաթյա զարդերի վերաբերյալ պնդում է նախորդ ցուցմունքում նշվածը՝ դրանց նկարագրությունը և քանակը, որը հիմք է ընդունել և դրա վերաբերյալ կազմել է առանձին արձանագրություն:

ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության պետի տեղակալ Ա.Գալստյանը հիշյալ դրվագի կապակցությամբ հայտնեց, որ ցուցումի պահանջն այդ մասով չի կատարվել, քանի որ տուժողի ցուցմունքներում և բացատրությունում, դրան կից ներկայացրած փաստաթղթերում գողացված զարդերի վերաբերյալ առկա են եղել հակասություններ, որի կապակցությամբ քննություն չի կատարվել: Բացի այդ, գողացված արծաթյա զարդերի վերաբերյալ լրացուցիչ ցուցմունքում կոնկրետ չի նշվել «արժեքը» բառը:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Ա.Խ-ին, ինչպես նաև՝ ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության պետի տեղակալ Ա.Գալստյանին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Խ-ի արարքում հիշյալ դրվագով բացակայում է կարգապահական խախտման փաստը, նկատի ունենալով, որ N19150718 քրեական գործով անմիջական ղեկավարի ցուցումի պահանջը կատարվել է, ցուցումից հետո տուժողն իր լրացուցիչ ցուցմունքով պնդել է նախորդ ցուցմունքում գողացված զարդերի վերաբերյալ հայտնած նկարագրությունը և քանակը, որի դիմաց նշված է եղել նաև դրանց յուրաքանչյուրի արժեքը: Նկարագրվածի պայմաններում՝ Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Խ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված N19151418 քրեական գործով որոշում է կայացրել վարույթը կասեցնելու մասին, սակայն օրենքով սահմանված ժամկետում այն չի ուղարկել դատախազություն՝ որոշման օրինականությունը ստուգելու համար, որպիսի գործողությամբ չի կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 23-րդ կետի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Խ-ն կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ չընդունեց մեղքը՝ պատճառաբանելով, որ ինքը քրեական գործը կասեցված վիճակում 30.03.2018թ.-ին հանձնել է ՀՀ ՔԿԴ ԼՄՎ տարածքային բաժնի պետ Ա.Ղարիբջանյանին՝ ուղեկցական գրությունը ստորագրելու համար քննչական վարչության պետին կամ տեղակալին հանձնելու, սակայն վերջինս չի ընդունել կասեցված քրեական գործը, ինչի պատճառով այն ելքագրվել և դատախազություն է ուղարկվել 03.04.2018թ.:

Նշված դրվագի շուրջ ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության պետ Ա.Ավետիսյանը, նույն վարչության պետի տեղակալ Ա.Գալստյանը և ՀՀ ՔԿԴ Լոռու մարզային վարչության տարածքային բաժնի պետ

Ա.Ղարիբջանյանն Ա.Խ-ի բերած պատճառաբանությունների դեմ առարկեցին: Վերջինս հայտնեց, որ քննիչ Ա.Խ-ն քրեական գործն իրեն հանձնել է 30.03.2018թ.-ին՝ աշխատանքային օրվա ավարտից՝ ժամը 18:00-ից հետո, ինչի պատճառով ինքը քրեական գործը չի ընդունել, որն էլ հանձնվել է 03.04.2018թ.-ին և ելքագրվել՝ ժամկետը խախտված վիճակում:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Ա.Խ-ին, ինչպես նաև՝ ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության պետ Ա.Ավետիսյանին, նույն վարչության պետի տեղակալ Ա.Գալստյանին և ՀՀ ՔԿԴ Լոռու մարզային վարչության տարածքային բաժնի պետ Ա.Ղարիբջանյանին, Կարգապահական հանձնաժողովի անդամների քվեարկությամբ ձայները կիսվեցին՝ 3 կողմ և 3 դեմ, որպիսի պայմաններում ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 48-րդ կետի՝ հանձնաժողովի անդամների ձայները կիսվելու դեպքում ընդունված է համարվում ՀՀ ՔԿ ծառայողի համար առավել բարենպաստ որոշումը, ուստի՝ Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով բացակայում է օրենքի կոպիտ խախտման հատկանիշները:

3. ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ և 244-րդ հոդվածների հատկանիշներով հարուցված N19150318 և N19103717 քրեական գործերով կայացրել է դատաապրանքագիտական և դատաավտոտեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին որոշումներ, սակայն առանց իրավաչափ նպատակի, անհարկի ձգձգելով նախաքննության ժամկետները, տևական ժամանակով՝ 24 և 17 օր անց է որոշումներն ուղարկել փորձագիտական հիմնարկ, չկատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Խ-ն կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ մեղքն ընդունեց մասնակի՝ պատճառաբանելով, որ N19103717 քրեական գործով կայացրած դատաավտոտեխնիկական փորձաքննությունն ուշ է ներկայացրել փորձագիտական հիմնարկին, իսկ N19150318 քրեական գործով դատաապրանքագիտական նշանակելու մասին որոշումը փորձագիտական կենտրոն ուշ ներկայացնելու մասով բերեց անհիմն պատճառաբանություններ:

Նշված դրվագի շուրջ ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության պետի տեղակալ Ա.Գալստյանն առարկեց Ա.Խ-ի բերած պատճառաբանությունների դեմ՝ պնդելով, որ քննիչ Ա.Խ-ն նշված քրեական գործերով նշանակված փորձաքննություններն ուշ է ներկայացրել փորձագիտական կենտրոններ:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Ա.Խ-ին, ինչպես նաև՝ ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության պետի տեղակալ Ա.Գալստյանին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչի գործողություններում առերևույթ առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ քննիչը N19150318 և N19103717 քրեական գործերով կայացրած դատաապրանքագիտական և դատաավտոտեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին որոշումները՝ առանց իրավաչափ նպատակի, անհարկի ձգձգելով նախաքննության ժամկետները, տևական ժամանակով՝ 24 և 17 օր անց է ուղարկել ուղարկել փորձագիտական հիմնարկներ, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Նկարագրվածի պայմաններում՝ Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Խ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

4. 2018թ. մարտի 23-ին, 26-ին և 28-ին՝ երեք աշխատանքային օր, քննիչ Ա.Խ-ն անհարգելի պատճառով բացակայել է աշխատանքից, խախտելով՝ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Խ-ն կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ չընդունեց մեղքը մասնակի՝ բերելով անհիմն պատճառաբանություններ:

Նշված դրվագի շուրջ ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության պետ Ա.Ավետիսյանը և նույն վարչության պետի տեղակալ Ա.Գալստյանն առարկեցին Ա.Խ-ի բերած պատճառաբանությունների դեմ՝ հայտնելով, որ քննիչ Ա.Խ-ն երեք աշխատանքային օր անհարգելի պատճառով և առանց իրենց գիտության բացակայել է աշխատանքից:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Ա.Խ-ին, ինչպես նաև՝ ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության պետ Ա.Ավետիսյանին և նույն վարչության պետի տեղակալ Ա.Գալստյանին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչի գործողություններում առերևույթ առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ քննիչ Ա.Խ-ն 2018թ. մարտի 23-ին, 26-ին և 28-ին՝ երեք աշխատանքային օր, առանց վերադասների թույլտվության և գիտության, անհարգելի պատճառով բացակայել է աշխատանքից, այսինքն՝ քննիչը խախտել է «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները: Նման պայմաններում՝ Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագով Ա.Խ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. N19150718 քրեական գործով անմիջական ղեկավարի ցուցումի պահանջը չկատարելու դրվագով քննիչ Ա.Խ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2. N19151418 քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումն օրենքով սահմանված ժամկետում դատախազություն չուղարկելու դրվագով քննիչ Ա.Խ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 3, դեմ՝ 3):

3. N19150318 և N19103717 քրեական գործերով կայացրած դատաապրանքագիտական և դատաավտոտեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին որոշումներն առանց իրավաչափ նպատակի, անհարկի ձգձգելով նախաքննության ժամկետները, տևական ժամանակով՝ 24 և 17 օր անց փորձագիտական հիմնարկ ուղարկելու դրվագով քննիչ Ա.Խ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 4, դեմ՝ 2):

4. 2018թ. մարտի 23-ին, 26-ին և 28-ին՝ երեք աշխատանքային օր, անհարգելի պատճառի աշխատանքից բացակայելու դրվագով քննիչ Ա.Խ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

5. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ս.Կ-ի (գործուղված՝ Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժին) վերաբերյալ

19 սեպտեմբերի 2018թ.

ք. Երևան ԿՀՈ 19

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ս.Կ-ի /գործուղված՝ ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի բաժին/ նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Կոտայքի մարզի դատախազության դատախազ Տ.Ղուկասյանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ավագ քննիչ Ս.Կ-ի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով քննված թիվ 20102218 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Ս.Կ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքով հարուցված քրեական գործով վթարված տրանսպորտային միջոցն իրեղեն ապացույց չի ճանաչել, միջոցներ չի ձեռնարկել այն իրավաբանական կամ ֆիզիկական անձանց՝ է պատասխանատու պահպանության հանձնելու համար, ինչի արդյունքում վարորդ Ա.Հարությունյանի սեփականության իրավունքը հանցավոր ոտնձգությունից չի պաշտպանել և անհայտ անձը ավտոմեքենայից կատարել է հափշտակություն՝ Ա.Հարությունյանին պատճառելով գույքային վնաս: Արդյունքում քննիչի կողմից չի պահպանվել

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 115-117-րդ հոդվածների պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Ս.Կ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ վթարված ավտոմեքենան իրեղեն ապացույց չի ճանաչել, քանի որ սպասել է նշանակված փորձաքննության եզրակացությանը, որից հետո նոր հետո միայն պետք է լուծեր ավտոմեքենան իրեղեն ապացույց ճանաչելու և պահպանության հանձնելու հարցը, սակայն մինչև եզրակացության ստանալը գործուղվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-117-րդ հոդվածների պահանջները, որպիսի պայմաններում վերջինիս արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքով հարուցված քրեական գործով վթարված տրանսպորտային միջոցն իրեղեն ապացույց չճանաչելու և պատասխանատու պահպանության հանձնելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու դրվագով Ս.Կ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մ.Մ-ի վերաբերյալ

19 սեպտեմբերի 2018թ. ԿՀՈ 20

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մ.Մ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Սյունիքի մարզի դատախազության դատախազ Լ.Նահապետյանի՝ 13.06.2018թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մ.Մ-ի վարույթում քննված թիվ 45151318 քրեական գործով նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Մ.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Քննիչ Մ.Մ-ն 26.05.2018թ. Ռ.Օհանյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին կայացված որոշման պատճենը Սյունիքի մարզի դատախազություն է ուղարկել 08.06.2018թ.՝ 13 օր անց, իսկ 31.05.2018թ. Նարինե Օհանյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով որպես մեղադրյալ ներգրավելու մասին կայացված որոշման պատճենը մինչ 13.06.2018թ. Սյունիքի մարզի դատախազություն չի ուղարկել: Արդյունքում՝ քննիչի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ այն է, անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում չի ուղարկվել դատախազին:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ քննիչ Մ.Մ-ն իր դիրքորոշումը հայտնել է ՀՀ ՔԿ Կարգապահական հանձնաժողովի նախագահին ուղղված դիմումով, որով վերջինս ընդունել է դատավարական

խախտումը թույլ տալու հանգամանքը, խնդրելով հեռավորության և զբաղվածության պատճառով նիստն անցկացնել առանց իրեն:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Մ.Մ-ի արարքում հիշյալ դրվագով առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ քննիչը N 45151318 քրեական գործերով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ այն է, անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում չի ուղարկվել դատախազին:

2. Քննիչ Մ.Մ-ն, 23.05.2018թ. ղեկավարվելով «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի և ՀՀ կառավարության 25.12.1998թ. թիվ 821 որոշման 19-րդ կետի 1-ին մասի պահանջներով վերցրել է կասկածյալ Ռ.Օհանյանի անձնագիրը, սակայն այդ մասին ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչություն և ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն անմիջապես գրավոր չի հայտնել՝ խախտելով ՀՀ ՔԿ նախագահի 01.10.2015թ. թիվ 91-Լ հրամանի պահանջները

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ քննիչ Մ.Մ-ն իր դիրքորոշումը հայտնել է ՀՀ ՔԿ Կարգապահական հանձնաժողովի նախագահին ուղղված դիմումով, որով վերջինս ընդունել է դատավարական խախտումը թույլ տալու հանգամանքը, խնդրելով հեռավորության և զբաղվածության պատճառով նիստն անցկացնել առանց իրեն:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Մ.Մ-ի արարքում հիշյալ դրվագով առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ քննիչը N 45151318 քրեական գործերով կասկածյալ Ռ. Օհանյանի անձնագիրը վերցնելով, այդ մասին ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչություն և ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն անմիջապես գրավոր չի հայտնել, խախտելով ՀՀ ՔԿ նախագահի 01.10.2015թ. թիվ 91-Լ հրամանի պահանջ-ները՝

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. N45151318 քրեական գործով անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում դատախազին չուղարկելու դրվագով քննիչ Մ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

2. ՀՀ ՔԿ նախագահի 01.10.2015թ. թիվ 91-Լ հրամանի պահանջները խախտելու դրվագով քննիչ Մ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Խ.Ն-ի վերաբերյալ

19 սեպտեմբերի 2018թ. ԿՀՈ 21

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Խ.Ն-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչությունից ստացված միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ավագ քննիչ Խ.Ն-ի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով քննված թիվ 14200118 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Խ.Նավասարդյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

13.03.2018թ. Խ.Թիթիզյանի ներկայացուցիչ, փաստաբան Հ.Սուքիասյանը դիմում է ներկայացրել քննիչին՝ քրեական գործով Խաչիկ Թիթիզյանին և Գևորգ-Կևին Թիթիզյանին տուժող ճանաչելու պահանջի մասին, սակայն քննիչը քրեադատավարական օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չի քննարկել դիմումը /Գևորգ-Կևին Թիթիզյանին տուժող ճանաչելու մասին, քանի որ Խ.Թիթիզյանը մինչ այդ արդեն իսկ ճանաչված է եղել տուժող/ և արդյունքների մասին տեղյակ չի պահել դիմողին՝ չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ և 199-րդ հոդվածների պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Խ.Ն-ն իր դիրքորոշումը ներկայացրել է ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական

հանձնաժողովի նախագահին ուղղված դիմումով, որով ընդունել է դատավարական խախտում թույլ տալու հանգամանքը և խնդրել նիստն անցկացնել առանց իրեն, նկատի ունենալով, որ ներկա պահին գործուղման մեջ է գտնվում ՀՀ հատուկ քննչական ծառայությունում:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը քրեադատավարական օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չի քննարկել դիմումը՝ Գևորգ-Կևին Թիթիզյանին տուժող ճանաչելու մասով՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102 և 199-րդ հոդվածների պահանջները, որպիսի պայմաններում վերջինիս արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Խ.Թիթիզյանի ներկայացուցիչ, փաստաբան Հ.Սուքիասյանի դիմումը քրեադատավարական օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չքննարկելու դրվագով Խ.Ն-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Ս-ի (կարգապահական խախտման փաստի բացակայության մասին)

19 սեպտեմբերի 2018թ. ԿՀՈ 22

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Ս-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ զինվորական դատախազության թիվ 3 կայազորի զինվորական դատախազության դատախազ Ա.Ոսկանյանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Ս-ն իր վարույթում քննված թիվ 90876717 քրեական գործով նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Սարգսյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

1. Ավագ քննիչ Հ.Ս-ն թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի պահանջների խախտում: Այսինքն, չհեռանալու մասին ստորագրություն տված մեղադրյալ Զ.Հունանյանն առանց քննիչի թույլտվության և իր բնակության վայրը փոխելու մասին նրան հայտնելու ԱՀ-ից մեկնել է այլ տեղանք՝ կոնկրետ դեպքում ՀՀ և փոխել է բնակության վայրը: Տվյալ պարագայում քննիչ Հ.Ս-ն մեղադրյալ

Զ.Հունանյանի նկատմամբ չի կիրառել սույն օրենսգրքով նախատեսված դատավարական հարկադրանքի այլ միջոցներ:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ քննիչ Հ.Ս-ն իր դիրքորոշումը հայտնել է ՀՀ ՔԿ Կարգապահական հանձնաժողովի նախագահին ուղղված դիմումով, որով վերջինս խնդրել է հեռավորության և զբաղվածության պատճառով նիստն անցկացնել առանց իրեն:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Հ.Ս-ի արարքում հիշյալ դրվագով բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ քննիչը N 90876717 քրեական գործերով կիրառել է քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական հարկադրանքի այլ միջոցներ՝ մասնավորապես կայացրել է մեղադրյալ Զ.Հունանյանին բերման ենթարկելու մասին որոշումներ, ուստի Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ նման պայմաններում Հ.Ս-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշման 47-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մեղադրյալ Զ.Հունանյանի նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական հարկադրանքի այլ միջոցներ չկիրառելու դրվագով Հ.Ս-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Օ-ի վերաբերյալ

19 սեպտեմբերի 2018թ. ԿՀՈ 23

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ, երկրորդ դասի խորհրդական Ա.Օ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցող Հ.Հայրապետյանին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ դատախազության Արարատի մարզի դատախազի տեղակալ Վ.Մկրտչյանի միջնորդությունը՝ վարույթում քննված թիվ 44159818 քրեական գործով քննիչ Ա.Օ-ի կողմից քրեադատավարական օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ա.Օ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. 22.05.2018թ. Գ.Բաբաքյոխվյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել է ստորագրություն չհեռանալու մասին, որով նրան տվել է կասկածյալի դատավարական կարգավիճակ, սակայն 07.05.2018թ. ստացված քրեական գործում առկա դատաբժշկական փորձաքննության թիվ 0155 եզրակացությունը չի ներկայացրել ծանոթացման համար՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետի և 247-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջները,

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Օ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց մեղքը՝ պատճառաբանելով, որ ստացված եզրակացությունը ծանոթացման համար Գ.Բաբաքյոխվյանին չի ներկայացրել և որևէ կերպ նրան այդ մասին չի հայտնել:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Ա.Օ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Օ-ն 22.05.2018թ. չի ապահովել

կասկածյալ Գ.Բաբաքյոխվյանի՝ ստացված դատաբժշկական փորձաքննության թիվ 0155 եզրակացությանը ծանոթանալու իրավունքը, որևէ կերպ նրան չի հայտնել եզրակացությունը ստանալու մասին և Գ.Բաբաքյոխվյանին չի պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված նրա իրավունքները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Օ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. 29.05.2018թ. քրեական գործով վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս կամ դրան նախորդող ժամանակահատվածում տուժող Ա.Նահապետյանին և կասկածյալ Գ.Բաբաքյոխվյանին չի պարզաբանել քրեական գործի նյութերին ծանոթանալու նրանց իրավունքը, որից հետո 07.06.2018թ. դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից քրեական գործը վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը վերացնելուց հետո 09.07.2018թ. քրեական գործով վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս կամ դրան նախորդող ժամանակահատվածում կրկին Ա.Նահապետյանին և Գ.Բաբաքյոխվյանին չի պարզաբանել քրեական գործի նյութերին ծանոթանալու նրանց իրավունքը, այդպիսով՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Օ-ն կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց մեղքը՝ պատճառաբանելով, որ տուժող Ա.Նահապետյանին և կասկածյալ Գ.Բաբաքյոխվյանին քրեական գործի նյութերին ծանոթանալու նրանց իրավունքը չպարզաբանելը մոռացության արդյունք է:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Ա.Օ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ N44159818 քրեական գործով վարույթը 29.05.2018թ. և 09.07.2018թ. կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս կամ դրան նախորդող ժամանակահատվածում տուժող Ա.Նահապետյանին և կասկածյալ Գ.Բաբաքյոխվյանին չի պարզաբանել քրեական գործի նյութերին ծանոթանալու նրանց իրավունքը: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Օ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. N44159818 քրեական գործով կասկածյալ Գ.Բաբաքյոխվյանին դատաբժշկական փորձաքննության եզրակացությանը ծանոթանալու նրա իրավունքը չապահովվելու և այդ մասին նրան չհայտնելու դրվագով քննիչ Ա.Օ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2. N44159818 քրեական գործով 29.05.2018թ. և 09.07.2018թ. վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս կամ դրան նախորդող ժամանակահատվածում տուժող Ա.Նահապետյանին և կասկածյալ Գ.Բաբաքյոխվյանին քրեական գործի նյութերին ծանոթանալու նրանց իրավունքը չպարզաբանելու դրվագով քննիչ Ա.Օ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ Արագածոտնի մարզային քննչական վարչության պետի
տեղակալ Գ.Ա-ի վերաբերյալ
(կարգապահական խախտման փաստի բացակայության մասին)

26 սեպտեմբերի 2018թ. ԿՀՈ 24
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ ՔԿ Արագածոտնի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Գ.Ա-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Քրեական գործով տուժող Վ.Նալպանտեանի օրինական ներկայացուցիչ Զ.Նալպանտեանի և տուժողի ներկայացուցիչ, փաստաբան Ա.Սարգսյանի միջնորդությունների առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Արագածոտնի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Գ.Ա-ն իրեն անմիջականորեն ենթակա նախկին ավագ քննիչ Վ.Մ-ի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով քննված թիվ 29103817 քրեական գործով իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է վարչության պետի տեղակալ Գ.Ա-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագների.

1. Չի հետևել ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն, մասնավորապես՝ քննիչը միջոցներ չի ձեռնարկել առգրավելու տուժողի հագուստը և կոշիկները, ինչը հետագայում հնարավոր չի եղել հայտնաբերել և ներկայացնել փորձագետին, ինչի հետևանքով խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Գ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ վարչության պետի լիազորությունների կասեցման պայմաններում շուրջ 1 տարի կատարել

է վարչության պետի պարտականությունները և անմիջական հսկողություն է իրականացրել քննչական վարչության 12 քննիչների աշխատանքների նկատմամբ, շեշտը դնելով ծանր և առանձնապես ծանր դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերին: Նման պայմաններում հնարավորինս փորձել է պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի պահանջները: Բացի այդ, նախկին ավագ քննիչ Վ.Մ-ն հանդիսացել է փորձառու քննիչ, վստահել է նրան:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը հաշվի առնելով տվյալ գործի փաստական հանգամանքները որոշեց, որ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով բացակայում են կոպիտ խախտման հատկանիշները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քննիչի վարույթում քննվող քրեական գործով քննչական գործողությունների կատարմանը ժամանակին չհետևելու դրվագով Գ.Ա-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական
վարչության ՀԿԳ քննիչ Ս.Ս-ի վերաբերյալ

26 սեպտեմբերի 2018թ. ԿՀՈ 25
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ս.Ս-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցող Հ.Հայրապետյանին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին ան-վտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ դատախազության Արագածոտնի մարզի ավագ դատախազ Վ.Մելքոնյանի միջնորդությունը՝ վարույթում քննված թիվ 29157418 քրեական գործով ՀԿԳ քննիչ Ս.Ս-ի կողմից քրեադատավարական օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ՀԿԳ քննիչ Ս.Ս-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

Թիվ 29157418 քրեական գործը 04.06.2018թ. վարույթ ընդունելուց հետո մինչև 18.07.2018թ.-ը՝ շուրջ 45 օր, դրսևորել է անգործություն, հանցագործության դեպքով հաղորդում ներկայացրած Արամ Ղլեչյանին չի հարցաքննել դեպքի հանգամանքների շուրջ, չի պարզել տեխնիկական սպասարկում իրականացրած և 2018թ. մայիսի 12-ին շրջայցի ժամանակ արագաչափ սարքի վնասվածքները հայտնաբերած անձանց ինքնությունները և նրանց չի հարցաքննել դեպքի հանգամանքների շուրջ, այդպիսով՝ քննիչ Ս.Ս-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 27-րդ հոդվածի 1-ին մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ ՀԿԳ քննիչ Ս.Ս-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ հեռախոսակապի մեջ է գտնվել Ա.Ղլեչյանի հետ, սակայն վերջինիս ՀՀ-ում որոշակի ժամանակ չգտնվելու, նրա և իր աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով չի ծանուցել և չի հրավիրել հարցաքննության:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով ՀԿԳ քննիչ Ս.Ս-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ թիվ 29157418 քրեական գործի նյութերում առկա չեն տեղեկություններ, կազմված արձանագրություններ և գրություններ քննիչ Ս.Ս-ի և հաղորդում տված Ա.Ղլեչյանի միջև տեղի ունեցած հեռախոսային խոսակցությունների, վերջինիս կողմից ՀՀ-ից բացակայելու վերաբերյալ, արդյունքում՝ քննիչ Ս.Ս-ն շուրջ 45 օր հանցագործության դեպքով հաղորդում ներկայացրած Արամ Ղլեչյանին չի հարցաքննել, չի պարզել տեխնիկական սպասարկում իրականացրած և 2018թ. մայիսի 12-ին շրջայցի ժամանակ արագաչափ սարքի վնասվածքները հայտնաբերած անձանց ինքնությունները և նրանց չի հարցաքննել: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ս.Ս-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. N29157418 քրեական գործով շուրջ 45 օր հանցագործության դեպքով հաղորդում ներկայացրած Ա.Ղլեչյանին չհարցաքննելու, ինչպես նաև՝ 2018թ. մայիսի 12-ին շրջայցի ժամանակ արագաչափ սարքի վնասվածքները հայտնաբերած անձանց ինքնությունները չպարզելու և նրանց չհարցաքննելու դրվագով ՀԿԳ քննիչ Ս.Ս-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության պետ Կ.Շ-ի և ՀԿԳ քննիչ Հ.Ն-ի վերաբերյալ

26 սեպտեմբերի 2018թ. ԿՀՈ 26

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական Կ.Շ-ի և ՀԿԳ քննիչ, առաջին դասի խորհրդական Հ.Ն-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցող Հ.Հայրապետյանին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին ան-վտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հանձնարարությունը՝ վարույթում քննված թիվ 58211218 քրեական գործով ՀԿԳ քննիչ Հ.Ն-ի կողմից քրեադատավարական օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Արագածոտնի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Հ.Ն-ին և նույն վարչության պետ Կ.Շ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Քննիչ Հ.Ն-ն թիվ 58211218 քրեական գործը 03.07.2018թ. վարույթ ընդունելուց հետո առ 31.07.2018թ.-ը պատշաճ չի ծանոթացել քրեական գործի նյութերին, նախաքննությունն իրականացրել է թերի, ոչ համաչափ, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չի կատարել, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի, կազմած քննչական պլանը կրել է ձևական բնույթ, արդյունքում՝ քննիչ Հ.Ն-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 12.03.2018թ. թիվ 11-Լ հրամանի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ ՀԿԳ քննիչ Հ.Ն-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ

չընդունեց մեղքը՝ հավելելով, որ մի շարք գործողություններ եղել են պլանավորված և կատարման ենթակա, գործով ապացուցողական նշանակություն ունեցող ցուցմունքներ տված երեք վկաներին կրկին կանչել է որպես վկա հարցաքննության, քանի որ անհրաժեշտություն է եղել նրանց հարցաքննել կրակոցի հանգամանքի վերաբերյալ, սակայն, գործն ուսումնասիրելուց հետո մոռացել է, որ վերջիններս արդեն իսկ որպես վկա հարցաքննված են եղել: Իսկ տուժողի հեռախոսահամարի վերծանումների ստանալը, նրա մասնակցությամբ քննչական փորձարարություն կատարելը և գազալցակայանի աշխատակիցներին հարցաքննելը պլանավորած է եղել, սակայն իր կազմած քննչական պլանում նշումներ չի կատարել դրանց վերաբերյալ:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով ՀԿԳ քննիչ Հ.Ն-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Հ.Ն-ն թիվ 58211218 քրեական գործը 03.07.2018թ. վարույթ ընդունելուց հետո առ 31.07.2018թ.-ը չի կատարել հրատապություն և առաջնահերթություն ներկայացնող քննչական ու դատավարական այլ գործողություններ, մասնավորապես՝ միջնորդություն չի հարուցել դատարան և չի պարզել տուժողի հեռախոսահամարի ելքային և մուտքային հեռախոսազանգերի, սպասարկած ալեհավաք կայանների վերծանումները, տուժողի մասնակցությամբ չի կատարել քննչական փորձարարություն՝ վեր հանելու դեպքի հանգամանքները, չի հարցաքննել գազալցակայանի աշխատակիցներին, որոնց վերաբերյալ նշումներ չի կատարել նաև իր կազմած քննչական պլանում: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Հ.Ն-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Վարչության պետ Կ.Շ-ն չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա ՀԿԳ քննիչ Հ.Ն-ի վարույթում քննված թիվ 58211218 քրեական գործով քննչական գործողությունները օրինական և ժամանակին կատարելու նկատմամբ, որպիսի պայմաններում՝ իրեն անմիջականորեն ենթակա քննիչին ցուցումներ չի տվել նրա վարույթում գտնվող քրեական գործով առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ, քննիչի կազմած քննչական պլանը կրել է ձևական բնույթ, չի հետևել ենթակա քննիչի պլանավորման աշխատանքների պատշաճ կազմակերպման և արդյունավետության ապահովմանը, արդյունքում՝ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 12.03.2018թ. թիվ 11-Լ հրամանի 14-րդ կետի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ վարչության պետ Կ.Շ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ նշեց մի շարք հանգամանքներ՝ հավելելով, որ 03.07.2018թ. քրեական գործի հետագա նախաքննությունը հանձնարարել է քննիչ Հ.Ն-ին՝

հանձնարարելով կատարել պլանավորված քննություն, կազմել քննչական պլան, կատարվելիք քննչական գործողությունների մասին զեկուցել: Սակայն, քննիչն իրեն չի զեկուցել քրեական գործով երեք վկաների խուսափողական ցուցմունքներ տալու մասին և ինքը տեղյակ չի եղել: Ընդունեց, որ քրեական գործով անհրաժեշտ էր կատարել հրատապություն և առաջնահերթություն ներկայացնող քննչական գործողություններ, մասնավորապես՝ միջնորդություն հարուցել դատարան և պարզել տուժողի հեռախոսահամարի ելքային և մուտքային հեռախոսազանգերի, սպասարկած ալեհավաք կայանների վերծանումները, տուժողի մասնակցությամբ չի կատարել քննչական փորձարարություն՝ վեր հանելու դեպքի հանգամանքները, հարցաքննել գազալցակայանի աշխատակիցներին:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով վարչության պետ Կ.Շ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Կ.Շ-ն չի հետևել քննիչ Հ.Ն-ի կողմից թիվ 58211218 քրեական գործով հրատապություն և առաջնահերթություն ներկայացնող քննչական ու դատավարական այլ գործողություններ, մասնավորապես՝ դատարան միջնորդություն հարուցելու և տուժողի հեռախոսահամարի ելքային և մուտքային հեռախոսազանգերի, սպասարկած ալեհավաք կայանների վերծանումները պարզելու, տուժողի մասնակցությամբ քննչական փորձարարություն կատարելու և գազալցակայանի աշխատակիցներին հարցաքննելու նկատմամբ: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ վարչության պետ Կ.Շ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. N58211218 քրեական գործով՝ 03.07.2018թ. առ 31.07.2018թ.-ը հրատապություն և առաջնահերթություն ներկայացնող քննչական և դատավարական այլ գործողություններ չկատարելու դրվագով Արագածոտնի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Հ.Ն-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2. N58211218 քրեական գործով իրեն անմիջականորեն ենթակա քննիչ Հ.Ն-ի կողմից հրատապություն և առաջնահերթություն ներկայացնող

քննչական ու դատավարական այլ գործողությունների կատարմանը չհետևելու դրվագով Արագածոտնի մարզային քննչական վարչության պետ Կ.Շ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 1):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության քննիչներ Ա.Ս-ի, Ն.Ա-ի և վարչության պետի տեղակալ Կ.Թ-ի վերաբերյալ

26 սեպտեմբերի 2018թ. ԿՀՈ 27

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության քննիչներ Ա.Ս-ի, Ն.Ա-ի և նույն վարչության պետի տեղակալ Կ.Թ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Արարատի մարզի դատախազի տեղակալ Հ.Նիկողոսյանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ քննիչներ Ա.Ս-ի, Ն.Ա-ի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի հատկանիշներով քննված թիվ 27157318 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջիններս իրենց լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ա.Ս-ին, ավագ քննիչ Ն.Ա-ին և վարչության պետի տեղակալ Կ.Թ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Քննիչ Ա.Ս-ն քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ ժամանակին չի կատարել, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի, մասնավորապես չի ստացել առերևույթ հանցանք կատարած անձ Գ.Սարգսյանի հեռախոսահամարի մուտքային և ելքային հեռախոսազանգերի վերծանումները, ինչպես նաև լրացուցիչ չի զննել դեպքի վայրը՝ ենթադրյալ մետաղյա խողովակի հայտնաբերման ուղղությամբ, այդ մասով առարկայական հանձնարարություն չի տվել հետաքննության մարմնին: Արդյունքում քննիչի կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Ա.Ս-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ նախաքննության ընթացքում հարցաքննել է 10-ից ավել անձանց, դեպքի հետ կապված մի շարք հանգամանքներ պարզելու համար օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար հանձնարարություններ է տվել ոստիկանության Արտաշատի բաժնին: Ինչ վերաբերում է վերծանումները չստանալուն և դեպքի վայրի լրացուցիչ զննությանը, Ա.Ս-ն հայտնեց, որ պլանավորել է կատարել հիշյալ գործողությունները, սակայն այլ ստորաբաժանում տեղափոխվելու կապակցությամբ չի հասցրել դրանք կատարել:

Ըստ էության Կարգապահական հանձնաժողովին նույնաբովանդակ բացատրություն տվեց նաև Ա.Ս-ի անմիջական ղեկավար, Արարատի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Կ.Թ-ն, ավելացնելով, որ քննարկվող ժամանակահատվածում քննչական վարչությունը աշխատել է ծանրաբեռնված, քանի որ որոշ քննիչներ գտնվել են արձակուրդում, ունեցել են նաև այլ ստորաբաժանում գործուղված քննիչ և նման պայմաններում ավելացել են քննիչների վարույթում քննվող քրեական գործերի թիվը:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի հատկանիշներով քննվող քրեական գործով քննիչը չի իրականացրել հրատապություն ներկայացնող քննչական գործողություններ, մասնավորապես՝ չի ստացել առերևույթ հանցանք կատարած անձ Գ.Սարգսյանի հեռախոսահամարի մուտքային և ելքային հեռախոսազանգերի վերծանումները, ինչպես նաև լրացուցիչ չի զննել դեպքի վայրը՝ ենթադրյալ մետաղյա խողովակի հայտնաբերման նպատակով, որպիսի պայմաններում նրա արարքում առկա է կարգապահական խախտման փաստի առկայությունն ու մեղավորությունը:

2. Ավագ քննիչ Ն.Ա-ն 08.06.2018թ. քրեական գործը վարույթ ընդունելուց հետո, նույն օրը նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն է ներկայացրել Արարատի մարզի դատախազություն, որից հետո առ՝ 11.07.2018թ. քրեական գործով որևէ քննչական և դատավարական գործողություն չի կատարել, այն պայմաններում, երբ 21.06.2018թ. ստացվել է հսկող դատախազի առարկայական ցուցումը: Արդյունքում քննիչի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Ն.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ տվյալ ժամանակահատվածում քննչական վարչության երկու քննիչներ տեղափոխվել են այլ ստորաբաժանում, ունեցել են նաև արձակուրդի մեջ գտնվող քննիչներ և նրանց վարույթում քննվող քրեական գործերը բաժանվել են իրենց միջև և վարույթում քննվող քրեական գործերի քանակը հասել է 13, 14-ի: Այդ ընթացքում անհետաձգելի քննչական գործողություններ է կատարել վարույթում քննվող մյուս քրեական գործերով, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված թիվ 27161818 քրեական գործով ձերբակալել է հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին, նույն գործով կատարել այլ առաջնահերթ քննչական և դատավարական գործողություններ և չի հասցրել գործողություններ կատարել թիվ 27157318 քրեական գործով:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Ն.Ա-ի անմիջական ղեկավար, Արարատի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Կ.Թ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ քննարկվող ժամանակահատվածում քննչական վարչությունում առկա 11 քննիչներից նախաքննություն են իրականացրել միայն 6 քննիչներ, որից 2-ը՝ իգական սեռի և նման պայմաններում քննիչների ծանրաբեռնվածությունը ավելացել է: Ստեղծված իրավիճակում Ն.Ա-ն ծանոթացել է նոր մակագրված քրեական գործերին, պլանավորել կատարվելիք գործողությունները և ըստ առաջնահերթության ու հրատապության կատարել քննչական և դատավարական գործողություններ, հետևապես՝ ֆիզիկապես չի հասցրել քննչական և դատավարական գործողություններ կատարել թիվ 27157318 քրեական գործով, իսկ հսկող դատախազի ցուցումը 21.06.2018թ. ստանալուց 4 օր անց մեկնել է արձակուրդ:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ մի քանի քրեական գործեր միաժամանակյա քննիչին հանձնարարելու պայմաններում շուրջ 19 աշխատանքային օր քրեական գործով քննչական և դատավարական գործողություններ չկատարելու դրվագով ավագ քննիչ Ն.Ա-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը:

3. Արարատի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Կ.Թ-ն չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա ավագ քննիչ Ա.Ս-ի վարույթում քննվող քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն, ինչով իսկ խախտվել է ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Կ.Թ-ն Կարգապահական հանձնաժողովին տվեց նույնաբովանդակ բացատրություն ինչ նախկին դրվագներով, նշելով, որ նախաքննության ընթացքում պլանավորել են ստանալ Գ.Ս-ի հեռախոսազանգերի վերծանումները, ինչպես լրացուցիչ զննել դեպքի վայրը, սակայն քննիչի այլ ստորաբաժանում տեղափոխվելու կապակցությամբ չեն հասցրել:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Կ.Թ-ն չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով հրատապություն պահանջող քննչական գործողությունները ժամանակին կատարելուն, որպիսի պայմաններում նրա արարքում առկա է կարգապահական խախտման փաստն ու մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ ժամանակին չկատարելու դրվագով Ա.Ս-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

2. Քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ ժամանակին չկատարելու, ինչպես նաև հսկող դատախազի ցուցումը չկատարելու դրվագով Ն.Ա-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

3. Ավագ քննիչ Ա.Ս-ի վարույթում քննվող քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն չհետևելու

դրվագով Կ.Թ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Գ.Ս-ի վերաբերյալ
(կարգապահական խախտման փաստի բացակայության մասին)

26 սեպտեմբերի 2018թ. ԿՀՈ 28
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Գ.Ս-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության պետի զեկուցագրի առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ավագ քննիչ Գ.Ս-ի վարույթում քննված թիվ 27164218, 27200918 և 27064018 քրեական գործերով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Գ.Ս-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 314-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ՝ 27164218 քրեական գործով նախաքննությունն իրականացրել է թերի, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չի կատարել, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի: Արդյունքում քննիչի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Գ.Ս-ն Կարգապահական հանձնաժողովին նախ բացատրություն տվեց, որ 2018թ. հուլիսի 17-ին և 18-ին վարույթ է ընդունել միանգամից 4 քրեական գործեր և սկսել ծանոթանալ դրանց, ընդ որում մակագրված գործերից թիվ 27151218 քրեական գործը բաղկացած է եղել 4 հատորից, որին ծանոթանալու, անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ կատարելու համար իրենից պահանջվել է որոշակի ժամանակ: Թիվ 27164218 քրեական գործը վարույթ է ընդունել 17.07.2018թ., որից հետո՝ 23.07.2018թ. հարցաքննել է դիմումատու Հ.Հարությունյանին: 30.07.2018թ. քրեական գործը զեկուցագրով ներկայացրել է վարչության պետին՝ առողջական խնդիրներով պայմանավորված, քրեական գործի հետագա նախաքննության կատարումը մեկ այլ քննիչի հանձնարարելու մասին, իսկ 01.08.2018թ. ենթարկվել է վիրահատության, բացվել է անաշխատունակության թերթիկ:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քրեական գործով 2018թ. հուլիսի 17-ից մինչև հուլիսի 30-ն ընկած ժամանակահատվածում առանձին քննչական գործողություններ չկատարելու դրվագով քննիչի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը՝ նկատի ունենալով, որ շուրջ 8 աշխատանքային օրվա ընթացքում հարցաքննել է մեկ վկայի և առողջական խնդիրներով պայմանավորված 30.07.2018թ. քրեական գործի հետագա նախաքննության կատարումը հանձնարարվել է այլ քննիչի, քննիչի գործողություններն ապացույցի կորստի չեն հանգեցրել:

2. ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 314-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ՝ 27200918 քրեական գործով նախաքննությունն իրականացրել է թերի, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չի կատարել, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի: Արդյունքում քննիչի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Գ.Ս-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ քրեական գործը վարույթ է ընդունել 2018թ. հուլիսի 18-ին և նույն օրը Արարատի մարզի դատախազությունից ստացված գրության համաձայն՝ քրեական գործն ուղարկել է մարզի դատախազություն և հետ է ստացել 2018թ. հուլիսի

23-ին, որից հետո կրկին պայմանավորված առողջական խնդիրներով 30.07.2018թ. քրեական գործը զեկուցագրով ներկայացրել է վարչության պետին՝ չհասցնելով կատարել քննչական գործողություններ:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քրեական գործով 2018թ. հուլիսի 18-ից մինչև հուլիսի 30-ն ընկած ժամանակահատվածում շուրջ 7 աշխատանքային օրվա ընթացքում առանձին քննչական գործողություններ չկատարելու դրվագով քննիչի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը, քննիչի գործողություններն ապացույցի կորստի չեն հանգեցրել:

3. ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ և 118-րդ հոդվածներով հարուցված թիվ՝ 27164018 քրեական գործով նախաքննությունն իրականացրել է թերի, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չի կատարել, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի: Արդյունքում քննիչի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Գ.Ս-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ քրեական գործը վարույթ է ընդունել 2018թ. հուլիսի 18-ին և նույն օրը որոշում է կայացրել հաղորդում տված անձ Ա.Մաթևոսյանին տուժող ճանաչելու մասին, որից հետո՝ 26.07.2018թ. հարցաքննել է տուժողին և վերջինիս ծանոթացրել քրեական գործով ստացված դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունների հետ: Իսկ 30.07.2018թ. քրեական գործը զեկուցագրով ներկայացրել է վարչության պետին:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քրեական գործը 2018թ. հուլիսի 18-ին վարույթ ընդունելուց հետո քննիչը որոշում է կայացրել Ա.Մաթևոսյանին տուժող ճանաչելու մասին, այնուհետև հարցաքննել է նրան և ծանոթացրել ստացված դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունների հետ, որպիսի պայմաններում քննիչի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ.

որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 27164218, 27200918 և 27064018 քրեական գործերով 2018թ. հուլիսի 17-ից մինչև 30-ն ընկած ժամանակահատվածում առանձին քննչական գործողություններ չկատարելու դրվագով ավագ քննիչ Գ.Ս-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Կենտրոն և Նորք Մարաշ
վարչական շրջանների քննչական բաժնի պետի տեղակալ, ներկայում՝
քննչական բաժնի պետ Գ.Հ-ի վերաբերյալ

17 հոկտեմբերի 2018թ. ԿՀՈ 29
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի տեղակալ, ներկայում՝ քննչական բաժնի պետ Գ.Հ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ ՔԿ նախագահի տեղակալ Ա.Պողոսյանի ՝ ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի տեղակալ (ներկայում՝ քննչական բաժնի պետ) Գ.Հ-ի վարույթում քննվող թիվ 13168518 քրեական գործով վերջինիս կողմից նյութական և դատավարական նորմերի պահանջների խախտումներ թույլ տալու վերաբերյալ միջնորդությունը՝ ծառայողական քննություն անցկացնելու մասին:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Գ.Հ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագով.

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի տեղակալ (ներկայում՝ քննչական բաժնի պետ) Գ.Հ-ի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով քննվող թիվ 13168518 քրեական գործով նախաքննության ժամկետը լրացել է 12.08.2018 թվականին, սակայն նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ նոր միջնորդություն չի հարուցել և բաց թողնված ժամկետի ընթացքում՝

12.08.2018թ-ից 27.08.2018թ-ն ընկած ժամանակահատվածում, կատարել է 2 քննչական և 1 դատավարական գործողություններ, կողմերին հայտարարել է նախաքննության ավարտի մասին և ծանոթացման ներկայացրել քրեական գործի նյութերը: Արդյունքում՝ Գ.Հ-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերի, 197-րդ հոդվածի 5-6-րդ մասերի, ինչպես նաև՝ ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի 8-րդ կետի պահանջները: Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Գ.Հ-ն կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց իր թերացումը՝ պատճառաբանելով, որ դա պայմանավորված է եղել աշխատանքային ծանրաբեռնվածությամբ, չի նկատել, որ դատավարական հսկողություն իրականացնող դատախազի կողմից նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդությունը բավարարվել է մասնակի՝ մեկ ամիս ժամանակով:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Գ.Հ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ թիվ 13168518 քրեական գործով վարույթն իրականացրած Գ.Հ-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերի, 197-րդ հոդվածի 5-6-րդ մասերի, ինչպես նաև՝ «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց Գ.Հ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ մասի 2-րդ կետով և 48-50-րդ մասերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 13168518 քրեական գործով նախաքննության ժամկետը 12.08.2018 թվականին լրանալուց առաջ ժամկետը երկարացնելու վերաբերյալ նոր միջնորդություն չհարուցելու և բաց թողնված ժամկետի

ընթացքում՝ 12.08.2018թ-ից 27.08.2018թ-ն ընկած ժամանակահատվածում քննչական և դատավարական գործողություններ կատարելու, ինչպես նաև՝ ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի պահանջները խախտելու դրվագով Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի տեղակալ (ներկայում՝ քննչական բաժնի պետ) Գ.Հ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր
վարչության ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ քննիչ Ա.Գ-ի վերաբերյալ

17 հոկտեմբերի 2018թ. ԿՀՈ 30
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ քննիչ Ա.Գ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ ՔԿ նախագահի տեղակալ, ԶՔԳՎ պետ Ա.Կրկյաշարյանի՝ 13.09.2018թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ ՔԿ ԶՔԳՎ ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ քննիչ Ա.Գ-ի վարույթում քննված թիվ 38164817 քրեական գործով նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ Սահմանադրության և քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ա.Գ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

1. Քննիչ Ա.Գ-ն 20.08.2018թ. հեռախոսային խոսակցությունների լսման և ձայնագրառման թույլտվություն ստանալու միջնորդություն է ներկայացրել դատարան, որի նկարագրական մասում նշել է տուժող Հ.Ալավերդյանի կողմից օգտագործվող ճիշտ՝ 098-11-95-75 հեռախոսահամարը, իսկ որոշման եզրափակիչ մասում նշել է քրեական գործի հետ չառնչվող, անհայտ անձի՝ 098-77-95-75 հեռախոսահամարը և ներկայացրել դատարան: Արդյունքում՝ քննիչի գործողությունների հետևանքով գաղտնալսվել է քրեական գործի հետ չառնչվող անհայտ

անձի հեռախոսահամարը, որով քննիչն առերևույթ խախտել է ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նորմերի պահանջները, այն է՝ յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք ու արգելվում է անձին նշված իրավունքներից ապօրինի զրկելը կամ իրավունքները սահմանափակելը:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ա.Գ-ն կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության 14-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները խախտելու հանգամանքները՝ պատճառաբանելով, որ դա պայմանավորված է եղել շտապողականության և ծանրաբեռնվածության հետևանքով: Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Գ-ի արարքում հիշյալ դրվագով առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ քննիչը N 38164817 քրեական գործով խախտել է ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ այն է, յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք և արգելվում է անձին նշված իրավունքներից ապօրինի զրկելը կամ իրավունքները սահմանափակելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. N 38164817 քրեական գործով քրեական գործի հետ չառնչվող, անհայտ անձի հեռախոսահամարը դատարան ներկայացրելու հետևանքով անհայտ անձի հեռախոսահամարը գաղտնալսվելու դրվագով քննիչ Ա.Գ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Գ.Մ-ի և նույն վարչության պետ Թ.Ջ-ի վերաբերյալ

17 հոկտեմբերի 2018թ. ԿՀՈ 31

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Գ.Մ-ի և նույն վարչության պետ Թ.Ջ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչությունից ստացված միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Արմավիրի մարզային քննչական վարչության նախկին ՀԿԳ քննիչ, ներկայումս ՀԿԳ ավագ քննիչ Գ.Մ-ի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով քննված թիվ 65154917 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Գ.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

1. Քրեական գործը 2017թ. դեկտեմբերի 19-ից մինչ 2018թ. հունվարի 29-ը մնացել է անշարժ վիճակում, այսինքն՝ քննիչի կողմից առանց իրավաչափ նպատակի տևական ժամկետով դրսևորվել է անգործություն, անհրաժեշտ դատավարական գործողություններ չեն կատարվել: Արդյունքում քննիչի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Գ.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ տակտիկական նկատառումներից և քրեական գործի շահերից ելնելով որոշվել է որոշ ժամանակ քրեական գործով քննչական և դատավարական գործողություններ չկատարել, նկատի ունենալով, որ առերես հարցաքննության ժամանակ տուժողը հրաժարվել է նախկինում տված մերկացնող ցուցմունքներից, ուստի որոշվել է որոշ ժամանակ տուժող կողմի մասնակցությամբ քննչական և դատավարական գործողություններ չկատարել: Քննիչը հայտնեց նաև, որ իր ընտրած մարտավարությունը տվել է դրական արդյունք և որոշ ժամանակ անց տուժող կողմը կրկին պնդել է նախկինում տված ցուցմունքը:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչն առանց իրավաչափ նպատակի տևական ժամկետով դրսևորել է անգործություն, անհրաժեշտ դատավարական գործողություններ չի կատարել՝ անկախ դրա հետևանքից, որպիսի պայմաններում քննիչի արարքում առկա է կարգապահական խախտման փաստն ու նրա մեղավորությունը:

2. Իր հերթին, Արմավիրի մարզային քննչական վարչության պետ Թ.Ջ-ն չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն, ինչով իսկ անտեսվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Թ.Ջ-ն նախապես իրազեկված լինելով ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի նիստի վերաբերյալ չէր ներկայացել՝ արձակուրդում գտնվելու և առողջական խնդիրներով պայմանավորված: Միաժամանակ ներկայացրել էր անաշխատունակության թերթիկի պատճենը, առ այն, որ 2017թ. դեկտեմբերի 11-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 26-ը ներառյալ ստացիոնար բուժման մեջ է գտնվել «Էրեբունի» բժշկական կենտրոնում:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Արմավիրի մարզային քննչական վարչության պետ Թ.Ջ-ն առողջական խնդիրներով պայմանավորված, օբյեկտիվորեն զրկված է եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածով իրեն վերապահված լիազորությունները պատշաճ իրականացնելուց, որպիսի պայմաններում նրա արարքում բացակայում է կարգապահական խախտման

հատկանիշները: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով քննված քրեական գործով առանց իրավաչափ նպատակի տևական ժամկետով անգործություն դրսևորելու դրվագով Գ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

2. Ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով քննչական գործողությունների կատարմանը չհետևելու դրվագով Թ.Ջ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական
վարչության պետ Գ.Ս-ի վերաբերյալ

22. հոկտեմբերի 2018թ. ԿՀՈ 32
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության նախկին պետ, ներկայումս ՀՀ ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչության վերահսկողության վարչության պետ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Գ.Ս-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հանձնարարությամբ՝ ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչությունից ստացված զեկուցագրի առթիվ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության պետ Գ.Ս-ն պատշաճ չի իրականացրել վարչության և ենթակա ստորաբաժանումների ղեկավարումն ու աշխատանքների կազմակերպումը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Արարատի մարզային քննչական վարչության պետ Գ.Ս-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների. **1. 2018թ. Արարատի մարզային քննչական վարչությունում աշխատանքների բնականոն ընթացքը խախտվել է, արձանագրվել են աշխատանքի արդյունքների բացասական շարժընթաց, վարչության պետ Գ.Ս-ն չի տիրապետել ստեղծված իրավիճակին, չի միջամտել և չի փորձել կարգավորել առաջացած խնդիրները և դրա արդյունքում, անհարկի ձգձգվել են նախաքննության ժամկետները, գործերի ընթացքը չի**

որոշվել կամ որոշվել է ձգձգումներով, դատավարական խախտումներով, ինչի արդյունքում, մարզի դատախազը՝ դատավարության մասնակիցների և արդարադատության շահերին հասցվող վնասը նվազագույնի հասցնելու համար միջամտել է և փորձել, դատախազական ներգործության միջոցներ կիրառելով, կարգավորել խնդիրները: Արդյունքում՝ Գ.Ս-ն չի կարողացել կազմակերպել և վերահսկել քննչական մարմնի և դրա ստորաբաժանումների աշխատանքները, չի ապահովել առաջ եկած խնդիրների լուծումը, չպահպանելով ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 10.06.2015թ. թիվ 55 Լ հրամանով հաստատված ՀՀ քննչական կոմիտեի կանոնադրության 14-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերի պահանջները: Վարչության պետ Գ.Ս-ի նման օրինակ գործելաոճի և իր վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու արդյունքում իր համակարգման մարմնում տիրել է անառողջ աշխատանքային հարաբերություններ և բարոյահոգեբանական մթնոլորտ, ինչի մասին է վկայում՝ Արարատի մարզային քննչական վարչության մի շարք ծառայողների կողմից ՀՀ Վարչապետին հասցեագրած դիմումը, ինչպես նաև՝ ՀՀ ՔԿ ղեկավարությանը ներկայացված զեկուցագրերը: Հիշյալ դրվագներով առերևույթ կարգապահական խախտումներ թույլ տալու վերաբերյալ Գ.Ս-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ 2017թ-ին Արարատի մարզային քննչական վարչությունը 2016թ-ի արդյունքներով ճանաչվել է լավագույն ստորաբաժանում: 2018 թվականի 1-ին կիսամյակում քննչական վարչությունում աշխատանքների բնականոն ընթացքի խախտվելը և աշխատանքների արդյունքների բացասական շարժընթաց արձանագրվելը պայմանավորված են եղել Արարատի մարզային քննչական վարչության մի շարք ծառայողների կողմից՝ քննիչ Ա.Ս-ի վարչության պետի տեղակալի թափուր հաստիքին նշանակվելու նրա հավակնությունը մերժելու և վերջինիս կողմից մյուս ծառայողների վրա ընկերական կապերից ելնելով ազդելու արդյունքում ըմբոստանալու, իր դեմ տրամադրելու և այդ կերպ, ի դեմս իրեն՝ վարչության պետի դիրքերը թուլացնելու և աշխատանքները կազմալուծելու հետևանքով: Վերջիններիս գործողությունները խրախուսվել և աջակցվել են մարզի դատախազության դատախազներից երկուսի կողմից, ովքեր նախկինում եղել են Արարատի մարզային քննչական վարչության քննիչներ և նշված ծառայողների ընկերները, իսկ քննիչների դիմումների բովանդակության մեջ ակնհայտ է եղել դատախազների

ձեռագիրը: Հատկանշական համարեց, որ Արարատի մարզային քննչական վարչությունում բացասական ցուցանիշներն արձանագրվել են ոչ թե 2018 թվականի 1-ին եռամսյակում, այլ՝ երկրորդ, այսինքն՝ 2018թ. ապրիլ ամսից հետո, երբ մարզի դատախազության հետ հարաբերությունները սրվել են՝ կապված աշխատանքային գործունեության ընթացքում առաջացած անհամաձայնությունների հետ, որոնց առիթը հանդիսացել է հենց դատախազության գործելաոճը: Իր համակարգման մարմնում տիրող անառողջ աշխատանքային հարաբերությունների և բարոյահոգեբանական մթնոլորտի հետ կապված Գ.Ս-ն ըստ էության հանդես եկավ նույն պատճառաբանություններով՝ կապված Արարատի մարզային քննչական վարչության մի շարք ծառայողների կողմից ըմբոստանալու հետ: Հավելեց նաև, որ մինչ դատախազության հետ հարաբերությունները սրվելը՝ մարզի դատախազի հետ իր առաջարկով շրջել են Արարատի մարզային քննչական վարչության ենթակա ստորաբաժանումներում, քննարկել մի շարք հարցեր, այդ թվում՝ քրեական գործերով նախաքննության ընթացքի վերաբերյալ և տրվել են լուծումներ: Իսկ դատախազության հետ հարաբերությունների լարման պատճառ է հանդիսացել նաև, որ վերջիններս ցանկացել են քննչական մարմնին զրկել ինքնուրույնությունից, անհիմն ծանրաբեռնել են նյութերի նախապատրաստմամբ, ինչի արդյունքում՝ միայն ենթակա ստորաբաժանումներում նախորդ ժամանակահատվածների համեմատ զգալիորեն՝ աճել են նյութերի նախապատրաստման քանակը:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Գ.Ս-ին Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Գ.Ս-ի կողմից վարչության և ենթակա ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպումն ու վերահսկումն ոչ պատշաճ իրականացնելու արդյունքում խախտվել է 2018թ. Արարատի մարզային քննչական վարչությունում աշխատանքների բնականոն ընթացքը, արձանագրվել է աշխատանքի արդյունքների բացասական շարժընթաց, մասնավորապես՝ 2016 և 2017թթ. լրացուցիչ նախաքննության է վերադարձվել 2 քրեական գործ, իսկ 2018թ. առաջին կիսամյակում՝ այդ գործերի թիվը կազմել է 8: Եթե 2016-2017թթ. վերացվել է 5 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումներ, ապա՝ 2018թ. առաջին կիսամյակում այն կազմել է 17: 2016-2017թթ. 1 քննիչ է հեռացվել քրեական գործով քրեական դատավարությանը մասնակցելուց, իսկ 2018թ. առաջին կիսամյակում այն կազմել է՝ 17:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ վերոնշյալ դրվագով Գ.Ս-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Պատշաճ հսկողություն չի իրականացրել ՀՀ ՔԿ նախագահի 14.12.2017թ. N178-L հանձնարարականի պահանջների կատարման նկատմամբ, որի արդյունքում 01.01.2018-01.07-2018թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչությունում հարուցված և հետաքննության մարմնից ստացված 310 քրեական գործից «Էլեկտրոնային նախաքննություն» ծրագրում գրանցվել է 249 քրեական գործ՝ 61 գործով պակաս, ինչով իսկ խախտել է ՀՀ ՔԿ նախագահի 14.12.2017թ. N178-L հանձնարարականի 2-րդ կետի և ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 10.06.2015թ. թիվ 55 L հրամանով հաստատված ՀՀ քննչական կոմիտեի կանոնադրության 14-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ վարչության պետ Գ.Ս-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ նշեց, որ «Էլեկտրոնային նախաքննություն» ծրագրում հիշյալ քրեական գործերը ժամանակին չմուտքագրելու հետ կապված եղել են տեխնիկական խնդիրներ, որոնք կարգավորելու և քրեական գործերը մուտքագրելու համար առաջացած խնդիրների վերաբերյալ բազմաթիվ անգամներ զանգահարել է ՀՀ ՔԿ կազմակերպական-վերլուծական բաժնի պատասխանատու քննիչին և վերջինիցս ստացել պարզաբանումներ, ուստի, իր մեղավորությունը քննարկվող դրվագով նույնպես չընդունեց: Ուսումնասիրելով նյութերը, լսելով Գ.Ս-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ «Էլեկտրոնային նախաքննություն» ծրագրի հետ կապված՝ 2018թ. 1-ին կիսամյակում առկա են եղել համակարգային ընդհանուր բնույթի տեխնիկական խնդիրներ:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ վարչության պետ Գ.Ս-ի արարքում հիշյալ դրվագով բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Վարչության պետ Գ.Ս-ի անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործով նախաքննության ընթացքում ենթադրյալ հանցանք կատարած անձի արարքին տրվել է ակնհայտ սխալ քրեաիրավական գնահատական՝ վերջինիս մեղադրանք առաջադրելով

ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ինչով իսկ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Արդյունքում՝ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի ցուցումից հետո նոր միայն նշված խախտումը վերացվել է և արարքին տրվել է ճիշտ քրեաիրավական գնահատական:

Հիշյալ դրվագով առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ վարչության պետ Գ.Ս-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ նշեց, որ նախաքննության ընթացքում սկզբնական որակման փուլում ձեռք բերված տվյալները վկայել են առերևույթ հանցանք կատարած անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարում, հետագայում՝ տվյալներ են ստացվել նաև Ա.Հովսեփյանի մարմնական վնասվածքներ ստանալու վերաբերյալ և քանի որ քրեաիրավական որակման առումով եղել են տարակարծություններ, ինքն էլ իր հերթին ծանոթացել է մասնագիտական գրականության: Քրեական գործը քննարկել է նաև ՀՀ ՔԿ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալի հետ և որոշվել է առերևույթ հանցանք կատարած անձ Ց.Սիմոնյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Նկատի ունենալով, որ Կարգապահական հանձնաժողովն իրավասու չէ որոշելու արարքի քրեաիրավական որակումը, ուստի, չի կարող գնահատական տալ սույն դրվագով Գ.Ս-ին վերագրվող առերևույթ կարգապահական խախտմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2018թ. Արարատի մարզային քննչական վարչությունում աշխատանքների բնականոն ընթացքը պատշաճ չկազմակերպելու և չվերահսկելու դրվագով Արարատի մարզային քննչական վարչության

նախկին պետ Գ.Ս-ի արարքներում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 3, դեմ՝ 2):

2.«Էլեկտրոնային նախաքննություն» ծրագրում 01.01.2018-01.07-2018թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչությունում հարուցված և հետաքննության մարմնից ստացված 310 քրեական գործից 61 գործով պակաս մուտքագրելու և ՀՀ ՔԿ նախագահի 14.12.2017թ. N178-Լ հանձնարարականի պահանջների կատարման նկատմամբ պատշաճ հսկողություն չիրականացնելու դրվագով Արարատի մարզային քննչական վարչության պետ Գ.Ս-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

3.Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի ծառայողների վերաբերյալ

31 հոկտեմբերի 2018թ. ԿՀՈ 33
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, Վաղարշապատի քննչական բաժնի պետ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Կ.Խ-ի, քննիչներ՝ արդարադատության երկրորդ դասի խորհրդական Գ.Գ-ի, երրորդ դասի խորհրդական Ն. Մ-ի և երկրորդ դասի խորհրդական Ա. Կ-ի (ներկայում՝ ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողներին, հետա-զոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունները.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչությունից ստացված տեղեկանքը և քաղաքացի Արինե Խաչատրյանի դիմումը՝ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի քննիչներ՝ Գ.Գ-ի, Ն.Մ-ի և Ա.Կ-ի վարույթում քննված N57165418, N57170318, N57106518 և N57105216/1 քրեական գործերով, ինչպես նաև՝ քննիչ Ա.Կ-ի կողմից ջրահեղձության դեպքի առթիվ նախապատրաստած նյութերով, վերջիններիս և քննչական բաժնի պետ Կ.Խ-ի կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչներ՝ Գ.Գ-ին, Ն.Մ-ին, Ա.Կ-ին և քննչական բաժնի պետ Կ.Խ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված N57165418 քրեական գործով, քննիչ Գ.Գ-ն, առանց իրավաչափ նպատակի, տևական ժամկետով դրսևորել է անգործություն, մասնավորապես՝ քրեական գործը 31.05.2018թ. վարույթ ընդունելուց հետո առ 13.07.2018թ.-ը՝ շուրջ 43 օր, որևէ քննչական և այլ դատավարական գործողություններ չի կատարել, որպիսի պայմաններում՝ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Քննիչ Գ.Գ-ի անմիջական ղեկավար Կ.Խ-ն, իր հերթին, չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն, ինչով իսկ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Գ.Գ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ քննարկվող ժամանակահատվածում աշխատել է ծանրաբեռնված, այդ թվում՝ մեկ անձի վերաբերյալ կալանավորական գործ, ուստի, ֆիզիկապես չի հասցրել հիշյալ քրեական գործով գործողություններ կատարել:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ Կարգապահական հանձնաժողովին քննիչ Գ.Գ-ի բացատրությանն ըստ էության նույնաբովանդակ բացատրություն տվեց Կ.Խ-ն՝ հավելելով, որ նշված ժամանակահատվածում ծանրաբեռնված գրաֆիկով աշխատել են ոչ միայն քննիչ Գ.Գ-ն, այլ՝ քննչական բաժնի մյուս քննիչները նույնպես:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Գ.Գ-ին և Կ.Խ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Գ.Գ-ն վարույթում քննված N57165418 քրեական գործով առանց իրավաչափ նպատակի, տևական ժամկետով դրսևորել է անգործություն, 31.05.2018թ. քրեական գործը վարույթ ընդունելուց առ 13.07.2018թ.-ը՝ շուրջ 43 օր, որևէ գործողություններ չի կատարել, որպիսի պայմաններում՝ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Գ.Գ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց նաև, որ քննիչ Գ.Գ-ի անմիջական ղեկավար Կ.Խ-ն, իր հերթին, չի հետևել իրեն անմիջականորեն

ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն, ինչով իսկ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննչական բաժնի պետ Կ.Խ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված N57170318 քրեական գործով քննիչ Ն.Մ-ն, օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, քրեական գործը 04.07.2018թ. վարույթ ընդունելուց առ 27.07.2018թ.-ը՝ շուրջ 23 օր, Ֆ.Խաչատրյանին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չի տվել և դրանից բխող քննչական ու դատավարական այլ գործողություններ չի կատարել, ինչով քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Քննիչ Ն.Մ-ի անմիջական ղեկավար Կ.Խ-ն, իր հերթին, չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն, ինչով իսկ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները: Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ն.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ քննարկվող ժամանակահատվածում աշխատել է ծանրաբեռնված, բացի այդ, բանավոր խոսակցության ժամանակ տուժողից տեղեկացել է, որ վերջինս ցանկանում է հաշտվել Ֆ.Խաչատրյանի հետ, ուստի, սպասել է, որ վերջինս հաշտվի և քրեական գործի ընթացքը որոշվի:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ Կարգապահական հանձնաժողովին քննիչ Ն.Մ-ի բացատրությանն ըստ էության նույնաբովանդակ բացատրություն տվեց Կ.Խ-ն՝ հավելելով, որ նշված ժամանակահատվածում քննիչ Ն.Մ-ն աշխատել է ծանրաբեռնված գրաֆիկով, բացի այդ, վերջինս եղել է սկսնակ քննիչ:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ն.Մ-ին և Կ.Խ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ն.Մ-ն վարույթում քննված N57170318 քրեական գործով, օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, քրեական գործը 04.07.2018թ. վարույթ ընդունելուց առ 27.07.2018թ.-ը՝ շուրջ 23 օր, Ֆ.Խաչատրյանին քրեական դատավարության մասնակցի՝ կասկածյալի կամ

մեղադրյալի կարգավիճակ չի տվել, որպիսի պայմաններում՝ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի (202-203-րդ) հոդվածների պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ն.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը: Կարգապահական հանձնաժողովը պարզեց նաև, որ քննիչ Ն.Մ-ի անմիջական ղեկավար Կ.Խ-ն օժտված չէ անձին կարգավիճակ տալու վերաբերյալ քննիչին ցուցում տալու լիազորությամբ:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննչական բաժնի պետ Կ.Խ-ի արարքում հիշյալ դրվագով բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով N57106518 քրեական գործով քննիչ Ն.Մ-ն, 01.06.2018թ. վարույթ ընդունելուց առ 11.07.2018թ.-ը, դեպքի վայրից վերցված փականով և բանալիներով որոշում չի կայացրել դատահետքաբանական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին, առանց իրավաչափ նպատակի, անհարկի ձգձգելով նախաքննության ժամկետները, ինչով իսկ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Քննիչ Ն.Մ-ի անմիջական ղեկավար Կ.Խ-ն, իր հերթին, չի հետևել քննիչի վարույթում քննվող քրեական գործով գործողությունները ժամանակին կատարելուն, ինչով իսկ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ն.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ տուժողը հայտնել է, որ դեպքի վայրից վերցված փականի վրա արտաքին ներգործության հետքեր չեն եղել, սակայն, փականը և բանալու օրինակը վերցրել է հետագայում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության հարցը քննարկելու համար: Իսկ հանձնաժողովի այն հարցին, թե այդ պարագայում ինչու հետագայում նշանակեց, քննիչ Ն.Մ-ն հիմնավոր պատասխան չտվեց:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ Կարգապահական հանձնաժողովին քննիչ Ն.Մ-ի բացատրությանն ըստ էության նույնաբովանդակ բացատրություն տվեց Կ.Խ-ն:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ն.Մ-ին և Կ.Խ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ն.Մ-ն վարույթում

քննված N57106518 քրեական գործով, 01.06.2018թ. գործը վարույթ ընդունելուց առ 11.07.2018թ.-ը, դեպքի վայրից վերցված փականով և բանալիներով որոշում չի կայացրել դատահետքաբանական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին, առանց իրավաչափ նպատակի, անհարկի ձգձգելով նախաքննության ժամկետները, ինչով իսկ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ն.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց նաև, որ քննիչ Ն.Մ-ի անմիջական ղեկավար Կ.Խ-ն, իր հերթին, չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն, ինչով իսկ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Կ.Խ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

4. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցված N57105216/1 քրեական գործով քննիչ Ա.Կ-ն, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում հրատապություն պահանջող առանձին գործողություններ ժամանակին չի կատարել, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի: Մասնավորապես՝ ձեռք բերելով առերևույթ հանցանք կատարած անձ Ա.Շառոյանի բջջային հեռախոսահամարը, միջնորդություն չի հարուցել դատարան՝ դեպքի ժամանակ վերջինիս բջջային հեռախոսահամարի մուտքային և ելքային հեռախոսազանգերի վերծանումները, դրանց աբոնենտային և սպասարկած ալեհավաք կայանների տվյալները ստանալու թույլտվության վերաբերյալ, միջոցներ չի ձեռնարկել պարզելու, թե այդ ընթացքում ինչ այլ բջջային հեռախոսահամարներ է օգտագործվել Ա.Շառոյանի կողմից: Բացի այդ, նախաքննության ընթացքում ստացված դատամատնադրոշմային փորձաքննության եզրակացության պայմաններում քննիչը որոշում չի կայացրել Ա.Շառոյանի մատնահետքերի նմուշները ստանալու և դատամատնադրոշմային փորձաքննություն նշանակելու մասին, ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ «ՍԷԿՏ» համակարգով չի ստուգել Ա.Շառոյանի

կողմից ՀՀ պետական սահմանը հատելու և վերադառնալու հանգամանքները: Արդյունքում՝ քննիչ Ա.Կ-ի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 244-րդ և 253-256-րդ հոդվածների պահանջները:

Քննիչ Ա.Կ-ի անմիջական ղեկավար Կ.-ն, իր հերթին, չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում գտնվող քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն, ինչով իսկ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Կ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց խախտումներ թույլ տալու հանգամանքը, պատճառաբանելով, որ դա պայմանավորված է եղել զուտ իր ծանրաբեռնվածության հետևանքով և ֆիզիկապես չի հասցրել կատարել նշված գործողությունները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ Կարգապահական հանձնաժողովին քննիչ Ա.Կ-ի բացատրությանն ըստ էության նույնաբովանդակ բացատրություն տվեց Կ.Խ-ն՝ հավելելով, որ քննարկվող ժամանակահատվածում աճել է քրեական գործերի քանակը, ունեցել են թափուր հաստիքներ, նորանշանակ քննիչներ և ստեղծված պայմաններում ֆիզիկապես հնարավորություն չի ունեցել պատշաճ իրականացնել իր լիազորությունները:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ա.Կ-ին և Կ.Խ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը միջոցներ չի ձեռնարկել առերևույթ հանցանք կատարած անձ Ա.Շառոյանի այլուրեքությունը ստուգելու ուղղությամբ, մասնավորապես՝ չի ստացել վերջինիս բջջային հեռախոսահամարի մուտքային և ելքային հեռախոսազանգերի վերծանումները, դրանց աբոնենտային և սպասարկած ալեհավաք կայանների տվյալները: Բացի այդ, որոշում չի կայացրել ստանալու Ա.Շառոյանի մատնահետքերի նմուշները և չի նշանակել դատամատնադրոշմային փորձաքննություն: Ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ «ՍԷԿՏ» տեղեկատվական համակարգով չի ստուգել Ա.Շառոյանի կողմից ՀՀ պետական սահմանը հատելու և վերադառնալու հանգամանքները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Ա.Կ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց նաև, որ քննիչ Ա.Կ-ի անմիջական ղեկավար Կ.Խ-ն, իր հերթին, չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով առերևույթ հանցանք կատարած անձ Ա.Շառոյանի բջջային հեռախոսահամարների վերծանումները, մատնահետքերի նմուշները ստանալուն և դատամատնադրոշմային փորձաքննություն նշանակելուն: Արդյունքում՝ Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Կ.Խ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

5. Քննիչ Ա.Կ-ն Գ.Սահակյանի ջրահեղձության դեպքի առթիվ նախապատրաստված նյութերով դեպքի վայրի զննությունը կատարել է խիստ մակերեսորեն, մասնավորապես՝ զննության արձանագրության մեջ բացակայել են դեպքի վայր հանդիսացող տարածքի ընդհանուր և մասնավոր նկարագրությունն ու դեպքի հանգամանքները բնութագրող չափագրական տվյալները, այն է՝ ականատես Ա.Կարապետյանի մատնանշած վայրի, ափի բարձրությունը ջրի մակարդակից, ափամերձ ռելիեֆը, տվյալ հատվածի ջրի հատակի առանձնահատկությունները, խորությունը և այլն: Ինչպես նաև՝ քննիչը դեպքի վայրի զննությանը համապատասխան մասնագետ չի ներգրավել, ում օգնությամբ հնարավոր էր վերցնել հնարավոր հետքեր և այլ առարկաներ, որոնք գործով հետագայում կարող էին ունենալ ապացուցողական նշանակություն: Արդյունքում՝ քննիչ Ա.Կ-ի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 217-218-րդ հոդվածների պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Կ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ լճակը, որտեղ խեղդվել է Գ.Սահակյանը, տարբեր հատվածներում ունեցել է տարբեր խորություններ՝ սկսած 50 սմ-ից մինչև 2 մետր, և այդ հանգամանքները փորձել է պարզել մահացածի մորաքրոջ որդու բացատրությամբ, իսկ ջրասուզակ և այլ միջոցներ դեպքի վայրի զննությանը չի հասցրել ներգրավել:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Կ-ի անմիջական ղեկավար Կ.Խ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ ներկայում Գ.Սահակյանի մահվան դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված է քրեական գործ՝ նկատի ունենալով, որ մահացողի մարմնի վրա հայտնաբերվել են քերծվածքներ, նավակով և ջրասուզակով կատարվել է

դեպքի վայրի լրացուցիչ զննություն և ձեռնարկվում են միջոցառումներ դեպքի իրական հանգամանքները պարզելու համար:

ՈՒսումնասիրելով նյութերը, լսելով Ա.Կ-ին և Կ.Խ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Կ-ն Գ.Սահակյանի ջրահեղձության դեպքի առթիվ նախապատրաստված նյութերով զննությունը կատարել է ոչ պատշաճ, թերի, չի պարզել էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, մասնավորապես՝ լճակի խորությունը՝ չափագրական տվյալները, ափամերձ ռելիեֆը: Արդյունքում՝ Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Ա.Կ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. N57165418 քրեական գործով առանց իրավաչափ նպատակի, տևական ժամկետով անգործություն դրսևորելու դրվագով քննիչ Գ.Գ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

2. Քննիչ Գ.Գ-ի անմիջական ղեկավար Կ.Խ-ի կողմից իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննված N57165418 քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն չհետևելու դրվագով վերջինիս արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

3. N57170318 քրեական գործով, օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, քննիչ Ն.Մ-ի կողմից շուրջ 23 օր անձին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չտալու դրվագով քննիչ Ն.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 3, դեմ՝ 2):

4. Քննիչ Ն.Մ-ի անմիջական ղեկավար Կ.Խ-ի կողմից իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննվող N57170318 քրեական գործով անձին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ տալուն չհետևելու դրվագով Կ.Խ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (դեմ՝ 5, կողմ՝ 0):

5. N57106518 քրեական գործով շուրջ 40 օր դեպքի վայրից վերցված փականով և բանալիներով դատահետքաբանական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն չնշանակելու դրվագով քննիչ Ն.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 4, դեմ՝ 1):

6. Քննիչ Ն.Մ-ի անմիջական ղեկավար Կ.Խ-ի կողմից իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննված N57106518 քրեական գործով գործողությունները ժամանակին կատարելուն չհետևելու դրվագով վերջինիս արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 3, դեմ՝ 2):

7. N57105216/1 քրեական գործով քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում հրատապություն ներկայացնող առանձին գործողություններ ժամանակին չկատարելու դրվագով քննիչ Ա.Կ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

8. Քննիչ Ա.Կ-ի անմիջական ղեկավար Կ.Խ-ի կողմից իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննված N57105216/1 քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն չհետևելու դրվագով վերջինիս արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝4, դեմ՝ 1):

9. Ջրահեղձության դեպքի առթիվ նախապատրաստված նյութերով դեպքի վայրի զննությունը ոչ պատշաճ, թերի զննելու դրվագով քննիչ Ա.Կ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

10. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական
վարչության քննիչ Ա.Օ-ի վերաբերյալ

07 նոյեմբերի 2018թ. ԿՀՈ 34
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա. Օ-ի (գործուղված Մասիսի քննչական բաժին) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ ՔԿԴ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի գրությունների և կից նյութերի, ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնի պետ Ս.Անդրեասյանի զեկուցագրի՝ քննիչ Ա.Օ-ի կողմից վարույթում քննվող քրեական գործերով քրեադատավարական օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու վերաբերյալ: Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Օ-ին (գործուղված Մասիսի քննչական բաժին) վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Հանդիսանալով ՀՀ ՔԿ ծառայող, չի դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն, չի եղել անկողմնակալ, չի պահպանել ծառայողական կարգապահությունը և օրենսդրությամբ սահմանված աշխատանքային ներքին կանոնները, չի դրսևորել իր պաշտոնին վայել վարքագիծ և իր վարքագծով դրսևորել է ՀՀ ՔԿ ծառայողի համբավն արատավորող անվայել արարք՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցից օգտվելիս իր անձնական էջում կատարելով հրապարակումներ և գրառումներ: Արդյունքում՝ քննիչ Ա.Օ-ի կողմից խախտվել են

«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և 27-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 28-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրամանի 3-րդ գլխի 27-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-5-րդ ենթակետերի, 28-րդ կետի 3-րդ ենթակետի «ա.» կետի և 4-րդ ենթակետի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Օ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ չընդունեց մեղքը, մասնավորապես՝ պատճառաբանելով, որ *«ԲՀԿ-ն ու ՀՅԴ-ն ոնց միշտ իրենց ոճի մեջ են. դավաճաններ... ՀՀԿ-ին շատ ամոթ, իրեն կեղտոտությունն այս օրով անելու համար»* գրառումը հրապարակելով՝ չի սատարել որևէ կուսակցության, այլ՝ դրանով ցանկացել է արտահայտել այդ օրը Շառլ Ազնավուրի մահը սգացող հայ ազգի վիճակը: Իր կատարած մյուս գրառումները եղել են և՛ հումորային, և՛ արտահայտել է իր վրդովմունքը որոշ վարորդների նկատմամբ, իսկ հրապարակած լուսանկարը՝ գոտկատեղից վերև մերկ, ըստ իրեն չի համարվում կիսամերկ: Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ Մասիսի քննչական բաժնի պետ Ս.Անդրեասյանը Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ նշեց, որ նախկինում նույնպես քննիչ Ա.Օ-ի կողմից եղել են նմանատիպ հրապարակումներ և գրառումներ, որոնց համար նրան զգուշացրել են, սակայն, վերջինս շարունակել է նույն կերպ վարվել:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Ա.Օ-ին և քննչական բաժնի պետ Ս.Անդրեասյանին, Ա.Օ-ի գործողություններում Կարգապահական հանձնաժողովը նկատեց մի շարք բացասական հանգամանքներ, մասնավորապես՝ քննիչ Ա.Օ-ն իր վարքագծով խաթարել է պետական ծառայողի համբավն ու բացասական անդրադարձ /էֆեկտ/ է ունեցել պետական ծառայողի նկատմամբ հասարակության ընկալման մեջ, *«ԲՀԿ-ն ու ՀՅԴ-ն ոնց միշտ իրենց ոճի մեջ են. դավաճաններ... ՀՀԿ-ին շատ ամոթ, իրեն կեղտոտությունն այս օրով անելու համար»* գրառումը կատարելով գնահատել է քաղաքական ուժերին, իսկ վարորդների մասով գրառումը թեև անհասցե է, սակայն, տվյալ պարագայում հավասարազոր է վիրավորանք արտահայտելուն, և այլն: Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Օ-ն կատարել է հրապարակումներ և գրառումներ, որոնք

անթույլատրելի են և անվայել, նա չի դրսևորել քաղաքական չեզոքություն, մասնավորապես՝ *«ԲՀԿ-ն ու ՀՅԴ-ն ոնց միշտ իրենց ոճի մեջ են. դավաճաններ... ՀՀԿ-ին շատ ամոթ, իրեն կեղտոտությունն այս օրով անելու համար»*, *«Խոսքս ուղղում եմ անասուն վարորդներին. Հարգելի՛ անասուն վարորդներ, ...»* և այլ գրառումները կատարելով, գոտկատեղից վերև կիսամերկ լուսանկարներ հրապարակելով: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Օ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. N44171018 քրեական գործով քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ ժամանակին չի կատարել, մասնավորապես՝ քրեական գործը 09.08.2018թ. վարույթ ընդունելուց առ 05.10.2018թ-ը՝ շուրջ 55 օրվա ընթացքում քրեական գործով չի կատարել մի շարք անհրաժեշտ քննչական գործողություններ՝ չի հարցաքննել դեպքին ականատես վկաներ՝ Ռ.Բաղալյանին, Ա.Աղալարյանին, Ա.Բաղալյանին, ինչպես նաև՝ դեպքի վերաբերյալ տեղեկություններ ունեցող Վ.Վարդանյանին, ում տվյալները պարզ են եղել դեռևս նյութերի նախապատրաստման ժամանակից: Բացի այդ, քրեական գործը վարույթ ընդունելուց միայն 52 օր անց՝ 2018 թվականի հոկտեմբերի 2-ին է ծանուցագիր ուղարկել Գեղամ Սիմոնյանին և օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում՝ նրան առ 05.10.2018թ-ը՝ կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ չի տվել: Արդյունքում՝ քննիչ Ա.Օ-ի կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի, 62-րդ հոդվածի (202-203-րդ հոդվածների) պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Օ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ նշեց, որ դեռևս նյութերի նախապատրաստման ընթացքում բացատրություններ տված անձանց որպես վկա չի կանչել և հարցաքննել, քանի որ համարել է, որ նրանց ցուցմունքներն ապացուցողական նշանակություն չեն ունեցել, իսկ Գ.Սիմոնյանին ծանուցագիր է ուղարկել, հետագայում, բերման ենթարկելու մասին որոշում կայացրել և ստացված պատասխանի համաձայն՝ Գ.Սիմոնյանի գտնվելու վայրը հայտնի չի եղել, այնուհետև, (կոնկրետ օրը չհիշեց) որոշում է կայացրել նրան որպես մեղադրյալ ներգրավելու և հետախուզում հայտարարելու մասին: Իսկ հանձնաժողովի այն հարցին, թե

տվյալ պարագայում՝ ինչու է հետագայում Գ.Սիմոնյանին մեղադրյալի դատավարական կարգավիճակ տվել, եթե համարել է, որ նշված վկաների ցուցմունքներն ապացուցողական նշանակություն չեն ունեցել և այլ փաստական ու իրավական հիմքեր քրեական գործով չեն եղել, քննիչ Ա.Օ-ն հիմնավոր պատասխան չտվեց:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ Մասիսի քննչական բաժնի պետ Ս.Անդրեասյանը Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ նշեց, որ ընդհակառակը՝ հենց հիշյալ վկաների ցուցմունքներն են քրեական գործով ունեցել ապացուցողական նշանակություն, քանզի՝ վերջիններս եղել են ականատես վկաներ և նրանք են հայտնել ենթադրյալ հանցանք կատարած անձ Գ.Սիմոնյանի վերաբերյալ տեղեկությունները: Ուստի, վերջիններիս ավելի վաղ հարցաքննելուց հետո պետք է Գ.Սիմոնյանին տրվեր համապատասխան դատավարական կարգավիճակ: Բացի այդ, Ս.Անդրեասյանը հավելեց, որ Գ.Սիմոնյանի նկատմամբ հետախուզում հայտարարելուց հետո էլ քննիչ Ա.Օ-ն միջոցներ չի ձեռնարկել հետախուզվողի հայտնաբերման ուղղությամբ:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Ա.Օ-ին և քննչական բաժնի պետ Ս.Անդրեասյանին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Օ-ն փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, քրեական գործը 09.08.2018թ. վարույթ ընդունելուց առ 23.10.2018թ-ը, քրեական գործով չի հարցաքննել դեպքին ականատես և դեպքի մասին տեղեկություններ ունեցող վկաներ Ռ.Բաղալյանին, Ա.Աղալարյանին, Ա.Բաղալյանին և Վ.Վարդանյանին, ըստ այդմ՝ շուրջ 52 օր ենթադրյալ հանցանք կատարած անձ Գ.Սիմոնյանին օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ չի տվել՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի, 62-րդ հոդվածի (202-203-րդ հոդվածների) պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Օ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. N44160718 քրեական գործով պատշաճ չի ծանոթացել քրեական գործի նյութերին, քանի որ ՀՀ ոստիկանության Մասիսի բաժնի հետաքննության խմբի տեսուչ Հ.Թորոսյանը դեռևս 14.05.2018թ. քրեական գործ հարուցելուց հետո՝ նույն օրը որոշում է կայացրել Հ.Պողոսյանին որպես տուժող ճանաչելու մասին, սակայն, քննիչ Ա.Օ-ն

18.05.2018թ. քրեական գործը վարույթ ընդունելու օրը կրկին որոշում է կայացրել Հ.Պողոսյանին տուժող ճանաչելու մասին: Քրեական գործով 15.06.2018թ-ից առ 13.08.2018թ-ը՝ շուրջ 58 օր, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ ժամանակին չի կատարել: Մասնավորապես՝ չի հարցաքննել վկաներ Լ.Միքայելյանին, Ն.Գրիգորյանին, Գ.Սեդրակյանին և Հ.Խաչիյանին, քրեական գործով միայն 3 ամիս և 12 օր անց՝ 26.08.2018թ-ին է որոշում կայացրել Լիանա Միքայելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, որի հիմքը եղել է, ինչից հետո՝ առ 05.10.2018թ-ը՝ շուրջ 40 օր, կրկին որևէ քննչական կամ դատավարական գործողություն չի կատարել, այն դեպքում, երբ տուժող Հ.Պողոսյանի և մեղադրյալ Լ.Միքայելյանի ցուցմունքներում առկա էական հակասությունների պայմաններում անհրաժեշտություն է եղել առերես հարցաքննություն կատարել նրանց միջև: Արդյունքում՝ քննիչ Ա.Օ-ի կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Օ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ մասնավորապես նշեց, որ հիշյալ վկաներին ծանուցել է ներկայանալ որպես վկա հարցաքննության, սակայն, վերջիններս չեն ներկայացել և կրկին անգամ ծանուցել է, որից հետո նոր միայն հարցաքննել է նրանց: Քրեական գործով միայն 3 ամիս և 12 օր անց՝ 26.08.2018թ.-ին, է որոշում կայացրել Լ.Միքայելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, քանի որ նշանակել էր լրացուցիչ դատաապրանքագիտական փորձաքննություն, որի արդյունքներով պետք է վերջինիս ներգրավվեր որպես մեղադրյալ: Իսկ հանձնաժողովի այն հարցին, թե ինչու տվյալ պարագայում, երբ չէր ստացել նշված փորձաքննության եզրակացությունը, Լ.Միքայելյանին ներգրավվել է որպես մեղադրյալ, քննիչ Ա.Օ-ն հիմնավոր պատասխան չտվեց: Տուժող Հ.Պողոսյանի և մեղադրյալ Լ.Միքայելյանի ցուցմունքներում առկա էական հակասությունների պայմաններում վերջիններիս առերես չհարցաքննելու մասով նույնպես քննիչ Ա.Օ-ն հիմնավոր պատասխան չտվեց:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ Մասիսի քննչական բաժնի պետ Ս.Անդրեասյանը Կարգապահական հանձնաժողովին

տված բացատրությամբ պնդեց, որ տուժող Հ.Պողոսյանի և մեղադրյալ Լ.Միքայելյանի ցուցմունքներում առկա են եղել էական հակասություններ և անհրաժեշտություն է եղել վերջիններիս առերես հարցաքննել, բավարար հիմքեր են եղել նաև Լ.Միքայելյանին որպես մեղադրյալ ներգրավելու համար:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Ա.Օ-ին և քննչական բաժնի պետ Ս.Անդրեասյանին, Կարգապահական հանձնաժողովը նկատեց, որ հիշյալ դատավարական գործողությունները ժամանակին չկատարելու քննիչ Ա.Օ-ի բերած պատճառաբանություններն անհիմն են և Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Օ-ն քրեական գործով 15.06.2018թ-ից առ 13.08.2018թ-ը՝ շուրջ 58 օր, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ ժամանակին չի կատարել: Մասնավորապես՝ չի հարցաքննել վկաներ Լ.Միքայելյանին, Ն.Գրիգորյանին, Գ.Սեդրակյանին և Հ.Խաչիյանին, օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում՝ քրեական գործով միայն 3 ամիս և 12 օր անց՝ 26.08.2018թ-ին է Լ.Միքայելյանին ներգրավել որպես մեղադրյալ: Բացի այդ, 26.08.2018թ-ից առ 23.10.2018թ-ը՝ շուրջ 58 օր, կրկին որևէ քննչական կամ դատավարական գործողություն չի կատարել, այն դեպքում, երբ տուժող Հ.Պողոսյանի և մեղադրյալ Լ.Միքայելյանի ցուցմունքներում առկա էական հակասությունների պայմաններում անհրաժեշտություն է եղել առերես հարցաքննություն կատարել նրանց միջև: Արդյունքում՝ քննիչ Ա.Օ-ի կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Օ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

4. N44106118 քրեական գործով 31.08.2018թ-ից առ 23.10.2018թ-ը՝ շուրջ 41 օր և 54 օր, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ ժամանակին չի կատարել, մասնավորապես՝ չի հարցաքննել դեպքի վայրի հարևանությամբ բնակվող անձանց, դեպքի վայրի զննության ընթացքում պատուհանի վրա առկա տեխնիկական միջոցների գործադրման հետքերով մի շարք անհրաժեշտ հանգամանքներ պարզելու նպատակով դատահետքաբանական փորձաքննություն նշանակել է 41 օր

անց, վկաներ Ռ.Պետրոսյանի և Գ.Պետրոսյանի հարցաքննությունները կատարել է թերի, դրանց ընթացքում չի պարզել գործի համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ՝ գողացված «Sony» ապրանքանիշի հեռուստացույցի մոդելը, անհատական հատկանիշները, գողացված անվադողերի, մսաղացի ապրանքանիշերը, անհատական հատկանիշները, վերջիններիս լրացուցիչ չի կանչել և հարցաքննել նշված հանգամանքների շուրջ, ինչով առանց իրավաչափ նպատակի, անհարկի ձգձգել է նախաքննության ժամկետները: Արդյունքում՝ քննիչ Ա.Օ-ի կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Օ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ նշեց, որ չի հարցաքննել դեպքի վայրի հարևանությամբ բնակվող անձանց, քանի որ քրեական գործ հարուցելուց հետո հետաքննության մարմնին տվել էր հանձնարարություն, որում, մասնավորապես, նշել էր՝ օպերատիվ հարցազրույցներ իրականացնել դեպքի վայրի հարևանությամբ բնակվող անձանց շրջանում՝ դեպքի վերաբերյալ տեղեկություններ ունեցող անձանց հայտնաբերելու նպատակով և վերջիններիս ներկայացնել հարցաքննության, և ստացված պատասխան գրության համաձայն՝ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվել էր, որ դեպքի մասին տեղեկություններ ունեցող անձինք չեն պարզվել: Նշեց, որ հետագայում, դեպքի վայրի հարևանությամբ բնակվող անձանց հարցաքննել է և քրեական գործով վարույթը կասեցրել, ինչի կապակցությամբ հանձնաժողովի այն հարցին, թե այդ պարագայում՝ ինչու է, հետագայում, դեպքի վայրի հարևանությամբ բնակվող անձանց հարցաքննել որպես վկա, եթե պնդում է, որ հանձնարարություն էր տվել և ստացել նշված պատասխանը, քննիչ Ա.Օ-ն հիմնավոր պատասխան չտվեց: Հայտնեց, որ դեպքի վայրի զննության ընթացքում պատուհանի վրա առկա տեխնիկական միջոցների գործադրման հետքերով դատահետքաբանական փորձաքննություն ժամանակին չի նշանակել, քանի որ, դրա անհրաժեշտությունը չի գտել, տուժողին էլ ասել է, որ պատուհանը չփոխի, իսկ երբ հայտնաբերվեր հանցանքը կատարած անձը, ապա՝ վերջինիս կողմից հանցագործության գործիքի վերաբերյալ տեղեկություններ հայտնելու դեպքում՝ կնշանակեր նաև նշված փորձաքննությունը: Հանձնաժողովի այն հարցին, թե այդ պարագայում՝ ինչու հետագայում նշանակեց հիշյալ փորձաքննությունը, քննիչ Ա.Օ-ն հիմնավոր պատասխան չտվեց: Վկաներ Ռ.Պետրոսյանի և Գ.Պետրոսյանի

հարցաքննությունները թերի կատարելու, մասնավորապես՝ դրանց ընթացքում գործի համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ՝ գողացված «Sony» ապրանքանիշի հեռուստացույցի, անվադողերի և մսաղացի ապրանքանիշերը, անհատական հատկանիշները չպարզելու և վկաներին նշված հանգամանքների շուրջ լրացուցիչ չհարցաքննելու մասով քննիչ Ա.Օ-ն բացատրությամբ նշեց, որ դեպքի վայրի զննության ընթացքում մասնակից Ռ.Պետրոսյանը նշված հանգամանքների շուրջ արել է համապատասխան հայտարարություններ, որն արձանագրել է:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ Մասիսի քննչական բաժնի պետ Ս.Անդրեասյանը Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ պնդեց, որ դեպքի վայրի զննության ընթացքում մասնակիցը գողացված իրերի անհատական հատկանիշների վերաբերյալ հայտարարություններ չի արել, դեպքի վայրի հարևանությամբ բնակվող անձանց հարցաքննելու անհրաժեշտությունը նույնպես եղել է:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Ա.Օ-ին և քննչական բաժնի պետ Ս.Անդրեասյանին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ կատարված դեպքի վայրի զննության ընթացքում մասնակից Ռ.Պետրոսյանը գողացված իրերի անհատական հատկանիշների վերաբերյալ հայտարարություններ չի արել, ըստ այդմ՝ քննիչ Ա.Օ-ն վկաներ Ռ.Պետրոսյանի և Գ.Պետրոսյանի հարցաքննությունները կատարել է թերի, դրանց ընթացքում չի պարզել գործի համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ՝ գողացված «Sony» ապրանքանիշի հեռուստացույցի մոդելը, անհատական հատկանիշները, գողացված անվադողերի, մսաղացի ապրանքանիշերը, անհատական հատկանիշները: Վկաներ՝ Ռ.Պետրոսյանին և Գ.Պետրոսյանին չի կանչել և լրացուցիչ չի հարցաքննել նշված հանգամանքների շուրջ: Բացի այդ, առանց իրավաչափ նպատակի, տևական ժամկետով՝ 41 օր, չի նշանակել դատահետքաբանական փորձաքննությունը, ինչով իսկ անհարկի ձգձգվել են նախաքննության ժամկետները: Արդյունքում՝ քննիչ Ա.Օ-ի կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Օ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

5.Վարույթում քննվող N44170718, N44106918, N44171018, N44160718, N44107418, N44177118, N44171718, N44177518 և N44106118 քրեական գործերով համարակալումներ, ցուցակագրումներ և

թվայնացումներ չի կատարել, քննչական պլաններ չի կազմել, չի ստորագրել և լրացումներ չի կատարել մի շարք դատավարական փաստաթղթերում, անձանց դատավարական կարգավիճակ տալուց հետո համապատասխան գրություններ չի ուղարկել ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ և ԱՎՎ՝ սահմանափակելու ՀՀ-ից ելքը և անձնագրային գործարքներ չկատարելու համար, նմուշ ստանալու մասին որոշումը ծանոթացման չի ներկայացրել կողմին: Արդյունքում՝ քննիչ Ա.Օ-ի կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-30-րդ հոդվածների, 255-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 12.03.2015թ. թիվ 11-Լ հրամանի, 08.12.2015թ. թիվ 134-Լ հրամանի, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 01.10.2015թ. N91-Լ հանձնարարականի և ՀՀ կառավարության 22.06.2006թ. N 884-Ն որոշման պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Օ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ նշեց, որ դատավարական փաստաթղթերում իր կողմից չստորագրելը և լրացումներ չկատարելը պայմանավորված են եղել շտապողականությամբ, իսկ վարույթում քննվող քրեական գործերով սովորաբար համարակալումներ կատարում է քրեական գործերի ավարտական փուլում և ներկայացնում թվայնացման համար: Համապատասխան գրություններ ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ և ԱՎՎ՝ սահմանափակելու ՀՀ-ից ելքը և անձնագրային գործարքներ չկատարելու համար, չուղարկելու մասով հայտնեց, որ N44170718 քրեական գործով մեղադրյալ Ա.Կակոյանի վերաբերյալ գրություններ ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ և ԱՎՎ չի ուղարկել, քանի որ, հետագայում, տուժողը դիմում է ներկայացրել, որ հաշտվել է մեղադրյալի հետ և վերջինիս նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում է կայացրել, ուստի, նշված գրություններն ուղարկելու անհրաժեշտությունը չի գտել: Հանձնաժողովի այն հարցին, թե նշված գրություններն ինչու չի ուղարկել այն պարագայում, երբ մեղադրյալ Ա.Կակոյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը կայացրել է 08.10.2018թ-ին, իսկ Ա.Կակոյանին որպես մեղադրյալ ներգրավվել է 29.09.2018թ-ին, և առկա է եղել որոշակի ժամանակային սղում, քննիչ Ա.Օ-ն պատճառաբանություն չներկայացրեց: N44106918 քրեական գործով Էդ.Պողոսյանին 22.08.2018թ. նմուշ ստանալու մասին որոշումը ծանոթացման համար ներկայացրել է, սակայն, հստակ չկարողացավ

պատճառաբանել, թե ինչու վերջինս չի ստորագրել և որոշմանը ծանոթանալու հանգամանքը չի հաստատել իր ստորագրությամբ:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Ա.Օ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Օ-ն վարույթում քննված մի շարք քրեական գործերով համարակալումներ և թվայնացումներ չի կատարել, քրեական գործերով քննչական պլաններ չի կազմել, չի ստորագրել և լրացումներ չի կատարել մի շարք դատավարական փաստաթղթերում, մասնավորապես՝ N44170718 քրեական գործով՝ 26.09.2018թ. նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդության, 08.10.2018թ. քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման մեջ և այլ փաստաթղթերում, N44106918 քրեական գործով՝ 24.09.2018թ. քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին որոշման, 01.09.2018թ. դեպքի վայրի զննության արձանագրությունում և այլ փաստաթղթերում, N44160718 քրեական գործով՝ 07.09.2018թ. և 09.10.2018թ. նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություններում և այլ փաստաթղթերում, N44106118 քրեական գործով՝ 31.08.2018թ. դեպքի վայրի զննության արձանագրությունում, 31.08.2018թ. Կամո Պետրոսյանին տուժող ճանաչելու մասին որոշման մեջ, 03.09.2018թ. Ռ.Պետրոսյանին տուժողի ներկայացուցիչ ճանաչելու որոշման մեջ և դրանում վերջինիս իրավունքները և պարտականությունները պարզաբանելուց հետո: Բացի այդ, անձանց դատավարական կարգավիճակ տալուց հետո համապատասխան գրություններ չի ուղարկել ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ և ԱՎՎ՝ սահմանափակելու ՀՀ-ից ելքը և անձնագրային գործարքներ չկատարելու համար, N44106918 քրեական գործով Էդ.Պողոսյանին ծանոթացման չի ներկայացրել 22.08.2018թ. նմուշ ստանալու մասին որոշումը: Քննիչ Ա.Օ-ի կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-30-րդ հոդվածների, 255-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 12.03.2015թ. թիվ 11-Լ հրամանի, 08.12.2015թ. թիվ 134-Լ հրամանի, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 01.10.2015թ. N91-Լ հանձնարարականի և ՀՀ կառավարության 22.06.2006թ. N 884-Ն որոշման պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Օ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

6. N44170718 քրեական գործով 29.09.2018թ.՝ Ա.Կակոյանին ներգրավել է որպես մեղադրյալ և վերջինիս նկատմամբ խափանման միջոց է ընտրել ստորագրություն չհեռանալու մասին, սակայն, դրանից

հետո համապատասխան գրություններ չի ուղարկել ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ և ԱՎՎ՝ Ա.Կակոյանի կողմից ՀՀ-ից ելքը սահմանափակելու և անձնագրային գործարքներ չկատարելու համար: Վկաներ՝ Գ.Հոխիկյանի և Վ.Մանուկյանի մարմնական վնասվածքներ ստանալու հանգամանքը պարզելու համար դատաբժշկական փորձաքննություն չի նշանակել, չի առգրավել և զննել Վ.Մանուկյանի հագուստը՝ շապիկը, ինչը ողջամտորեն հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել ապացույցի կորստի: Վկաներին հարցաքննել է տևական ժամանակ անց՝ 25 և ավել օր, 28.08.2018թ., 11.09.2018թ., 26.09.2018թ., իսկ տուժող Փ.Կակոյանի և վկա Գ.Հոխիկյանի առերես հարցաքննությունը, փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, կատարել է 28.09.2018թ.՝ շուրջ 17 օր, այն պարագայում, երբ տուժող Փ.Կակոյանի և վկա Գ.Հոխիկյանի ցուցմունքների միջև հակասություններն առկա են եղել դեռևս 11.09.2018թ., երբ որպես վկա հարցաքննվել է Գ.Հոխիկյանը: 11.09.2018թ. վկա Գ.Հոխիկյանի ցուցմունքի պայմաններում՝ առ 23.10.2018թ-ը, վերջինիս առերես չի հարցաքննել վկա Վ.Մանուկյանի և վերջինիս կնոջ՝ վկա Ա.Ափինյանի հետ, ինչպես նաև՝ վերջիններիս 29.09.2018թ. որպես մեղադրյալ ներգրավված Ա.Կակոյանի հետ: Բացի այդ, 28.09.2018թ. առերես հարցաքննել է վկաներ Յ.Գալստյանին և Գ.Հոխիկյանին, մինչդեռ, Յ.Գալստյանը քրեական գործով որպես վկա հարցաքննված չի եղել: Վկաների հարցաքննությունների արձանագրությունների ամիսը և տարեթվերը, տուժող Փ.Կակոյանի և վկա Գ.Հոխիկյանի, վերջինիս և վկա Յ.Գալստյանի 28.09.2018թ. առերես հարցաքննության արձանագրություններում գրառումները կատարել է սխալ: Արդյունքում՝ քննիչ Ա.Օ-ի կողմից խախտվել են ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 01.10.2015թ. N91-Լ հանձնարարականի և ՀՀ կառավարության 22.06.2006թ. N 884-Ն որոշման, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 243-րդ հոդվածի, 216-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները, ինչով իսկ անհարկի ձգձգվել են նախաքննության ժամկետները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Օ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ նշեց, որ վկաներ՝ Գ.Հոխիկյանի և Վ.Մանուկյանի մարմնական վնասվածքներ ստանալու հանգամանքը պարզելու համար դատաբժշկական

փորձաքննություն չի նշանակել, քանի որ գրություններ էր ուղարկել համապատասխան բժշկական կենտրոններ, Վ.Մանուկյանի հագուստը՝ շապիկը, չի առգրավել և զննել, քանի որ վկաների ցուցմունքներով նման հանգամանքներ չեն հայտնվել, բացի Գ.Հոխիկյանի ցուցմունքով նշվածից: Իսկ հանձնաժողովի այն հարցին, թե արդյոք նշված գործողությունները կատարելը չէր բխում քրեական գործով պարզման ենթակա հանգամանքների շուրջ լրիվ և օբյեկտիվ քննություն կատարելու և ցուցմունքների օբյեկտիվ իրականության համապատասխանությունը պարզելու անհրաժեշտությունից, քննիչ Ա.Օ-ն չկարողացավ պատասխանել: Վկաներին տևական ժամանակ անց՝ 25 և ավել օր, հարցաքննելու, փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում՝ շուրջ 17 օր անց միայն տուժող Փ.Կակոյանի և վկա Գ.Հոխիկյանի առերես հարցաքննությունը կատարելու, 11.09.2018թ. վկա Գ.Հոխիկյանի ցուցմունքի պայմաններում՝ առ 23.10.2018թ-ը՝ շուրջ 42 օր, վերջինիս վկաներ՝ Վ.Մանուկյանի և Ա.Ափինյանի հետ առերես չհարցաքննելու, ինչպես նաև՝ վերջիններիս 29.09.2018թ. որպես մեղադրյալ ներգրավված Ա.Կակոյանի հետ առերես չհարցաքննելու մասով քննիչ Ա.Օ-ն հիմնավոր պատասխան չտվեց, միայն հավելեց, որ քննություն է կատարել Ա.Կակոյանի և Գ.Հոխիկյանի բնակարան այցելած ոստիկանության աշխատակիցներին հարցաքննելու և վերջիններիս Գ.Հոխիկյանի հետ առերես հարցաքննելու ուղղությամբ: Նախաքննության ընթացքում որպես վկա չհարցաքննված Յ.Գալստյանին 28.09.2018թ. վկայի դատավարական կարգավիճակով վկա Գ.Հոխիկյանի հետ առերես հարցաքննելու մասով նշեց, թե մինչ այդ Յ.Գալստյանին որպես վկա հարցաքննել է, սակայն, վերջինիս ցուցմունքը պահել է իր մոտ առանձին վարույթում պահվող փաստաթղթերի մեջ և քրեական գործի նյութերում չի դրել: Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Ա.Օ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Օ-ն վարույթում քննված քրեական գործով, առանց իրավաչափ նպատակի, տևական ժամկետով անհրաժեշտ դատավարական գործողություններ չի կատարել՝ անկախ դրա հետևանքից: Մասնավորապես. վկաներ՝ Գ.Հոխիկյանի և Վ.Մանուկյանի մարմնական վնասվածքներ ստանալու հանգամանքը պարզելու համար դատաբժշկական փորձաքննություն չի նշանակել, չի առգրավել և զննել Վ.Մանուկյանի հագուստը՝ շապիկը, ինչը ողջամտորեն հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել ապացույցի կորստի: Փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում՝ տուժող Փ.Կակոյանի և վկա Գ.Հոխիկյանի առերես հարցաքննությունը կատարել է

28.09.2018թ.՝ շուրջ 17 օր, իսկ վկա Գ.Հոխիկյանի պայմաններում՝ շուրջ 42 օր, վերջինիս առերես չի հարցաքննել վկաներ՝ Վ.Մանուկյանի և Ա.Ափինյանի հետ, ինչպես նաև՝ վերջիններիս առերես չի հարցաքննել 29.09.2018թ. որպես մեղադրյալ ներգրավված Ա.Կակոյանի հետ: Բացի այդ, 28.09.2018թ. առերես հարցաքննել է վկաներ Յ.Գալստյանին և Գ.Հոխիկյանին, մինչդեռ, Յ.Գալստյանը քրեական գործով որպես վկա հարցաքննված չի եղել, քրեական գործի նյութերում առկա չէ վերջինիս որպես վկա հարցաքննված լինելու հանգամանքը վկայող փաստաթուղթ: Վկաների հարցաքննությունների արձանագրությունների ամիսը և տարեթվերը, տուժող Փ.Կակոյանի և վկա Գ.Հոխիկյանի, վերջինիս և վկա Յ.Գալստյանի 28.09.2018թ. առերես հարցաքննության արձանագրություններում գրառումները կատարել է սխալ՝ դատավարական խախտումներով: Արդյունքում՝ քննիչ Ա.Օ-ի կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 243-րդ հոդվածի, 216-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները, ինչով իսկ անհարկի ձգձգվել են նախաքննության ժամկետները: Իսկ քրեական գործով համապատասխան գրություններ ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ և ԱՎՎ՝ Ա.Կակոյանի կողմից ՀՀ-ից ելքը սահմանափակելու և անձնագրային գործարքներ չկատարելու համար, չուղարկելու հանգամանքը քննարկեց նախորդ դրվագով: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Օ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հանդիսանալով ՀՀ քննչական կոմիտեի ծառայող՝ պետական պաշտոնատար անձ, «Ֆեյսբուք» սոցիալական ցանցից օգտվելիս իր անձնական էջում հրապարակումներ և գրառումներ կատարելով՝ քաղաքական չեզոքություն չդրսևորելու, անկողմնակալ չլինելու, ծառայողական կարգապահությունը և օրենսդրությամբ սահմանված

աշխատանքային ներքին կանոնները չպահպանելու, իր պաշտոնին վայել վարքագիծ չդրսևորելու և իր վարքագծով ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի համբավն արատավորող անվայել արարք դրսևորելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա. Օ-ի (գործուղված Մասիսի քննչական բաժին) արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

2. N44171018 քրեական գործով քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ ժամանակին չկատարելու, մասնավորապես՝ շուրջ 55 օրվա ընթացքում քրեական գործով դեպքին ականատես և դեպքի մասին տեղեկություններ ունեցող Ռ.Բադալյանին, Ա.Աղալարյանին, Ա.Բադալյանին և Վ.Վարդանյանին որպես վկա չհարցաքննելու, շուրջ 52 օր ենթադրյալ հանցանք կատարած անձ Գ.Սիմոնյանին, օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում՝ կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ չտալու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Օ-ի (գործուղված Մասիսի քննչական բաժին) արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

3. N44160718 քրեական գործի նյութերին պատշաճ չծանոթանալու և 14.05.2018թ. Հ.Պողոսյանին կրկին որպես տուժող ճանաչելու, քրեական գործով 15.06.2018թ-ից առ 13.08.2018թ-ը՝ շուրջ 58 օր, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ ժամանակին չկատարելու, մասնավորապես՝ Լ.Միքայելյանին, Ն.Գրիգորյանին, Գ.Սեդրակյանին և Հ.Խաչիյանին որպես վկա չհարցաքննելու, քրեական գործով միայն 3 ամիս և 12 օր անց՝ 26.08.2018թ-ին Լ.Միքայելյանին որպես մեղադրյալ ներգրավելու, այնուհետև, մինչև 05.10.2018թ-ը՝ շուրջ 40 օր, կրկին որևէ քննչական կամ դատավարական գործողություն չկատարելու, այդ թվում՝ տուժող Հ.Պողոսյանի և մեղադրյալ Լ.Միքայելյանի ցուցմունքներում առկա էական հակասությունների պայմաններում վերջիններիս առերես չհարցաքննելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Օ-ի (գործուղված Մասիսի քննչական

բաժին) արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

4. N44106118 քրեական գործով քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ ժամանակին չկատարելու, ինչով առանց իրավաչափ նպատակի, անհարկի ձգձգել է նախաքննության ժամկետները, մասնավորապես՝ 31.08.2018թ-ից առ 11.10.2018թ-ը՝ շուրջ 41 օր, դեպքի վայրի զննության ընթացքում պատուհանի վրա առկա տեխնիկական միջոցների գործադրման հետքերով դատահետքաբանական փորձաքննություն չնշանակելու, 31.08.2018թ-ից առ 23.10.2018թ-ը՝ շուրջ 54 օր, դեպքի վայրի հարևանությամբ բնակվող անձանց որպես վկա չհարցաքննելու, վկաներ՝ Ռ.Պետրոսյանի և Գ.Պետրոսյանի հարցաքննությունները թերի կատարելու և դրանց ընթացքում գործի համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ՝ գողացված «Sony» ապրանքանիշի հեռուստացույցի, անվադողերի և մսաղացի ապրանքանիշերը, անհատական հատկանիշները չպարզելու, այդ հանգամանքների շուրջ վկաներ՝ Ռ.Պետրոսյանին և Գ.Պետրոսյանին լրացուցիչ չհարցաքննելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Օ-ի (գործուղված Մասիսի քննչական բաժին) արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

5. Վարույթում քննվող N44170718, N44106918, N44171018, N44160718, N44107418, N44177118, N44171718, N44177518 և N44106118 քրեական գործերով համարակալումներ չկատարելու և քրեական գործի նյութերը թվայնացման չներկայացնելու, մի շարք դատավարական փաստաթղթերում չստորագրելու և լրացումներ չկատարելու, անձանց դատավարական կարգավիճակ տալուց հետո համապատասխան գրություններ ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ և ԱՎՎ չուղարկելու, 22.08.2018թ. նմուշ ստանալու մասին որոշումը Էդ. Պողոսյանին ծանոթացման չներկայացնելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Օ-ի (գործուղված Մասիսի քննչական բաժին) արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

6. N44170718 քրեական գործով, առանց իրավաչափ նպատակի, տևական ժամկետով անհրաժեշտ դատավարական գործողություններ

չկատարելու, մասնավորապես՝ վկաներ՝ Գ.Հոխիկյանի և Վ.Մանուկյանի մարմնական վնասվածքներ ստանալու հանգամանքը պարզելու համար դատաբժշկական փորձաքննություն չնշանակելու, Վ.Մանուկյանի հագուստը՝ շապիկը, չառգրավելու և չզննելու, վկաներին տևական ժամանակ անց՝ 25 և ավել օր, հարցաքննելու, տուժող Փ.Կակոյանի և վկա Գ.Հոխիկյանի ցուցմունքների միջև առկա հակասությունների պայմաններում՝ շուրջ 17 օր անց, կատարելու, վկա Գ.Հոխիկյանի ցուցմունքի պայմաններում՝ շուրջ 42 օր վերջինիս վկաներ՝ Վ.Մանուկյանի և Ա.Ափինյանի հետ, վերջիններիս 29.09.2018թ. որպես մեղադրյալ ներգրավված Ա.Կակոյանի հետ առերես չհարցաքննելու, 28.09.2018թ. վկաներ՝ Յ.Գալստյանի և Գ.Հոխիկյանի առերես հարցաքննությունը խախտումով կատարելու, վկաների հարցաքննությունների արձանագրությունների ամիսը և տարեթվերը և առերես հարցաքննության արձանագրություններում գրառումները սխալ կատարելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Օ-ի (գործուղված Մասիսի քննչական բաժին) արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

7. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության պետի տեղակալ Ս.Հ-ի և վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի պետ Ա.Մ-ի վերաբերյալ
(Կարգապահական խախտման փաստի բացակայության մասին)

14 նոյեմբերի 2018թ. ԿՀՈ 35

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության պետի տեղակալ Ս.Հ-ի և վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի պետ Ա.Մ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Երևան քաղաքի դատախազության դատախազի միջնորդության առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Երևան քաղաքի քննչական վարչության պետի տեղակալ Ս.Հ-ն և վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի պետ Ա.Մ-ն առերևույթ խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 4-րդ մասի և ՀՀ ՔԿ նախագահի տեղակալի 19.06.2018թ.թիվ 91-Ա հրամանի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է վարչության պետի տեղակալ Ս.Հ-ին և ԾՀՔ բաժնի պետ Ա.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի պետ Ա.Մ-ն թիվ 61202218 քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից 2018 թվականի հունիսի 25-ին տրված օրինական ցուցումի /քրեական գործով նախաքննության կատարումը մի քանի քննիչի հանձնարարելու/ պահանջը շուրջ չորս ամիս չի կատարել՝ խախտելով ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 4-րդ մասի և ՀՀ ՔԿ նախագահի տեղակալի 19.06.2018թ.թիվ 91-Ա հրամանի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Ա.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ ՀԿԳ ավագ քննիչ Գ.Գ-ն աշխատում է իր անմիջական ենթակայության ներքո: Ինչ վերաբերում է նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազ Գ.Գևորգյանի 25.06.18թ. ցուցումում նշված քննչական և դատավարական գործողությունների մի մասը չկատարելուն, ապա այդ գործողությունները քննիչի կողմից պլանավորված են եղել և ցուցումի կետերի մեծ մասը կատարված են, իսկ մյուս կետերի չկատարված լինելը պայմանավորված է եղել դրանցից բխող քննչական գործողությունների հետ, որի արդյունքում միայն հնարավոր կլիներ արդյունավետ կատարել ցուցումի մնացած մասի կատարումը, որը բխել է նախաքննության արդյունավետությունից: Տվյալ ցուցումը Ս.Հ-ի կողմից իրեն մակագրվելուց հետո չի ստացել, և նրա հետ ցուցումը չի քննարկվել: Քննիչ Գ.Գ-ի հետ բանավոր քննարկումների ժամանակ, վերջինս խումբ կազմելու կետի մասին իրեն չի հայտնել: Ինչ վերաբերում է իր կողմից անձամբ ցուցումը չկարդալուն, ապա վստահելով Գ.Գ-ին, ով փորձառու քննիչ է, այն քննարկել է քննիչի ներկայացմամբ:

2. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության պետի տեղակալ Ս.Հ-ն իր համակարգման ոլորտում գտնվող՝ վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի գործունեության նկատմամբ պատշաճ վերահսկողություն չի իրականացրել, միջոցներ չի ձեռնարկել նախաքննության կազմակերպման գործում տեղ գտած թերությունները վերացնելու ուղղությամբ՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 4-րդ մասի և ՀՀ ՔԿ նախագահի տեղակալի 19.06.2018թ.թիվ 91-Ա հրամանի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Ս.Հ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ թիվ 61202218 քրեական գործով 26.06.2018թ. Երևան քաղաքի դատախազությունից ստացված ցուցումը վարչության պետի կողմից մակագրվել է իրեն, ինքը ծանոթացել է ցուցումի բովանդակությանը և իր կողմից այն մակագրվել է ԾՀՔ բաժնի պետին: Նշված քրեական գործը գտնվել է ՀԿԳ ավագ քննիչ Գ.Գ-ի վարույթում: 26.06.18թ. ցուցումը ստանալուց հետո քրեական գործով երկու անգամ՝ 31.07.18թ. և 28.09.18թ. միջնորդություններ են ներկայացվել նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ: Բացի այդ, դատախազի գրության հիման վրա 24.09.18թ. քրեական գործն ուղարկվել է Երևան քաղաքի դատախազություն և այն վերադարձվել է 05.10.18թ-ին: Հատկանշական է, որ դատախազի կողմից նախաքննության ժամկետները

երկարացնելու միջնորդությունները քննարկելու և որոշումներ կայացնելու ընթացքում, ինչպես նաև 05.10.18թ. քրեական գործը քննիչին վերադարձնելու ժամանակ որևէ անդրադարձ չի կատարվել ցուցումի պահանջները չկատարելուն, մասնավորապես՝ քննչական խումբ չկազմելուն: Քրեական գործի և ցուցումի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ցուցումի բոլոր կետերը հնարավոր չէր կատարել այդ ժամկետներում, նույնիսկ քննչական խումբ կազմելու պայմաններում, քանի որ քննության արդյունավետության տեսանկյունից ելնելով առանձնացվել են առաջնային քննչական գործողություններ, որոնց կատարումից հետո միայն հնարավոր կլիներ կատարել մնացած գործողությունները: Ներկայումս կազմվել է քննչական խումբ և նախաքննությունն իրականացվում է քննչական խմբի կողմից:

Կարգապահական հանձնաժողովը, նկատի ունենալով, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունը բաղկացած է բաժիններից, իսկ տվյալ քրեական գործը քննվել է ծանր հանցագործությունների քննության բաժնում և քննչական խումբը պետք է ստեղծվեր տվյալ բաժնի քննիչներից, ուստի վարչաիրավական տեսանկյունից ցուցումը պատշաճ հասցեատիրոջը հասցեագրված չի եղել, որի հետևանքով դատախազի ցուցումը չի հասել պատշաճ պաշտոնատար անձին: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով բացակայում են կոպիտ խախտման հատկանիշները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի վարույթում քննվող թիվ 61202218 քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի՝ 2018 թվականի հունիսի 25-ին տրված օրինական ցուցումի (քրեական գործով նախաքննության

կատարումը մի քանի քննիչի հանձնարարելու**),** պահանջը շուրջ չորս ամիս չկատարելու դրվագով Ա.Մ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2. Վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի գործունեության նկատմամբ պատշաճ վերահսկողություն չիրականացնելու, նախաքննության կազմակերպման գործում տեղ գտած թերությունները չվերացնելու դրվագով Ս.Հ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնի մի շարք ծառայողների վերաբերյալ

28 նոյեմբերի 2018թ. ԿՀՈ 36

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնի պետ, ներկայում՝ ՀՀ ՔԿ ԶՔԳՎ երկրորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ, Կ.Փ-ի, Արթիկի և Անիի քննչական բաժնի պետի տեղակալ Ռ.Մ-ի և քննիչներ՝ Ա.Մ-ի, Ն.Մ-ի և Ա.Ի-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողներին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտան-գության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունները.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնում ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչության և տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության աշխատակիցների կողմից 2018թ. սեպտեմբերի 7-ից 11-ը կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկանքը՝ քրեական գործերով վարույթն իրականացրած քննիչների և վերջիններիս անմիջական վերադասների կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի և այլ բնույթի խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչներ՝ Ռ.Մ-ին, Ա.Մ-ին, Ն.Մ-ին, Ա.Ի-ին և քննչական բաժնի պետ Կ.Փ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Քննիչ Ռ.Մ-ն, վարույթում քննված N23151918 քրեական գործով, օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում՝ Լ.Մ-ին քրեական դատավարության

մասնակցի կարգավիճակ չի տվել: Արդյունքում՝ քննիչի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածների 3-րդ մասի և 202-203-րդ հոդվածների պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ռ.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ քննարկվող ժամանակահատվածում աշխատել է ծանրաբեռնված, վարույթում ունեցել է 16 քրեական, բացի այդ, կատարել է քննչական բաժնի պետի պարտականությունները և հսկողություն է իրականացրել քննիչների վարույթում քննված քրեական գործերով նախաքննության նկատմամբ, ֆիզիկապես չի հասցրել մեկնել «Արմավիր» ՔԿՀ և կատարել անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողությունները: Հավելեց նաև, որ նախկին քննիչ Հ.Ս-ի պաշտոնից ազատվելուց հետո վարույթ է ընդունել վերջինիս վարույթում քննված 4 քրեական գործ և ծանոթացել դրանց հետ, այդ թվում՝ քննարկվող քրեական գործը:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ռ.Մ-ին, Կարգապահական հանձնաժողովը ի պաշտոնե պարզեց, որ վարույթ ընդունած 4 քրեական գործերից N18155818 քրեական գործը նախկինում գտնվել է Ռ.Մ-ի վարույթում: Բացի այդ, 02.07.-22.08.2018թ. ժամանակահատվածում Ռ.Մ-ն կատարել է բաժնի պետի պարտականությունները և հանդիսանալով վարույթն իրականացրած նախկին քննիչ Հ.Ս-ի անմիջական վերադասը՝ պետք է ծանոթ լիներ մյուս 3 քրեական գործերի նյութերին: Արդյունքում՝ N23151918 քրեական գործով, Ռ.Մ-ն, օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում՝ Լ.Մ-ին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չի տվել, ինչով իսկ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածների 3-րդ մասի և 202-203-րդ հոդվածների պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ռ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Միջոցներ չի ձեռնարկել որպես վկա հարցաքննելու հեռուստահաղորդավար Վ.Օնանյանին, ով նախաքննության ընթացքում ծանուցագրով 31.07.2018թ. հրավիրվել է քննչական բաժին, սակայն չի ներկայացել, նշված ժամկետին ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին քրեական գործում տեղեկություններ առկա չեն և նման պայմաններում վարույթն իրականացնող մարմնի կողմից որոշում չի կայացվել վերջինիս բերման ենթարկելու մասին:

Արդյունքում՝ քննիչի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ռ.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին ըստ էության տվեց նախորդ դրվագով նույնաբովանդակ բացատրություն՝ հավելելով, որ նախկին քննիչ Հ.Ս-ն հեռախոսազրույց է ունեցել Վ.Օնանյանի հետ, ով հայտնել է, որ նկարահանումների է, կներկայանա հետագայում: Սակայն, Հ.Ս-ն հեռախոսազրույցի վերաբերյալ համապատասխան արձանագրություն չի կազմել, ինքն էլ՝ հաշվի առնելով Վ.Օնանյանի հեռուստահաղորդավար լինելու հանգամանքը, բերման ենթարկելու որոշում չի կայացրել, նպատակ ունենալով Երևան գալու դեպքում՝ հանդիպել Վ.Օնանյանին և հարցաքննել, ինչն էլ, հետագայում՝ կատարել է:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Ռ.Մ-ին, Կարգապահական հանձնաժողովի անդամների քվեարկությամբ ձայները կիսվեցին՝ 3 կողմ և 3 դեմ, որպիսի պայմաններում՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 48-րդ կետի՝ հանձնաժողովի անդամների ձայները կիսվելու դեպքում ընդունված է համարվում ՀՀ ՔԿ ծառայողի համար առավել բարենպաստ որոշումը, ուստի՝ Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով բացակայում է օրենքի կոպիտ խախտման հատկանիշները:

3. Բացի այդ, նախկին քննիչ Հ.Ս-ի կողմից հիշյալ քրեական գործով 2018 թվականի օգոստոսի 14-ին միջնորդություն է հարուցվել նախաքննության ժամկետը երկարացնելու մասին, սակայն պարզվել է, որ տվյալ դեպքում խախտվել է ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի՝ 8-րդ կետի՝ պահանջները, համաձայն որի՝ նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշումը ներկայացվում է նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին քննչական բաժնի պետի ուղեկցական գրությամբ՝ քննության ժամկետը լրանալու օրվանից 5 օր առաջ, իսկ տվյալ դեպքում ներկայացվել է 4 օր առաջ: Իսկ տվյալ ժամանակահատվածում բաժնի պետի պարտականությունները կատարած Ռ.Մ-ն չի պահպանել ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա

հրամանի պահանջները, նկատի ունենալով, որ հրամանի կատարման հսկողությունը դրված է ստորաբաժանումների պետերի վրա:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ռ.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ նախկին քննիչ Հ.Ս-ի նախաքննության ժամկետը լրանալուց 7 օր առաջ քննարկել են քրեական գործը, որոշել են ժամկետը երկարացնել, որը Հ.Ս-ն պետք է ներկայացներ 5 օր առաջ, սակայն, ներկայացրել է 4 օր առաջ: Բացի այդ, հավելեց նաև, որ նախաքննության ժամկետը երկարացնելու մասին որոշման ուղեկցական գրությունը կազմում են իրենք՝ Շիրակի մարզային քննչական վարչության պետի անունից և վերջինի ստորագրելուց հետո որոշումն ուղարկվում է Շիրակի մարզի դատախազություն, ինչն էլ կատարվել է: Հանձնաժողովի այն հարցին, թե ինչու է նշված որոշման ուղեկցական գրությունը ստորագրում վարչության պետը, այլ՝ ոչ թե ստորաբաժանման ղեկավարը, Ռ.Մ-ն հայտնեց, որ Շիրակի մարզային քննչական վարչությունում և ենթակա ստորաբաժանումներում նման կարգ է ձևավորված:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ Շիրակի մարզային քննչական վարչության պետ Ս.Ս-ն Կարգապահական հանձնաժողովին ըստ էության բացատրություն տվեց, որ իր համակարգման ոլորտում գտնվող մարմնում և ենթակա ստորաբաժանումներում իր հանձնարարությամբ այլ մարմիններ ուղարկվող բոլոր ուղեկցական գրությունները կազմվում են իր անունից և ներկայացվում իրեն՝ ստորագրման՝ այդ կերպ նպատակ ունենալով վերահսկել ծառայողների կողմից իրենց վրա դրված պարտականությունների ժամանակին և պատշաճ կատարումը: Հիշյալ դրվագով հայտնաբերված իրավախախտման վերաբերյալ հայտնեց, որ թեև ինքն է ստորագրել ուղեկցական գրությունը, սակայն, հանձնարարականի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը դրված է եղել ստորաբաժանման ղեկավարի վրա, ինքն այդ պարտավորությունը չի ստանձնել, այլ՝ ուղղակի փորձել է իր հերթին վերահսկել քննիչի և ստորաբաժանման ղեկավարի կողմից հանձնարարականով դրված պարտականությունների կատարմանը:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ռ.Մ-ին և Ս.Ս-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանով հաստատված ուղեցույցի համաձայն՝ նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշումը դատավարական հսկողություն իրականացնող

դատախազին 5 օր առաջ ներկայացվում է քննչական բաժնի պետի ուղեկցական գրությամբ: Հիշյալ ժամանակահատվածում Արթիկի և Անիի քննչական բաժնի պետի պարտականությունները ժամանակավոր կատարել է Ռ.Մ-ն և վերջինս պետք է հետևեր ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանով հաստատված ուղեցույցի պահանջների կատարմանը: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ռ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը, իսկ Ս.Սիմոնյանին առաջարկվեց առաջանորդվել հիշյալ հրամանի պահանջներով:

4. Քննիչ Ռ.Մ-ն, վարույթում քննված N18155818 քրեական գործով, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություն ժամանակին չի կատարել, ինչն ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի, մասնավորապես՝ ժամանակին միջոցներ չի ձեռնարկել հարցաքննելու Ն.Յանգյանին, կատարել դրանից բխող այլ գործողություններ: Ընդ որում՝ Ն.Յանգյանին հարցաքննելու վերաբերյալ առկա է եղել նաև հսկող դատախազի 15.05.2018թ. օրինական ցուցումը, որի պահանջները կատարելու ուղղությամբ նախաքննական մարմնի կողմից տևական ժամանակ ոչինչ չի ձեռնարկվել, արդյունքում քննիչը չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջները: Ընդ որում՝ համաձայն դատախազի վերը հիշատակված ցուցումի՝ Ռ.Մ-ն 21.06.2018թ. մուտք է գործել ՀՀ ԱՆ «Արթիկ» ՔԿՀ կալանավոր Ա.Ղազարյանին և Կ.Սարգսյանին հարցաքննելու համար, մինչդեռ՝ Ն.Յանգյանին հարցաքննելու ուղղությամբ ոչինչ չի ձեռնարկել:

Պարզվել է նաև, որ դեռևս 19.06.2018թ. ստացվել է Ն.Բաղդասարյանի երկու բջջային հեռախոսահամարների ելքային և մուտքային հեռախոսազանգերի վերծանումներն, ինչը սակայն առ 07.09.2018թ. վարույթն իրականացնող մարմնի կողմից չի զննվել և չեն կատարվել դրանից բխող գործողություններ: Իսկ, հետագայում՝ ձեռնարկված գործողությունների արդյունքում հնարավոր չի եղել հայտնաբերել և հարցաքննել Ն.Յանգյանին, այսինքն՝ վարույթն իրականացնող մարմնի գործողությունները ողջամտորեն հիշյալ դրվագով հանգեցրել են ապացույցի կորստի:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ռ.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց, որ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի տված ցուցումի այլ կետերի պահանջները կատարելու նպատակով մուտք է գործել «Արմավիր» ՔԿՀ, մասնավորապես՝ քրեական գործով անցնող այլ անձանց հարցաքննելու համար, սակայն, վերջիններս հրաժարվել են ցուցմունք տալ: Իսկ «Արմավիր» ՔԿՀ-ում պատիժը կրող Ն.Յանգյանին չի հարցաքննել, քանի որ վերջինիս համապատասխան դատավարական կագավիճակ տալու խնդիր է եղել, մասնավորապես՝ չի կողմնորոշվել, թե նրա հետ ինչ դատավարական կագավիճակով գործողություններ կատարի: Ինչ վերաբերում է քրեական գործով ստացված վերծանումները չզննելուն, ապա՝ հայտնեց, որ քրեական գործում առկա ցուցմունքներով հաստատված է համարել Ն.Բաղդասարյանի և Ն.Յանգյանի հեռախոսակապերը, ուստի, նպատակահարմար չի գտել զննել վերծանումները: Իսկ Հանձնաժողովի այն հարցին, թե այդ պարագայում ինչու է պահանջվել վերծանումները՝ Ռ.Մ-ն հիմնավոր պատասխան չտվեց՝ հավելելով, որ դրանք ստացել են և ուղղակի կցել քրեական գործին:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ռ.Մ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ըստ քրեական գործում առկա տվյալների՝ քննիչ Ռ.Մ-ն Ն.Յանգյանին առնվազն կարող էր հարցաքնել որպես վկա՝ պարզաբանելով կասկածյալի իրավունքները և պարտականությունները, ինչը քննիչը չի կատարել, իսկ հետագայում՝ ազատվելով պատիժը կրելուց, Ն.Յանգյանին հնարավոր չի եղել հայտնաբերել և հարցաքննել: Քննիչ Ռ.Մ-ի կողմից չի զննվել նաև ստացված հեռախոսազանգերի վերծանումները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ռ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

5. Քննիչ Ռ.Մ-ն, վարույթում քննված N28101618 քրեական գործով, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ ժամանակին չի կատարել, մասնավորապես, քրեական գործը 17.08.2018թ. վարույթ ընդունելուց հետո առ 07.09.2018թ-ը, 19.07.2018թ. փորձագետի միջնորդությունը բավարարելու ուղղությամբ /նեղ մասնագետ-գեմոլոգի փորձագետ ճանաչելու հարցով/ ոչինչ չի ձեռնարկել: Արդյունքում՝ անհիմն ձգձգվել են նախաքննության ժամկետները, ինչով իսկ Ռ.Մ-ն

խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ռ.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ ՀՀ-ում գործող փորձագիտական հիմնարկները նեղ մասնագիտական գիտելիքներ ունեցող մասնագետ-գեմոլոգ չեն ունեցել, այդ հարցով հետաքրքրվել է իր շրջապատում գտնվող այլ նախաքննական մարմիններից և ի վերջո՝ հայտնաբերել է նման մասնագետի, ինչով էլ պայմանավորված է եղել փորձագետի միջնորդության ձգձգման հանգամանքը:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ռ.Մ-ին, Կարգապահական հանձնաժողովը ի պաշտոնե պարզեց, որ փորձագետի միջնորդության ուշ բավարարման հանգամանքը պայմանավորված չի եղել քրեական վարույթն իրականացրած մարմնի անգործությամբ, այլ՝ ՀՀ-ում համապատասխան նեղ մասնագետ հրավիրելու օբյեկտիվ բարդություններով: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ռ.Մ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

6. Քննիչ Ռ.Մ-ի վարույթում 07.09.2018թ. դրությամբ քննված 10 քրեական գործից 8-ը թվայնացված չի եղել, ինչով իսկ խախտվել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 08.12.2015թ. 134-Լ հրամանի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ռ.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց, որ քրեական գործերով թվայնացումները չեն կատարվել, ինչը պայմանավորված է եղել ծանրաբեռնվածությամբ, քանի որ քննիչները նույնպես պետք է ներկա գտնվեին թվայնացումների կատարմանը, սակայն, ֆիզիկապես չեն հասցրել միաժամանակ և՛ քրեական գործերով նախաքննությունն իրականացնել, և՛ գտնվել գրասենյակի աշխատակցուհու մոտ՝ թվայնացման կատարման ընթացքում:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ռ.Մ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Ռ.Մ-ի վարույթում քննված քրեական գործերով թվայնացումները սահմանված ժամկետներում չեն կատարվել, ինչով իսկ խախտվել են ՀՀ ՔԿ նախագահի 08.12.2015թ. թիվ 134-Լ հրամանի պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Ռ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

7. Ռ.Մ-ն, 02.07.-22.08.2018թ. ընկած ժամանակահատվածում բաժնի պետի պարտականությունները ժամանակավոր կատարելիս չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչների վարույթում քննված N23201318 և N28155218 քրեական գործերով քննչական գործողություններն օրինական ու ժամանակին կատարելուն, քննիչներին ցուցումներ չի տվել նրանց վարույթում գտնվող քրեական գործերով առանձին քննչական և դատավարական այլ գործողություններ կատարելու վերաբերյալ: Արդյունքում՝ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ 02.07.-22.08.2018թ. ընկած ժամանակահատվածում բաժնի պետի պարտականությունները ժամանակավոր կատարած Ռ.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ նշեց, որ աշխատել է ծանրաբեռնված, այդ թվում՝ որպես բաժնի պետի պաշտոնակատար, ինքն է քննչական բաժնի փոստը Արթիկ քաղաքից տարել Գյումրի քաղաքում տեղակայված Շիրակի մարզային քննչական վարչություն, ուստի, ֆիզիկապես չի հասցրել հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչների վարույթում քննված քրեական գործերով նախաքննության կատարման նկատմամբ:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ռ.Մ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Ռ.Մ-ն բաժնի պետի պարտականությունները կատարել է կարճ ժամանակահատվածում, ուստի, Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Ռ.Մ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

8. Քննիչ Ա.Մ-ն վարույթում քննված N28102318, N28156518, N23152218, N28102718, N28155818, N28101718, N86154318 և N28154918 քրեական գործերով վարույթ ընդունելու մասին որոշումները գործին չի կցել, համարակալումներ, թվայնացումներ չի կատարել, չի ստորագրել և լրացումներ չի կատարել դատավարական փաստաթղթերում, անձանց դատավարական կարգավիճակ տալուց հետո համապատասխան գրություններ չի ուղարկել ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ և ԱՎՎ՝ սահմանափակելու ՀՀ-ից ելքը և անձնագրային գործարքներ չկատարելու համար: Արդյունքում՝ քննիչի կողմից խախտվել են ՀՀ ՔԿ նախագահի 08.12.2015թ. թիվ 134-Լ հրամանի, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 01.10.2015թ. N91-Լ հանձնարարականի և ՀՀ կառավարության

22.06.2006թ. N 884-Ն որոշման, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի, 7-րդ մասի և 30-րդ հոդվածի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ քրեական գործերը վարույթ ընդունելու մասին որոշումները կազմել է, դատախազություն ուղարկել, սակայն, քրեական գործի նյութերին չի կցել: Միևնույն ժամանակ նշեց, քանի որ նույն ստորաբաժանման քննիչից է քրեական գործերը վարույթ ընդունել, այդ իսկ պատճառով քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշում չի կայացրել և գործին չի կցել: Քրեական գործերով համարակալումներ և թվայնացումներ չկատարելու, դատավարական փաստաթղթերում չստորագրելու և լրացումներ չկատարելու վերաբերյալ ըստ էության հայտնեց, որ դրանք պայմանավորված են եղել աշխատանքային ծանրաբեռնվածությամբ: Իսկ անձանց դատավարական կարգավիճակ տալուց հետո համապատասխան գրություններ ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ և ԱՎՎ չուղարկելու մասով հայտնեց, որ անձանց անձնագրերը գտնվել են իր մոտ և նշված գրություններն ուղարկել նպատակահարմար չի գտել: Բացի այդ, նշեց, որ եղել է քրեական գործ, որով անձին կասկածյալի դատավարական կարգավիճակ տալուց հետո տուժողը հաշտվել է կասկածյալի հետ և քրեական գործը ենթակա է եղել կարճման:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ա.Մ-ին, Կարգապահական հանձնաժողովն ի պաշտոնե պարզեց, որ քննիչ Ա.Մ-ի վարույթում քննարկվող ժամանակահատվածում կարճման ենթակա քրեական գործ չի եղել, ուստի, քննիչ Ա.Մ-ն վարույթում քննված և վերը հիշատակված քրեական գործերով համակարգային առումով թույլ է տվել խախտումներ: Մասնավորապես՝ քրեական գործերը վարույթ ընդունելու մասին որոշումները գործերին չի կցել (օրինակ՝ N28102318, N28156518 քրեական գործերով և այլն), համարակալումներ և թվայնացումներ չի կատարել (օրինակ՝ N28102718, N28101718, N86154318 և N28154918 քրեական գործերով և այլն), չի ստորագրել և լրացումներ չի կատարել դատավարական համապատասխան փաստաթղթերում (օրինակ՝ N28102318, N28156518 քրեական գործերով), անձանց դատավարական կարգավիճակ տալուց հետո համապատասխան գրություններ չի ուղարկել ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ և ԱՎՎ՝ սահմանափակելու ՀՀ-ից ելքը և անձնագրային գործարքներ չկատարելու համար (օրինակ՝ N23252218,

N28102718 քրեական գործերով և այլն): Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Ա.Մանուկյանի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

9. Քննիչ Ն.Մ-ն վարույթում քննված N23201318 քրեական գործով՝ շուրջ 30 օր, առանց իրավաչափ նպատակի, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին քննչական գործողություններ չի կատարել, ինչն էլ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի: Արդյունքում՝ քննիչ Ն.Մ-ի կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ն.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ քննարկվող ժամանակահատվածում աշխատել է ծանրաբեռնված, 2018 թվականի օգոստոս ամսին վարույթում քննվել է շուրջ 24 քրեական գործ, որոնցից 15-ը՝ իրեն փոխանցվել է նույն ստորաբաժանման այլ քննիչներից՝ 01.08.2018թ-ին 8 քրեական գործ և 17.08.2018թ-ին՝ 7 քրեական գործ: Նույն ամսում՝ որոշել է 8 քրեական գործի ընթացք՝ 3-ի վարույթը կարճել է, 5-ի վարույթը կասեցրել: Հավելեց նաև, որ թիվ 23201318 քրեական գործով նշանակված է եղել դատահաշվապահական փորձաքննություն, որի եզրակացությունը ստացված չի եղել և պլանավորել էր եզրակացությունը ստանալուց հետո հարցաքննել վկաներին, որոնք, հետագայում՝ կատարվել են այլ քննիչի կողմից, և քրեական գործով ապացույցի կորուստ չի եղել:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ Կարգապահական հանձնաժողովին ըստ էության քննիչ Ն.Մ-ի բացատրությանը նույնաբովանդակ բացատրություն տվեց 02.07.-22.08.2018թ. ընկած ժամանակահատվածում նրա անմիջական վերադաս Ռ.Մխիթարյանը:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ա.Մ-ին և Ռ.Մ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ն.Մ-ն, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, հրատապություն ներկայացնող առանձին քննչական գործողություններ չի կատարել, ինչն էլ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի: Մասնավորապես՝ չի առգրավել և զննել «Մարալիկի

առողջության կենտրոն» ՓԲ ընկերության հրամանագրքերը, չի հարցաքննել վկաներին: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Ն.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

10. Քննիչ Ն.Մ-ն վարույթում քննված N28155218 քրեական գործով՝ շուրջ 61 օր, տևական ժամանակ, առանց իրավաչափ նպատակի դրսևորել է անգործություն, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին քննչական գործողություններ չի կատարել, ինչն էլ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի: Արդյունքում՝ քննիչ Ն.Մ-ի կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ Կարգապահական հանձնաժողովին քննիչ Ն.Մ-ն ըստ էության նախորդ դրվագին նույնաբովանդակ բացատրություն տվեց՝ հավելելով, որ տուժող տարեց մարդ է եղել, չի կարողացել ներկայանալ հարցաքննության, պլանավորել է նրան հարցաքննել իր բնակության հասցեում, սակայն, կրկին ծանրաբեռնվածությամբ պայմանավորված չի հասցրել հարցաքննել: Բացի այդ, հայտնեց, որ արդեն 01.10.2018թ-ին բերման ենթարկելու մասին որոշում է կայացրել, որից հետո կատարել է անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողությունները: Իսկ առերեսումները ժամանակին չկատարելու վերաբերյալ քննիչ Ն.Մ-ն հիմնավոր պատասխան չտվեց:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ Կարգապահական հանձնաժողովին ըստ էության քննիչ Ն.Մ-ի բացատրությանը նույնաբովանդակ բացատրություն տվեց 02.07.-22.08.2018թ. ընկած ժամանակահատվածում նրա անմիջական վերադաս Ռ.Մ-ն:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ա.Մ-ին և Ռ.Մ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ն.Մ-ն քրեական գործով անհրաժեշտություն և հրատապություն ներկայացնող քննչական և այլ դատավարական գործողություններ ժամանակին չի կատարել, շուրջ 61 օր դրսևորել է անգործություն, մասնավորապես՝ տուժող Վ.Մկրտչյանին առերես չի հարցաքննել վկաներ՝ Գ.Սահակյանի, Հ.Ներսիսյանի և կասկածի շուրջ որպես վկա հարցաքննված Վ.Սահակյանի հետ: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Ն.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

11. Քննիչ Ա.Ի-ն վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով 24.08.2017-01.08.2018թթ. ժամանակահատվածում քննված N23100817 քրեական գործով նախաքննության անհրաժեշտությունից և դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի օրինական և չբողոքարկված ցուցումների պահանջներից բխող անհրաժեշտ և հրատապություն ներկայացնող քննչական և դատավարական այլ գործողություններ չի կատարել, ինչով իսկ անհարկի ձգձգվել են նախաքննության ժամկետները, ինչն էլ կարող էր հանգեցնել ապացույցների կորստի: Արդյունքում՝ քննիչ Ա.Ի-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Ի-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց, որ թեև որոշակի ձգձգումներով, սակայն, կատարել է դատախազի ցուցումների կետերի պահանջները: Իսկ Հանձնաժողովի այն հարցին, թե ինչու ավելի վաղ՝ մինչև 24.03.2018թ-ը, փաստական և իրավական հիմքեր եղել են արդյոք Հ.Աղաբեկյանին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ տալու և դրանից բխող քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու համար, մասնավորապես՝ բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունները ստանալու համար, Ա.Ի-ն հայտնեց, որ հիմքերն առկա եղել են:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ա.Ի-ին, Կարգապահական հանձնաժողովն ի պաշտոնե պարզեց, որ քննիչ Ա.Ի-ն, իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, տևական ժամանակ Հ.Աղաբեկյանին քրեական դատավարության մասնակցի՝ կասկածյալի կարգավիճակ չի տվել, թեև եղել են առնվազն հիմքերը, դրանից բխող քննչական և այլ դատավարական գործողություններ չի կատարել, ինչով իսկ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 62-րդ հոդվածի և (կամ) 202-203-րդ հոդվածների պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Ա.Ի-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

12. ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնի պետ Կ.Փ-ն չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչների վարույթում քննված N23201318, N28155218 և N23100817 քրեական գործերով քննչական

գործողություններն օրինական ու ժամանակին կատարելու նկատմամբ, քննիչներին ցուցումներ չի տվել նրանց վարույթում գտնվող քրեական գործերով առանձին քննչական և դատավարական այլ գործողություններ կատարելու վերաբերյալ: Բացի այդ, քննչական բաժնի պետ Կ.Փ-ն չի կարողացել կազմակերպել և վերահսկել քննչական ստորաբաժանման աշխատանքները, չի ապահովել առաջ եկած խնդիրների լուծումը, այդ թվում՝ քրեական գործերով թվայնացումները չեն կատարվել, համապատասխան գրություններ չեն ուղարկել ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ և ԱՎՎ՝ սահմանափակելու ՀՀ-ից ելքը և անձնագրային գործարքներ չկատարելու համար: Արդյունքում՝ Կ.Փ-ի կողմից չեն պահպանվել ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 10.06.2015թ. թիվ 55 Լ հրամանով հաստատված ՀՀ քննչական կոմիտեի կանոնադրության 13-րդ կետի և 14-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 9-րդ ենթակետերի, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 08.12.2015թ. թիվ 134-Լ հրամանի, ինչպես նաև՝ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի պահանջները:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովն ի պաշտոնե պարզեց, որ արդեն Կ.Փ-ն ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 14.11.2018թ. համապատասխան հրամանով ազատվել է աշխատանքից՝ իր գրավոր դիմումի հիման վրա: Նկատի ունենալով, որ Կ.Փ-ի լիազորությունները դադարեցվել է, ուստի, Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ իրավասու չէ քննարկել Կ.Փ-ին վերագրվող առերևույթ կարգապահական խախտման փաստի առկայության հարցը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. N23151918 քրեական գործով, օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում՝ Լ.Մելքոնյանին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ

չտալու դրվագով քննիչ Ռ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0), իսկ Վ.Օնանյանին չհարցաքննելու դրվագով քննիչ Ռ.Մ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 3, դեմ՝ 3):

2. N23151918 քրեական գործով «Նախաքննության երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ քննչական նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի 8-րդ կետի պահանջները խախտելու դրվագով Ռ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

3. N23151918 քրեական գործով Ն.Յանգյանին չհարցաքննելու և ստացված հեռախոսազանգերի վերծանումները չզննելու դրվագով քննիչ Ռ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 1):

4. N28101618 քրեական գործով 19.07.2018թ. ստացված փորձագետի միջնորդությունը բավարարելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու դրվագով քննիչ Ռ.Մ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

5. Վարույթում քննված 8 քրեական գործերի նյութերի թվայնացումները չկատարելու դրվագով քննիչ Ռ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

6. 02.07.-22.08.2018թ. ընկած ժամանակահատվածում Արթիկի և Անիի քննչական բաժնի պետի պարտականությունները ժամանակավոր կատարելիս իրեն անմիջականորեն ենթակա քննիչների վարույթում քննված քրեական գործերով քննչական գործողություններն օրինական ու ժամանակին կատարելուն չհետևելու, քննիչներին քննչական և դատավարական այլ գործողություններ կատարելու ցուցումներ չտալու դրվագով Ռ.Մ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

7. Վարույթում քննվող N28102318, N28156518, N23152218, N28102718, N28155818, N28101718, N86154318 և N28154918 քրեական գործերով համարակալումներ չկատարելու և քրեական գործի նյութերը թվայնացման չներկայացնելու, մի շարք դատավարական փաստաթղթերում

չստորագրելու և լրացումներ չկատարելու, անձանց դատավարական կարգավիճակ տալուց հետո համապատասխան գրություններ ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ և ԱՎՎ չուղարկելու դրվագով քննիչ Ա.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

8. N23201318 քրեական գործով, առանց իրավաչափ նպատակի, տևական ժամկետով՝ շուրջ 30 օր, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, առանձին քննչական գործողություններ չկատարելու և N28155818 քրեական գործով, առանց իրավաչափ նպատակի, տևական ժամկետով՝ շուրջ 61 օր, անհրաժեշտ և հրատապություն ներկայացնող քննչական և այլ դատավարական գործողություններ չկատարելու և անգործություն դրսևորելու դրվագով քննիչ Ն.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

9. Իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, տևական ժամկետով Հ.Ա-ին քրեական դատավարության մասնակցի՝ կասկածյալի կարգավիճակ չտալու, դրանից բխող քննչական և այլ դատավարական գործողություններ չկատարելու դրվագով քննիչ Ա.Ի-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

10. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական
վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ս.Ս-ի վերաբերյալ

28 նոյեմբերի 2018թ. ԿՀՈ 37
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ս.Ս-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության պետ Կ.Շ-ի զեկուցագիրը՝ վարույթը կարճված թիվ 29104118 քրեական գործով ՀԿԳ քննիչ Ս.Ս-ի կողմից քրեադատավարական օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Ս.Ս-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ստորև նշված դրվագների.

1. 23.10.2018թ-ին որոշում է կայացրել N29104118 քրեական գործով վարույթը կարճելու մասին, սակայն, որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում չի ուղարկել դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին՝ որոշման օրինականությունը ստուգելու նպատակով: Արդյունքում՝ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 28-րդ կետի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Ս-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց քրեադատավարական օրենքի խախտման հանգամանքը՝ պատճառաբանելով, որ դա պայմանավորված է եղել աշխատանքային

ծանրաբեռնվածությամբ, վարույթը կարճելուց հետո քրեական գործը որոշման հետ մասին դրել է իրեն ամրակցված մետաղյա պահարանում պահվող վարույթները կասեցված քրեական գործերի վրա և օրենքով սահմանված ժամկետում մոռացել է ուղարկել դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Ս-ի անմիջական վերադաս՝ վարչության պետ Կ.Շ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ըստ էության հայտնեց, որ քննիչի կողմից թույլ է տրվել քրեադատավարական օրենքի խախտում:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ս.Սո-ին և Կ.Շ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ N29104118 քրեական գործով վարույթն իրականացրած քննիչ Ս.Ս-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 28-րդ կետի պահանջները՝ նկատի ունենալով, որ 23.10.2018թ-ին գործով վարույթը կարճելու մասին որոշման պատճենը օրենքով սահմանված կարգով 24 ժամվա ընթացքում չի ուղարկել դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին՝ որոշման օրինականությունը ստուգելու նպատակով: Կարգապահական հանձնաժողովը որոշեց Ս.Ս-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. N29104118 քրեական գործը վարույթ է ընդունել 10.09.2018թ-ին, իսկ 23.10.2018թ-ին որոշում է կայացրել վարույթը կարճելու մասին, սակայն, օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում՝ Ա.Խաչատրյանին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չի տվել և չի հարցաքննել դեպքի հանգամանքների շուրջ, վերջինիս մասնակցությամբ չի կատարել անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ: Արդյունքում՝ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածների 3-րդ մասի, 62-րդ և (կամ) 202-203-րդ հոդվածների պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Ս-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ըստ էության հայտնեց, որ քրեական գործով ձեռք բերված տվյալները համադրելով՝ գտել է, որ գործով վարույթը ենթակա է կարճման, իսկ Ա.Խաչատրյանին դատավարական մասնակցի կարգավիճակ չի տվել և անհրաժեշտ գործողություններ չի կատարել, քանի որ, իր կարծիքով, դրա հիմքերը չեն եղել, որոշման մեջ դեպքի վերաբերյալ Ա.Խաչատրյանի դիրքորոշման և

դիտավորության վերաբերյալ դատողություններ արել է հիմք ընդունելով վերջինիս բացատրությամբ հայտնած հանգամանքները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Ս-նի անմիջական վերադաս՝ վարչության պետ Կ.Շ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ Ա.Խաչատրյանին դատավարական մասնակցի՝ կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ տալու հիմքերը եղել են, մասնավորապես՝ տուժողի, վկաների ցուցմունքներով:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ս.Ս-ին և Կ.Շ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ N29104118 քրեական գործով վարույթն իրականացրած քննիչ Ս.Ս-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածների 3-րդ մասի, 62-րդ և (կամ) 202-203-րդ հոդվածների պահանջները՝ նկատի ունենալով, որ 10.09.2018թ. քրեական գործը վարույթ ընդունելուց առ 23.10.2018թ-ին վարույթը կարճելը՝ վերջնական որոշման հիմնավոր կայացման համար միջոցներ չի ձեռնարկել Ա.Խաչատրյանին հարցաքննելու ուղղությամբ: Կարգապահական հանձնաժողովը որոշեց Ս.Ս-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. N29104118 քրեական գործով վարույթը 23.10.2018թ-ին կարճելու միջոցով ավարտելուց հետո կամ դրան նախորդող ժամանակահատվածում տուժող Վ.Ալավերդյանին և ենթադրյալ հանցանք կատարած Ա.Խաչատրյանին չի պարզաբանել քրեական գործի նյութերին ծանոթանալու նրանց իրավունքը և որևէ կերպ այդ մասին նրանց չի հայտնել: Արդյունքում՝ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Ս-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց քրեադատավարական օրենքի խախտման հանգամանքը՝ կրկին պատճառաբանելով, որ դա պայմանավորված է եղել աշխատանքային ծանրաբեռնվածությամբ:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Ս-ի անմիջական վերադաս՝ վարչության պետ Կ.Շ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ըստ էության հայտնեց, որ քննիչի կողմից թույլ է տրվել քրեադատավարական օրենքի խախտում:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ս.Ս-ին և Կ.Շա-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ N29104118 քրեական գործով

վարույթն իրականացրած քննիչ Ս.Ս-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջները՝ նկատի ունենալով, որ 23.10.2018թ-ին քրեական գործով վարույթը կարճելու միջոցով ավարտելուց հետո կամ դրան նախորդող ժամանակահատվածում տուժող Վ.Ալավերդյանին և ենթադրյալ հանցանք կատարած Ա.Խաչատրյանին չի պարզաբանել քրեական գործի նյութերին ծանոթանալու նրանց իրավունքը և որևէ կերպ այդ մասին նրանց չի հայտնել: Կարգապահական հանձնաժողովը որոշեց Ս.Ս-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ մասի 2-րդ կետով և 48-50-րդ մասերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. N29104118 քրեական գործով վարույթը 23.10.2018թ-ին կարճելու մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին չուղարկելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Ս-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2. N29104118 քրեական գործով, օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում՝ Ա.Խաչատրյանին հարցաքննելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Ս-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

3. N29104118 քրեական գործով վարույթը 23.10.2018թ-ին կարճելու միջոցով ավարտելուց հետո կամ դրան նախորդող ժամանակահատվածում տուժող Վ.Ալավերդյանին և ենթադրյալ հանցանք կատարած Ա.Խաչատրյանին քրեական գործի նյութերին ծանոթանալու նրանց իրավունքը չպարզաբանելու և նրանց այդ մասին որևէ կերպ չհայտնելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական

վարչության ՀԿԳ քննիչ Ս.Ս-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական
վարչության ավագ քննիչ Ա.Դ-ի վերաբերյալ

28 նոյեմբերի 2018թ. ԿՀՈ 38
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական Ա.Դ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ դատախազության Արագածոտնի մարզի դատախազության դատախազ Վ.Ղ-ի միջնորդությունը՝ վարույթում քննված N29161118 քրեական գործով վարույթն իրականացրած քննիչ Ա.Դ-ի կողմից քրեադատավարական օրենքի առերևույթ խախտում թույլ տալու վերաբերյալ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Ա.Դ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումը ստորև նշված դրվագով.

N29161118 քրեական գործի նախաքննության ընթացքում 22.09.2018թ-ին որոշում է կայացրել Ռ.Օհանյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, սակայն, որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում չի ուղարկել դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին: Արդյունքում՝ ավագ քննիչ Ա.Դ-ի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ա.Դ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց քրեադատավարական օրենքի խախտման հանգամանքը՝ պատճառաբանելով, որ դա պայմանավորված է եղել աշխատանքային ծանրաբեռնվածությամբ, որոշումը կայացրել է շաբաթ օրը և հետագայում՝

աշխատանքային օրերին մոռացել է որոշման պատճենն ուղարկել դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ա.Դ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ N29161118 քրեական գործով վարույթն իրականացրած քննիչ Ա.Դ-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ նկատի ունենալով, որ 22.09.2018թ-ին Ռ.Օհանյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենն օրենքով սահմանված կարգով 24 ժամվա ընթացքում չի ուղարկել դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին: Կարգապահական հանձնաժողովը որոշեց Ա.Դ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ մասի 2-րդ կետով և 48-50-րդ մասերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. N29161118 քրեական գործով 22.09.2018թ-ին Ռ.Օհանյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին օրենքով սահմանված կարգով 24 ժամվա ընթացքում չուղարկելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Դ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական
վարչության Դիլիջանի քննչական բաժնի ավագ քննիչ Է.Կ-ի վերաբերյալ

28 նոյեմբերի 2018թ. ԿՀՈ 39
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնի ավագ քննիչ, երկրորդ դասի խորհրդական Է.Կ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ գլխավոր դատախազի միջնորդությունը՝ թիվ 36153518 քրեական գործով վարույթն իրականացրած ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության մի շարք ծառայողների կողմից քրեադատավարական օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու վերաբերյալ ծառայողական քննություն անցկացնելու մասին:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Է.Կ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. N36153518 քրեական գործը 04.04.2018թ-ին վարույթ ընդունելուց հետո, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություն ժամանակին չի կատարել, մասնավորապես՝ միջնորդություն չի հարուցել դատարան՝ թույլտվություն ստանալու վերծանել, թե Ա.Ղալեչյանի կողմից շահագործված 099-99-90-11 հեռախոսահամարն ինչ մոդելի և գործարանային համարի բջջային հեռախոս /ների/ մեջ է շահագործվել,

այդ բջջային հեռախոսի /ների/ մեջ ինչ այլ բջջային հեռախոսահամարներ են շահագործվել 2017-2018թթ. ընթացքում, ստանալու դրանց ելքային և մուտքային հեռախոսազանգերի վերծանումները, հեռախոսազանգերը սպասարկած ալեհավաք կայանների տեղակայման հասցեները և վերծանումներում առկա բաժանորդային տվյալները, ըստ այդմ՝ չի ստացել վերծանումները և չի զննել դրանք՝ պարզելու քննության համար հետաքրքրություն ներկայացնող մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ դեպքին համապատասխանող ժամանակահատվածում Ա.Ղալեչյանի գտնվելու վայրերը, չի կանչել և հարցաքննել վերջինիս հետ հեռախոսազանգեր կատարած անձանց, չի պարզել վերջիններիս ինքնությունները և հնարավոր առնչակցությունը կատարված ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքին: Արդյունքում՝ քննիչ Է.Կոստանյանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Է.Կ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ մեղադրյալ Ա.Ղալեչյանն իր ցուցմունքներում հայտարարել է, որ անձնական հեռախոսահամար չի ունեցել և խիստ անհրաժեշտության դեպքում օգտվել է մոր հեռախոսահամարից, 2018թ.-ի մարտ ամսից շահագործել է 099-99-90-11 բջջային հեռախոսահամարը, ինչը հաստատվել է նաև նրա մոր և հարևանների ցուցմունքներով, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ հետաքննության մարմնից ստացված պատասխան գրությամբ: Քրեական գործի քննության ավելի ուշ փուլում իր կողմից համապատասխան հարցումներ են ուղարկվել ՀՀ-ում գործող բջջային օպերատորներին, սակայն, որևէ լրացուցիչ տվյալ հնարավոր չի եղել ձեռք բերել:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Է.Կ-ի նախկինում անմիջական վերադաս՝ Տավուշի մարզային քննչական վարչության պետ Ա.Մ-ն ըստ էության տվեց Է.Կ-ի բացատրությանը նույնաբովանդակ բացատրություն՝ հավելելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածով հարուցված քրեական գործով՝ քննչական ենթակայության կարգով, Տավուշի մարզային քննչական վարչությունն իրավասու չէր կատարել նախաքննություն: Հանձնաժողովի այն հարցին, թե այդ պարագայում ինչու են քրեական գործը վարույթ ընդունել և կատարել նախաքննություն, Ա.Մ-ն հիմնավոր պատասխան չտվեց:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Է.Կ-ին և Ա.Մ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Ա.Ղալեչյանի կողմից շահագործված 099-99-90-11 հեռախոսահամարը չվերծանելու դրվագով Է.Կ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Է.Կ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. N36153518 քրեական գործը 04.04.2018թ-ին վարույթ ընդունելուց հետո, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություն ժամանակին չի կատարել, մասնավորապես՝ անհետաձգելի քննչական գործողություն համարվող Ա.Ղալեչյանի անձնագիրը հայտնաբերելու համար վերջինիս հաշվառման և փաստացի բնակության վայրերում խուզարկություն կատարելու մասին միջնորդությունը դատարան հարուցել է 03.05.2018թ-ին, այսինքն՝ շուրջ 30 օր անց, ինչն ողջամտորեն կարող էր հանգեցնել կամ հանգեցրել է ապացույցի կորստի: Քրեական գործ հարուցելուց երկու ամիս անց կրկին խուզարկություն կատարելու միջնորդություն է ներկայացվել դատարան, սակայն կատարված քննչական գործողությունն իր դրական արդյունքը չի տվել: Արդյունքում՝ քննիչ Է.Կ-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Է.Կ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ մինչ Ա.Ղալեչյանի փաստացի բնակության և հաշվառման հասցեներում խուզարկությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդություն դատարան հարուցելը, նրա ՀՀ-ից դուրս գալու և ՀՀ վերադառնալու, անձնագրեր ստանալու հանգամանքների վերաբերյալ համապատասխան հարցումներ է կատարել իրավասու մարմիններին: Միաժամանակ, քննության առարկա մի շարք այլ հանգամանքները պարզելու վերաբերյալ տրվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին հանձնարարական: Նույնիսկ իր կողմից 30 օր անց խուզարկության կատարելը թույլատրելու միջնորդության հարուցումը դատարանի կողմից չի բավարարվել այն պատճառաբանությամբ, որ քննիչի կողմից այլ եղանակով անձնագիրը հայտնաբերելու միջոցները, քան բնակարանի

անձեռնմխելիության իրավունքի սահմանափակումն է, չի ներկայացվել: Սակայն, մեկ ամիս հետո նույն հիմքերով ներկայացված միջնորդությունը բավարարվել է, սակայն անձնագիրը չի հայտնաբերվել:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Է.Կ-ի նախկինում անմիջական վերադաս՝ Տավուշի մարզային քննչական վարչության պետ Ա.Մ-ն ըստ էության տվեց Է.Կ-ի բացատրությանը նույնաբովանդակ բացատրություն՝ կրկին հավելելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածով հարուցված քրեական գործով՝ քննչական ենթակայության կարգով, Տավուշի մարզային քննչական վարչությունն իրավասու չէր կատարել նախաքննություն:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Է.Կ-ին և Ա.Մ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Է.Կ-ն, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում՝ անհետաձգելի քննչական գործողություն՝ Ա.Ղալեչյանի անձնագիրը հայտնաբերելու համար վերջինիս հաշվառման և փաստացի բնակության վայրերում խուզարկություն կատարելու մասին միջնորդությունը հարուցել է ուշացումով՝ շուրջ 30 օր անց, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել կամ հանգեցրել է ապացույցի կորստի: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Է.Կ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը, իսկ հանձնաժողովի նախագահ Ա.Ղամբարյանը հայտնեց, որ կներկայացնի հատուկ կարծիք, որ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողն իրավասու չէր հիշյալ քրեական գործով նախաքննություն կատարել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 28.11.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. N36153518 քրեական գործով Ա.Ղալեչյանի կողմից շահագործված 099-99-90-11 հեռախոսահամարը չվերծանելու դրվագով

քննիչ Է.Կ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 1):

2. N36153518 քրեական Ա.Ղալեչյանի անձնագիրը հայտնաբերելու համար վերջինիս հաշվառման և փաստացի բնակության վայրերում խուզարկություն կատարելու մասին միջնորդությունը ժամանակին չհարուցելու դրվագով քննիչ Է.Կ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 1):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«կոչումի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ միջնորդության քննարկման մասին

13 փետրվարի 2018թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, քննարկելով ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի քննիչ Վ.Ա-ի /գործուղված Լոռու մարզային քննչական վարչություն/ նկատմամբ «կոչումի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի միջնորդությունը, նկատի ունենալով, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննված թիվ 19102717 քրեական գործի նախաքննությամբ հիմնավորվել է, որ քննիչ Վ.Ա-ն կեղծ նշում է կատարել կնոջ Լ.Այվազյանի անձնագրում, այն մասին, որ կինը իբր հաշվառված է Երևան քաղաքի Վարդանանց փողոցի 148-րդ շենքի 13-րդ բնակարանում: ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովի 06.02.2018թ. որոշմամբ հիմնավորվել է քննիչ Վ.Ա-ի արարքում կարգապահական խախտման փաստի առկայությունն ու վերջինիս մեղավորությունը: Մասնավորապես՝ քննիչն իր պարտականությունները կատարել է ոչ պատշաճ՝ անտեսելով՝ «Հանրային ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի պահանջները: Արդյունքում խախտվել է «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով Վ.Ա-ի կողմից կատարված խախտման բնույթն ու դրա հետևանքները, հիմք ընդունելով, որ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 06.02.2018թ. որոշմամբ հիմնավորվել է կարգապահական խախտումների փաստի առկայությունն ու Վ.Այվազյանի մեղավորությունը, ուստի ղեկավարվելով «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2014թ. նոյեմբերի 17-ի թիվ 12-Ա հրամանով սահմանված՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 77-րդ և 81-րդ կետերով՝

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ր Ե Ց

1. ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի քննիչ, արդարադատության կապիտան Վ.Ա-ի նկատմամբ «կոչումի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժի կիրառումը տվյալ իրավիճակում համարել նպատակահարմար (կողմ՝ 5, դեմ՝0).

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«պաշտոնից ազատում» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ միջնորդության քննարկման մասին

14 ապրիլի 2018թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, քննարկելով ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ է.Ղ-ի նկատմամբ «լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի միջնորդությունը, նկատի ունենալով, որ է.Ղ-ի արարքում հիմնավորվել է կարգապահական խախտման փաստի առկայությունն ու կատարված խախտման մեջ վերջինիս մեղավորությունը, մասնավորապես՝ 16.11.2017թ. հարուցված թիվ 90209017 քրեական գործով, նախաքննության ժամկետը լրանալուց 42 օր անց՝ 28.02.2018թ. միջնորդություն է ներկայացրել նախաքննության ժամկետը երկարացնելու մասին: Այդ ժամանակահատվածում առանց նախաքննության ժամկետը երկարացնելու, քրեական գործով կատարել է մի շարք կարևոր դատավարական գործողություններ /կասկածյալի նկատմամբ կիրառել է խափանման միջոց, հարցաքննել որպես կասկածյալ, որոշում է կայացրել հանրային պաշտպան ներգրավելու մասին, անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին և մեղադրանք առաջադրել՝ կատարելով դրանից բխող գործողություններ, որոշում է կայացրել ամբուլատոր դատահոգեբուժական և ռազմաբժշկական համալիր փորձաքննություն նշանակելու մասին և առանձին քննչական հանձնարարություն տվել այլ քննչական ստորաբաժանմանը՝ քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ/, որի պայմաններում կատարված

գործողությունների արդյունքները ճանաչվել են անթույլատրելի: Արդյունքում քննիչի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի՝ 8-րդ կետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով Է.Ղ- կողմից կատարված խախտման բնույթն ու դրա հետևանքները, ՀՀ ՔԿ նախագահի տեղակալ, ԶՔԳՎ պետի և անմիջական վերադասի կողմից ներկայացված բացասական բնութագրերը և հիմք ընդունելով, որ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 14.04.2018թ. որոշմամբ հիմնավորվել է խախտման փաստի առկայությունն ու Է.Ղ-ի մեղավորությունը, ուստի ղեկավարվելով «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2014թ. նոյեմբերի 17-ի թիվ 12-Ա հրամանով սահմանված՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 77-րդ և 30-րդ կետերով՝

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ր Ե Ց

1. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ Է.Ղ-ի նկատմամբ «պաշտոնից ազատում» կարգապահական տույժի կիրառումը տվյալ իրավիճակում համարել նպատակահարմար (կողմ՝ 5, դեմ՝ 0).

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ միջնորդության քննարկման մասին

22 հոկտեմբերի 2018թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, քննարկելով ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ա.Գ-ի նկատմամբ «պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի միջնորդությունը, նկատի ունենալով, որ Ա.Գ-ի արարքում հիմնավորվել է կարգապահական խախտման փաստի առկայությունն ու կատարված խախտման մեջ վերջինիս մեղավորությունը, մասնավորապես՝ Ա.Գ-ի գործողությունների հետևանքով խախտվել է անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության, ինչպես նաև՝ ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածով նախատեսված՝ անձի հաղորդակցության ազատության և գաղտնիության, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունքները և չի պահպանել «Քննչական կոմիտեի մասին» 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով Ա.Գ-ի կողմից կատարված խախտման բնույթն ու դրա հետևանքները, և հիմք ընդունելով, որ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 19.10.2017թ. որոշմամբ հիմնավորվել է խախտման փաստի առկայությունն ու Ա.Գ-ի մեղավորությունը, ուստի ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին 54-55-րդ և 58-րդ մասերով,

ԵԶՐԱԿԱՑՐԵՑ

1. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ա.Գ-ի նկատմամբ տփալ իրավիճակում նպատակահարմար է համարել «պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժի կիրառումը (կողմ՝ 5, դեմ՝ 0).

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ միջնորդության քննարկման մասին

07 նոյեմբերի 2018թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, քննարկելով ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ, երկրորդ դասի խորհրդական Ա.Օ-ի (գործուղված Մասիսի քննչական բաժին) նկատմամբ «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ կիրառելու հնարավորության վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 07.11.2018թ. միջնորդությունը, նկատի ունենալով, որ Ա.Օ-ի արարքում հիմնավորվել է կարգապահական խախտման փաստն ու կատարված խախտումների մեջ վերջինիս մեղավորությունը: Քննիչ Ա.Օ-ի կողմից թույլ տված արարքները կատարվել են քրեադատավարական կոպիտ խախտումներով, որոնք հանգեցրել են նաև մարդու իրավունքների խախտման, մի շարք խախտումներ եղել են համակարգային բնույթ, դրանք կրկնվել են տարբեր քրեական գործերով:

Քննիչ Ս.Օ-ն նախկինում ենթարկվել է տույժերի՝ 24.09.2018թ. ՀՀ քննչական կոմիտեի նախագահի թիվ 674-Ա հրամանով Ա.Օ-ի նկատմամբ կիրառվել է «զգուշացում» կարգապահական տույժը, սակայն, անհրաժեշտ հետևություններ չի արել:

Ծառայության ընթացքում բնութագրվում է բացասական, մասնավորապես՝ միայն 2018 թվականի ընթացքում 2 քրեական գործով վարույթը կարճելու և 1 քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումները վերացվել են դատավարական ղեկավարում իրականացրած դատախազի կողմից, 6 քրեական գործով դատախազի կողմից քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացվել է, որից 4-ը ընթացքում գտնվող քրեական գործերով, 1-ով՝ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելուց, իսկ 1- ով քրեական գործով վարույթը կասեցնելու

մասին որոշումը դատախազի կողմից վերացվելուց հետո: Քննիչ Ա.Օ-ի նկատմամբ 8 անգամ կատարվել են ծառայողական քննություններ, որոշ դեպքերում նրա կողմից կատարված խախտումների վերաբերյալ անցկացվել են օպերատիվ խորհրդակցություններ, նրա ուշադրությանն է արժանացվել խախտումները՝ հետագայում այդպիսիք թույլ չտալու համար, սակայն, Ա.Օ-ն դրանց պատշաճ ուշադրություն չի դարձրել և շարունակել է տարբեր բնույթի խախտումներ թույլ տալ իր վարույթում քննվող քրեական գործերով:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով Ա.Օ-ի կողմից կատարված խախտումների բնույթն ու հետևանքները, և հիմք ընդունելով, որ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 07.11.2018թ. որոշմամբ հիմնավորվել է խախտման փաստն ու Ա.Օ-ի մեղավորությունը, ուստի, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին 54-55-րդ և 59-րդ մասերով,

ԵԶՐԱԿԱՑՐԵՑ

1. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ա.Օ-ի (գործուղված Մասիսի քննչական բաժին) նկատմամբ «պաշտոնից ազատում» կարգապահական տույժի կիրառումը տվյալ իրավիճակում համարել նպատակահարմար (կողմ՝ 5, դեմ՝0).

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

միջնորդությունը ներկայացնելու մասին

12 սեպտեմբերի 2018թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով Արդարադատության ակադեմիայի ռեկտոր Ս.Առաքելյանի՝ Ա.Մ-ին քննիչների թեկնածությունների ցուցակից հանելու վերաբերյալ, ՀՀ քննչական կոմիտեի նախագահին միջնորդություն ներկայացնելու գրությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Ունկնդիր Ա.Մ-ն առարկայական կուրսերի գնահատման արդյունքում, սահմանված նվազագույն անցողիկ միավորից (ութ միավոր) ցածր ստացած՝ «Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր», «ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր» առարկայական կուրսերի միասնական քննության արդյունքում ստացել է 0 (զրո) միավոր, իսկ «Քրեական իրավունքի արդի հարցերը» առարկայական կուրսի քննության արդյունքում ստացած 2 (երկու) միավորը, որը բողոքարկման արդյունքում թողնվել է անփոփոխ:

Հանձնաժողովը պարզեց, որ համաձայն «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների քննությունների կազմակերպման և անցկացման կարգ»-ի 3.1.19 կետի՝ երկու կամ ավելի քննության արդյունքում, սահմանված նվազագույն անցողիկ, միավորից ցածր միավոր ստացած ունկնդիրը քննությունների վերահանձման իրավունք չունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1.2 մասի 3-րդ կետով և 2.1 մասով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դիմել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին՝ Ա.Մ-ին քննիչների թեկնածությունների ցուցակից հանելու միջնորդությամբ:

2. Սույն որոշման օրինակն ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

միջնորդություն ներկայացնելու մասին

12 սեպտեմբերի 2018թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով Արդարադատության ակադեմիայի ռեկտոր Ս.Առաքելյանի՝ ունկնդիր Ա.Հ-ին քննիչների թեկնածությունների ցուցակից հանելու համար, ՀՀ քննչական կոմիտեի նախագահին միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ գրությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Ունկնդիր Ա.Հ-ի առարկայական կուրսերի գնահատման արդյունքում, սահմանված նվազագույն անցողիկ միավորից (ութ միավոր) ցածր ստացած՝ «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը» առարկայական կուրսի քննության արդյունքում ստացած 3 (երեք) միավորը և «Ապացույցների թույլատրելիությունը ՀՀ քրեական դատավարությունում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում», «Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը», «Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը», «Մինչդատական կալանքը և քննության հարակից հիմնախնդիրները», «Քրեական գործերի քննության ընդհանուր մեթոդաբանությունը» առարկայական կուրսերի միասնական քննության արդյունքում ստացած 3 (երեք) միավոր բողոքարկման արդյունքում մնացել է անփոփոխ:

Ա.Հ-ն Հանձնաժողովին նիստի ընթացքում հայտնեց, որ «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը» առարկայական կուրսի քննության վերահանձման բողոքարկման դիմումի մեջ, տեղյակ չլինելով քննությունների արդյունքների բողոքարկման վերաբերյալ գործող կարգին՝ նշել է իր անունը և ազգանունը, որի պատճառով բողոքարկման հանձնաժողովը վերջինիս գրավոր աշխատանքը քննարկման առարկա չի դարձրել:

Արդարադատության ակադեմիայի ներկայացուցիչը Հանձնաժողովին ներկայացրեց՝ դեռևս 12.04.2018թ. էլեկտրոնային ֆաստի միջոցով Ա.Հունանյանին վերոնշյալ կարգի իրազեկումը հավաստող փաստաթղթեր,

որով ապացուցվում է, որ Ա. Հունանյանի համար նշված ակտերը եղել են հասանելի:

Հանձնաժողովը պարզեց, որ համաձայն «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների քննությունների կազմակերպման և անցկացման կարգ»-ի 5.3 կետի՝ բողոքարկման դեպքում գրավոր աշխատանքը, բողոքը բողոքարկման հանձնաժողովին տրամադրվում են անանուն, իսկ 3.1.19 կետի՝ երկու կամ ավելի քննության արդյունքում, կարգով սահմանված նվազագույն անցողիկ միավորից ցածր միավոր ստացած ունկնդիրը քննությունների վերահանձման իրավունք չունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1.2-մասի 3-րդ կետով և 2.1 մասով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դիմել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին՝ Ա.Հ-ին քննիչների թեկնածությունների ցուցակից հանելու միջնորդությամբ:

2. Սույն որոշման օրինակն ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

միջնորդություն ներկայացնելու մասին

12 սեպտեմբերի 2018թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով Արդարադատության ակադեմիայի ռեկտոր Ս.Առաքելյանի՝ ունկնդիր Ե.Կ-ին քննիչների թեկնածությունների ցուցակից հանելու համար, ՀՀ քննչական կոմիտեի նախագահին միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ գրությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Ունկնդիր Ե.Կ-ի առարկայական կուրսերի գնահատման արդյունքում, սահմանված նվազագույն անցողիկ միավորից (ութ միավոր) ցածր ստացած՝ «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը» առարկայական կուրսի քննության արդյունքում ստացած 3 (երեք) միավորը՝ բողոքարկման արդյունքում մնացել է անփոփոխ, «Ապացույցների թույլատրելիությունը ՀՀ քրեական դատավարությունում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում», «Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը», «Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը», «Մինչդատական կալանքը և քննության հարակից հիմնախնդիրները», «Քրեական գործերի քննության ընդհանուր մեթոդաբանությունը» առարկայական կուրսերի միասնական քննության արդյունքում ստացել է 0 (զրո) միավոր, որը չի բողոքարկվել, իսկ «Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա» առարկայական կուրսի քննությանը չի ներկայացել, որի արդյունքում ստացել է 0 (զրո) միավոր:

Հանձնաժողովը պարզեց, որ համաձայն «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների քննությունների կազմակերպման և անցկացման կարգ»-ի 3.1.19 կետի՝ երկու կամ ավելի քննության արդյունքում, կարգով սահմանված նվազագույն

անցողիկ միավորից ցածր միավոր ստացած ունկնդիրը՝ քննությունների վերահանձման իրավունք չունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1.2-մասի 3-րդ կետով և 2.1 մասով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դիմել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին՝ Ե.Կ-ին քննիչների թեկնածությունների ցուցակից հանելու միջնորդությամբ:

2. Սույն որոշման օրինակն ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

2 0 1 8

Հատոր 4

Ժողովածուի խմբագիր՝
Հանձնաժողովի քարտուղար Ջուլիետտա Գևորգյան

Տպագրությունը՝օֆսեթ

Թուղթ օֆսեթ 80 գր., չափսը՝ 60x80,1/16
Ծավալը՝ 10 հատ. մամուլ
Տպաքանակը՝ 500 օրինակ:
Տպագրվել է ԱՁ «Արա Մնացականյան» տպագրատանը: